



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6961

91

G-16



13158

1420

№ 1099. *[Signature]*

ՆԳԻՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԳԻՆԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԻՆ ԱՅՐԱՍԱՑ ԽՅ

ԵՒ

ԱՆՈՐ ԿՈՒՍՈՒՆԱԼՈՒԹՅԱՆ ՆՆՐՔԻ ԳՑ ԽՈՂ

ՄԷԿ ՔԱՆԻ ԳԼԽՆՈՐ ՔԱՂԱՅԱՑ

16.195

ԱՆՔԱՏԱՆԻՐԵԱՑ

ՊՕՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱՐԱՆԻՆ

Դ. ԳՈՐԾ ԿԵՂԻՆԱԿԻՆ



91

- 16


Կ. ՊՕՂՈՍ

ԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

( 1877 )

91  
4-16

11.8



ԱՌ

ՎՍԵՄ. ՅԱՆՈՒԷ ԷՊԷՆՏԻ

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՁՕՆ

ԵՐԱՄՏԱԳԻՏԱԿԱՆ

ՄԵԾԱՆՈՒՆ ՏԷՐ

Ձեր բարերարութեանց շարքին վրայ նոր քիւ մ'այ աւելցուց' Սեբաստիոյ եւ անոր շրջակայ արուարձանաց մեջ գտնուած հնութեանց Հայաստանի նախնի փառաց եւ նշխարաց տեղեկագիրն, որուն ի լոյս ընծայուելուն՝ յօժարակամ սատարեցիր: Պատիւ մ'է ինձ այն դոյզն եւ աննշան վաստակն ձեր բարերար անուամբն նուիրագործելով մատուցանել Ազգային բանասիրաց, եւ այս մեծ եւ աննխազ վարձ մ'է ինձ, քան թէ փոխարինութիւն սքրտաբուխ շնորհացդ:

ՊՕՂՈՍ Վ. ՆԱԹԱՆԵԱՆ

2623  
2004



Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ  
ԵԼՆԻ-ԳԱՐՈՒ ԳՈՒՄԱԿ ՎՈՂՈՅ ՔԻՒ 200

Ն Ե Ր Ա Յ Ո Ւ Յ Ե Ի Ն

Ազգային կեդրոնական Պատկառելի Խառն  
 Ժողովոյ որոշմամբ, և Բարձր Ներսէս Ս. Պատրիարք  
 Հօր կոնգակաւ՝ Տիվրիկի Ազգայնաց մէջ ծագած  
 խռովութիւնը քննելու և առ վարչութիւնն տեղե-  
 կագրելու յիացօր իշխանութեամբ, 1875 Սեպտեմ-  
 անոյ վերջերը Կ. Պօլսէն մեկնելով նախ հասայ ի  
 Սերաստիա. ուր Ս. Պատրիարք Հօր ինձ տուած  
 յանձնագիրը տեղոյն Բարձր. Կուսակալին ներ-  
 կայելէն և Նորին վսեմութենէն առ Գայմազամ  
 Տիվրիկու կարեօր հրամանագրերը առնելէս յե-  
 տոյ՝ ուղեւորեցայ ի Տիվրիկ յիմ պաշտօնատեղին ։  
 Հոն պաշտօնիս պահանջման համեմատ ժամանակ  
 մը կեցայ. տեղոյն Ազգայնաց մէջ ծագած խռ-  
 վութեանց վերաբերեալ քննութիւնները ըրի ։ Եւ  
 որպէս զի դիւրութեամբ կարենամ իմ պաշտամանս  
 նկատմամբ Ազգ. Պատրիարքարանի հետ բանակ-  
 ցիլ, և քննութեանցս արդիւնքը հաղորդել, Դեկ-  
 տեմբեր ամսոյ սկիզբը դարձայ ի Սերաստիա՝ ճա-  
 նապարհի վրայ ձմրան սաստկութենէն Գարապէլ  
 անուն լերանը մէջ մահարեր վտանդ մը անցունե-  
 լով, յորմէ հազիւ զերծայ ողորմութեամբն Առ-  
 տուծոյ ։

Պաշտօնս ի գլուխ հանելու նպատակաւ չորս ամսոյ չափ Սեբաստիոյ Ս. Նշան վանքը սպասելու ատենս՝ ուղեցի միանդամայն չորրորդ ծառայութիւն մ'ալ ընել ազնիւ Աղգիս՝ լի ու լի տեղեկագիր մ'ալ պատրաստելով երբեմն Հայոց Սեբաստիոյ թագաւորանիստ գաղաքի Աղգայնոց վրայ, նախ թէ՛ Քաղաքին և շրջակայից բնակիչ Հայերը Հայաստանի ո՛ր մասէն, և ո՛րչափ ատենէ և ի՛նչու համար գաղթած են հոն, և նկարագրելով ընդ նմին քաղաքին դիրքը, բակչաց թիւը, բնաւորութիւնը, սովորութիւնները, ընկերական կեանքը, նիւթական և բարոյական վիճակը և ուրիշ Աղգաց հետ ունեցած յարաբերութիւնները. և նոյն վիճակին մէջ գտնուած վանօրէից օրքանութիւնը, և բարեկարգութիւնը և ըն և ըն ։

Ահա սոյն փոքրիկ տեղեկագիրն ըստ չափու կարողութեան իմոյ սրբող և աշխարհիկ լեզուաւ ի լոյս կընծայեմ, և միանգամայն կը խնդրեմ բարեսէր Աղգայնիներէ, որ բաց ի յիշեալ քաղաքի նըկատմամբ սուած տեղեկութիւններէս՝ վիճակին թեմոց վրայօք լիովին տեղեկութիւն չակնկալեն ինձմէ այս անգամ, որովհետև կարողութիւնս չէր ներեր՝ նոյն թեմերուն այց ելանել ։ Միայն կընամ թեմերուն թիւը և իւրաքանչիւրին իրարմէ ունեցած հեռաւորութիւններն հաղորդել մեր ազնիւ

ընթերցողաց սոյն տետրովս՝ և կը յուսամ որ սոյն չորրորդ երկասիրութիւնս ալ սիրելի Աղգիս քաջալերութեան և ներողամտութեան կարժանանայ ըստ առաջնոցն ։

Իբրև մասնաւոր ծանօթութիւն կը փութամ՝ յաւելցնել և զայս, թէ մինչև հիմայ ուր որ այցելութեան պաշտօնով հանդիպեցայ Աղգայնոց՝ տեսայ, որ բոլոր անոնց առաջին գաղթականութիւնը մեր Հայրենեաց Անի մայրաքաղաքէն և եթ կըսերի ։ Աղգային պատմութիւնը և մասնաւորաց պատմական գրուածք միահամուռ՝ մեր մտքերն յիշեալ երբեմն բազմահայ քաղաքը կառաջնորդեն՝ Աղգիս ի սփիւռս ցրուելուն պատճառը անոր աւերման արկածից մէջ գտնելու ։

Ինչ զարմանալի համադիպութիւն՝ մարդկային Աղգին առաջին ցրումը Հայաստանի առաջին նահապետներէն եղաւ, այժմ ալ Հայ ազգին ցրումը նոյնպէս Հայաստանէն սկսաւ ։

Ասոնք ստոյգ վկայութիւններ են անմիաբանութեան Աղգին մերոյ, որ իրեն բուն հայրենիքը թողած՝ ցրուեալ կը բնակի երկրի ամեն կողմերը օտար երկիրներու մէջ, ինչպէս որ այս անգամ ապացուցի ։ Պօլսէն ի Սամսուն ծովու ճանապարհաւ, անտի ցամաքի ճանապարհաւ յՍմասխա, յԵւզոկիա և ի Սեբաստիա — որ կարաւանաւ ութն օր

Ը

կը տեսէ, իսկ թղթատարով երեք օր — Մերաստիակն ի Տիւրքիկ — երեք օր ձիով, — բովանդակ այս ճանապարհի վրայ բազմահայ քաղաքներ են, յորս փոքր ի շատէ տեղեկացանք, որ բնակիչ Հայերն ժամանակաւ Անիէն և վասպուրականէն դուրս թափած են հոն բնակութիւն հաստատելու՝ իբրև իրենց հայրենիք համարելով այն տեղերը: Թէպէտ շատ փոտիաքեցայ՝ որ յիշեալ հանդիպած քաղաքներուս նկատմամբ ալ մանրամասն և ընդարձակ տեղեկութիւններ հաղորդեմ սիրելի Ազգայնոցս, բայց պաշտօնս ստիպողական ըլլալուն համար՝ ժամանակիս ներածին չափ միայն կրցի վեր ի վերջ ծանօթութիւն տալ անոնց վրայօք:

Մնամ անճնուէր Ազգիս

Խ. Ծ.

ՊԵՂՁՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԹԱՆԱՆ



# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

Ս.Ռ.ԱՋԵՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ

Ա.

ԱՍՏՂԻԿ ԼԵՈՒ



ՍՐԱՍՏԻՈՅԷՆ ի Մերաստիակ երկու ճանապարհ կան, որոց մին դէպ ի Արևելեան Հարաւ ամբան ճանապարհ կըսուի, իսկ երկրորդը դէպ ի Արևմուտս ձմբան ճանապարհ՝ Եհնի խան ըստած ի Ղևանի վրայով: Առաջին ճամբուն վրայ Ասադիկ անուն նշանաւոր լեռ մը կայ, որ ըստ Տաճկաց Երչրըլ Կոչը կըսուի. ասի Մերաստիայ Հիւսիսային կողմ կիյնայ՝ ինը ժամաւ հեռի ի քաղաքէն: Այս լեռը դէպ ի Արևելեան Հարաւ դաշտի մէջ ահագին բարձրութիւն ունի, անանկ որ դադաթը ամենապարզ օդի ատեն կերևի: Այս լեռան ստորոտը Բինաուու ըլլայ, շէնքերուս վըստակներովան, որովք կը կարծուի թէ երբեմն Վայնատարած քաղաք մի եղած ըլլայ այն իր արուարձաններովը մեկտեղ: Աւանդութեամբ կը պատմեն, թէ Սենեքերիմ Հայոց թագաւորի կրտսեր որդին Ասովմ իւր եղբորը յաջորդած

ժամանակ երբ կիմանայ որ Պարսից չահը անդուծ  
Տուղրիլ քաղաքներ կործանելով Սերաստիա կար-  
չաւէ, անմիջապէս ունեցած թագաւորական բոլոր  
դանձերն և Հայրապետական զգեստները ի միասին  
առնելով յիշեալ ամուր լեռան ստորոտը պատըս-  
պարուած և իր հետը տարածներն ալ հոն դեսմի  
ներքև թողած ըլլայ :

Նոյն լեռան կից նոյնպէս դէպ ի Հարաւ Տաճ-  
կաքնակ Խաղըն ըսուած գիւղը կայ՝ որ ճանապար-  
հորդաց իջևան է : Ասկից ալ դէպ Հարաւ երեք  
ժամու չափ հեռի Մարագում ըսուած լեռան գօտի  
մը կայ, որ թեպէտ աչ այնչափ բարձր, բայց խիստ  
վտանգաւոր ըլլալուն համար անուանի է : Սոյն լե-  
ռան գագաթը դաշտային է, և լայնութիւնը Հիւ-  
սիսէն ի Հարաւ վեց կամ եօթը ժամ կը տեէ ձիով :  
Այս երկար գօտին Սերաստիոյ Հիւսիսային կողմը  
իր երկարութեամբը պատած է :

Բ.

### ՄԱՐԱԳՈՒՄ ԼԵՈՒ

Մարագում անունը Մայրագում բառին աղա-  
ւաղեալն է՝ զոր ոմանք ալ Ձերեֆի- (1) կըսեն :  
Իբրևոնիք կը պատմեն թէ ատենօք սոյն լեռան վրայ

և իւր շուրջը բաղնաթիւ մեծամեծ ծառեր կան  
եղեր, և մտակայ գիւղացիք իրենց նախիրը ամեն  
տարի դարունէն մինչև ամառ սովորաբար հոն կա-  
լածեն և կը պատսպարուին եղեր, բայց ժամանակ  
անցնելով հետզհետէ նոյն ծառերը կտրտելով բո-  
լորովին անապատ դարձեր և միայն չոր լեռ մը  
մնացած է այժմ : Ամառը աւաղակաց որջ է այդ  
լեռը. իսկ ձմեռը ամենասաստիկ ցրտուն պատ-  
ճառաւ ճանապարհորդք մեծ նեղութիւն կը կրեն,  
ինչպէս որ սառած մարդիկներու գերեզմաններ  
չատ կան, մինչև իսկ շուրջեն գտներ խմելու,  
միայն քայքայուած պանդոկ մը կայ հոն : Սակայն  
նոյն լեռան Արևմտեան ստորոտը նոյն տխուր կեր-  
պարանքը չունի, այլ դաշտ մ'է կարկաչահոտ և  
յստակ առուակներով և մարդերով զարդարուած,  
դասանաց վայր մը որ ըստ Տաճկաց Իմր կանուա-  
նի, հոս է Սերաստիոյ քաղաքացւոց իկ. Պոլիս  
պանդխտելու բաժանման որոշեալ տեղին, որ մինչև  
ի քաղաք տեղ տեղ ուռիներով պատած է : Հոս է  
նոյնպէս կ. Պոլիսէն եկող քաղաքացիները դիմաւորե-  
լու սահմանատեղին, հոս ընտանիք և բարեկամք  
կերթեւեկեն կուտեն և կլամեն :

(1) Տաճիկք՝ Գլրդ բունար կանուանեն զայն :

Գ.

### ՊԱՅՐԱՄ ԲԱՇԱ

Ըստ աւանդութեան՝ յիշեալ վայրին Գեմեր ըսուելուն բուն պատճառը այն է, թէ ժամանակաւ « Պայրամ բաշայ » անունով կուսակալին մէկը յիշեալ գրօսավայրի մէջ քարուկէր կամար մը շինել տալէ յետոյ՝ մէկ քառորդ ժամու չափ հեռու ծառոց մէջէ հոսող ախորժահամ ջուրը այն կամարին տակէն անցնելով, քաղաք բերեր և երեւելի ճաճկաց տուները բաժներ է, Հայոց համար դոյզն ինչ բան թողլով, կամարը քաղաքէն մէկ ժամ հեռու է, և ջուրն ալ նոյն կուսակալի անուամբ Պէհրէ՛՛ Խաշ կըսուի:

Գ.

### ԴԱԻՌԱՅ ԳԻՒՂ

Նոյն կամարն դէպի Հարաւ քսան վայրկեան հեռու Եւզոնիոյ կամուրջ ըսուած քարուկէր կամարջէն անդին նեղուց մը կայ երկար ու անցուկ ըր շատ մարդաստանութիւններ կըլլան եղեր երբեմն որ ըստ ճաճկաց Դաւուայ պօղալի կըսուի, սոյն նեղուցի մէջ Հայք Դաւուայ անուն դիւղ մը

մնն որ նոյն քարայրները երբեմն կրօնաւոր միայնակեցաց ճգնութեան տեղի եղած ըլլան, ուր կը բնակին եղեր յերեկ ատեն, և առաւօտ ու երեկոյ յիշեալ անապատ վանուց մէջ:

Ե.

### ԱՆԱՊԱՏ ՎԱՆՔԸ

Այս անապատ վանքը՝ զոր մէկ երկու անգամ յիշեցինք, վերոյիշեալ կետերուն մէջ՝ դէպի Սրբւելեան Հարաւ բլուրի մը ստորտը հիմնուած է, որոյ հիմնարկութեան թուականը գտնելու համար բաւական աշխատեցայ, բայց անհնար եղաւ, որովհետեւ անյայտացած էր. միայն երկիցս նորոգութեան յիշատակարանը տաճարի դրան ճակատը քարի մը վրայ գրուած գտայ, որ է այս.

« Ողորմութեամբն Աստուծոյ վերստին նորոգեցաւ ձեռամբ Ակնեցի Առաքել վարդապետի « Ս. Նշանու կաթողիկէն, Ս. Աստուածածնայ, Ս. « Կարապետի տաճարքն հանդերձ ժամաններով և « պարսպով, հանդերձ խցներով օգնութեամբ կա- « մրկապցի Թեւեքիլեան Տ. Մ. Յարութիւն 1176 : « Դարձեալ վերստին նորոգեցաւ ձեռամբ նոյն Ա- « ռաքել վարդապետի Ս. Անապատի Եկեղեցին և

« շրջապատ պարիսպը հանդերձ խցներով Ահնեցի  
 « Մ. Սեդրոսեան, Ապուշեփցի Մ. Յարութիւն՝ որ է  
 « Յովհան զատէ և Կամրկապոյի Մ. Աստուածա-  
 « տուրին և Մարկոս աղաին թուին Հայոց 1191  
 « ընթերցողք Աստուած ողորմի » :

Ես արդէն իբրև միաբան Ս. Նշան վանուց Սե-  
 բաստիոյ՝ ասկից քսան ասարի յառաջ դպրութեանս  
 ժամանակ մերթ ընդ մերթ նոյն Անապատ վանքը  
 երթալս կը յիշեմ. ուստի և այն աստեղնուան ունե-  
 ցած տեղեկութիւնս հարկ կը համարիմ համառո-  
 տակի պատմել հոս : Այդ շէնքը միջակ դիրքով  
 քարտէկիր գաւիթ մը ունէր, յորում Արևելեան  
 գին տաճարի դրան առաջ չորս աստիճանաւ քարէ  
 սանդուղ մը կար՝ որ դէպ ի վեր տաճարին դուռը  
 կը հանէր, ուրկից ներս ի հնուց մնացած հոյակապ  
 շէնք մը կը բարձրանար՝ իր հնութեանը նայելով  
 քանի մը հարիւր տարուան գործ : Եթէ աւան-  
 դութիւնը նշանակել թերութիւն մը չէ՝ կրնն թէ  
 Ս. Թադէոս առաքելոյն շինած մատուռներէն մին  
 ըլլայ այն, թէ և ստուգութիւնը երաշխաւորեալ չէ :  
 Տաճարին մէջ միայն Աւագ խորան մը կար, և ա-  
 ռաւօտ երեկոյ Գաւուայ դիւղէն քահանայ մը գալով  
 հոն ժամերդութիւն կրնէր : Բայց այս անգամ աւե-  
 րակ միայն տեսայ, վասն զի Սեբաստիոյ Գեր. Առաջ-  
 նորդը հրաման էր ըրած յիշեալ ներքին շէնքը՝ որ

խարխլած էր, ի հիմանէ քակել, որպէս զի վասնդ  
 չպատահի : Ս. Հայրը միտք ունի զայն նորոգ կա-  
 ուուցանելու :

Պատերուն հետ հիւսուած շատ մը հին քարէ  
 խաչեր գտնուած են, որոց մին կարմիր դոյն մը  
 ստացած՝ հինգ թիղ երկայնութիւն, երեք թիղ  
 լայնութիւն, և իբր հինգ մաս ալ թանձրութիւն  
 ունէր. խաչին կեդրոնն ալ ահադին բեւեռ մը  
 գամուած կար : Երկրորդին վրայ նշանադրեր կային,  
 որոյ օրինակն յաջորդ երեսին մէջ զետեղած  
 ենք :

Անապատ վանքը՝ որ միջակ մեծութիւն ունի,  
 պարսպապատ է, և երկու դուռ ունի, Արևելեան  
 որ միշտ փակ է և փոքրիկ, Հարաւային՝ ուրկից  
 կ'երթեւեկեն : Վանքին մէջ տասն վեց փայտաշէն  
 խցեր կան և երեք աղբիւր՝ որոցմէ միոյն ջուրը  
 գետնէն կը բղխի և անուշահամ են : Ունի մէկ  
 տնտեսատուն և մէկ ակտու, և միջակ մեծութեամբ  
 որմնապատ պարտէզ մի յԱրևմուտս կոյս որուն մէջ  
 ճէհրի և այլ ծառեր կան : Ամէն ատեն ուխտաւորք պա-  
 կաս չեն, մանաւանդ ամառը՝ ուր օդափոխութեան  
 կ'երթան մարդիկ ամենուստեք օդաւետ և ջրարբի  
 ըլլալուն համար. հիւանդներ ալ կը ասնին ի բժշ-  
 կութիւն : Անապատը հովտի մը մէջ է՝ շուրջ պատ-  
 եալ կարկաճասահ առուակներէ՝ որք Գաւուայ դիւ-

2623  
 47  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
 ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
 ՀԱՍՈՒ ԱՊՐ 009

Ն Լ Է Ի  
 Ն Ե Ր Թ  
 Մ Բ Լ  
 Լ Յ

դէն բղխելով ծառոց մէջէն կը սողոսկին կանցնին դէպ ի քաղաք ամառ և ձմեռ : Եղած են Սերաստիոյ վիճակին Հայաշատ ժամանակին առաջնորդներ, որ այս վանքը նստած են զուարճալի դրիցն համար, և զորս ապա պիտի յիշեմ յականէ յանուանէ :

Երեսուն տարի յառաջ բաւական հարստութիւն ալ ունեցեր է նոյն անապատի վանքը, և հանդաօցեալ Ս. Գտէրեան Յովսէփ աղայի առատածեռնութիւնները այս վանուց համար, որք ձեռքէ ձեռք անցնելով կորսուէր են : Այժմ Ս. Նշան վանուց տեսչութեան ներքև կը կառավարուի աղքատ վիճակի մէջ, ո՛չ նախիր ունի և ո՛չ արտ, ուխտաւորներէ գոյսցած հասոյթը՝ որ տարին չորս կամ հինգ հազար դահեկան կըլլայ միջակ հաշուով, մէկ քանի բանիբուն անձերէ բաղկացեալ Հոգարարձութեան մը ձեռք կը յանձնուի, որ այդ գումարով վանուց պէտքերը կը տնտեսէ, և հաշիւը տեղւոյն Առաջնորդին կուտայ՝ ծախքը Ս. Նշան վանուց դանձէն հոգարով :

Վանուց կահ կարասին կը բաղկանայ հարիւր վաթսուն քաշ պղինձեղենէ և քանի մը անկողիններէ : Միաբան կամ պաշտօնեայ վարդապետ չունի իր մէջ, միայն տիրացու Յովհաննէս անուն ձերունի անձ մի կայ հոն, որուն յանձնուած է վանքի պահ :

պանութիւնը , և եթէ ուխտաւոր մը Ս. Պատարագ ընել տալ ուղէ , Դաւուայ գիւղէն Քահանայ մը կը կոչեն , սոյն վանքին մէջ տնտես մի և մէկ դըռնապան կայ :

Մնադատէն հինգ-վեց վայրկեան հեռու դէպ ի Հարաւ այն խորին մէջ Դաւուայ գիւղի գերեզմանատունը կայ բարձր գերբով , որոյ մէջ կանգնեալ վեց քարէ խաչ ի հնուց մնացած էին և գրուածներ ունէին , որք եղծուած ըլլալով չի կարգացուցան : Եպիսկոպոսաց և վարդապետաց գերեզմաններ ալ կը գտնուէին հոն՝ որք թերեւս միանձանց վերաբերէին : Գերեզմանատնէն դարձեալ դէպ ի Հարաւ քանի մը քայլ յայնկոյս հովտին վախճանն է , կիրճ մը՝ զոր Տաճիկք « Պօղազ քէսէն » կանուանեն : Հոն ջրաղաց մ'ալ կայ ի պէտս գիւղացւոց Յարևմտեան կոյս :

**2.**

**Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔԸ**

Ս. Նշան վանքը յիշեալ անապատ վանքէն քառորդ ժամու չափ հեռու դէպ յԱրևելք դաշտալին բարձր գերբի մը վրայ հիմնուած է :

Թուականէս 46 տարի յառաջ Սերաստիոյ Առաջնորդական պաշտօնը վարող հոգեւոյս Տ. Յով-

հաննէս Արքեպիսկոպոս , որոյ անձնուէր հովութեան նկատմամբ գեռ կենդանի ծերուկ Հայեր մեծ գովեստ և օրհնութիւն կը կարդան՝ Տաճկաց բարբարոսութեան ձեռքէն հալածումն կրող իւր հօտը այնպիսի փափուկ ժամանակի մը մէջ անվնաս պահպանելուն և կառավարելուն համար , ըաց ի ուրիշ գրաւոր աշխատութեանց՝ զոր ես չը տեսայ , Ուրհայեցւոց և Մաղխտորոսի և այլոց պատմագրաց ընտիր պատմութիւններէն քաղած պատմութիւն մ'ունի երկասիրած 830 տարուան որ ձեռագիր է , և մինչև իւր օրը կը հասնի : Այս պատմութեան մէջ մի ըստ միովէ նշանակուած են , թէ ո՞վ է այդ Ս. Նշան վանուց արժանայիշատակ հիմնադիրը . . . թէ ի՞նչ պատճառաւ Հայոց Սենեքերիմ բարեպաշտ արքայն Վասպուրական աշխարհէն ի Սերաստիա դաղթեց , քանի՞ հազար ընտանեօք եկաւ , նորա իշխանութեան սահմանը մինչև ո՞ր կը տարածուէր , թէ ինչո՞ւ Ս. Նշան անուանեցաւ այդ վանքը , քանի՞ տարի թագաւորեց Սենեքերիմ , ե՞րբ և ի՞նչպէս վախճանեցաւ , թէ իր ըրած կտակին համեմատ իւր մարմինը և Ս. Նշանի մեծ մասը նորէն Վասպուրական փոխադրուեցաւ , թէ բարեպաշտ արքային մարմինը և Ս. Նշանի այդ մասը Վարդապայ վանուց մէջ ամփոփեցաւ իր որդւոց ձեռօք , թէ որդիքը Սերաստիա վերադառնա-

լով ժառանգական իշխանութիւնը վարել սկսան ,  
 թէ ի՞նչ տարածութիւն և ընդարձակութիւն ու-  
 նէր ի հնումն այդ մեծ քաղաքը , թէ քանի՞ հա-  
 ըրուր Եկեղեցի և քանի՞ հազար Հայոց տներ կային  
 հոն , և քանի՞ Եպիսկոպոսարան վիճակին մէջ , ո՞ր-  
 քան վանք ունէր այդ վիճակը , թէ գետադարձ  
 Պետրոս Սրբազան Հայրապետ Սերաստիա գալէն  
 յետոյ Կ. Պօլիս երթալով Յունաց կայսեր հետ տե-  
 սակցելէն յետոյ կրկին Սերաստիա կը վերադառ-  
 նայ , թէ ի՞նչպէս Սենեքերիմաց որդւոյն Ատովմի  
 թագաւորութեան ատեն , Արաբացիք , Պարսիկք ,  
 Տուրքիլ և Լենկիթիմուր Սերաստիա արշաւելով Հա-  
 յերէն բազմաթիւ անձինք կը զենուն , զճնացորդս  
 գերի կը վարեն Տաճիկները , և մաս մ'ալ վասն  
 Քրիստոնէական հաւատոյ կը նահատակեն , այս նա-  
 հատակաց գերեզմաններն ոմանք յայտնի մնացած  
 և ոմանք անյայտ եղած են , թէ ի՞նչպէս Լենկգի-  
 մուր բազմաթիւ ընտիր ձեռագրեր նոյն իսկ մա-  
 դաղաթի վրայ գրուած , կայրէ և մնացածն ալ  
 հետը կառնու կը տանի , թէ Պարսիկք երկրորդ  
 անգամ Սերաստիա արշաւելով կուզեն Ս. Նշան  
 վանքը կողոպտել՝ յորմէ հրաշիւք իմն կաղատի եր-  
 կու անգամ Ս. Մենաստանը , և թէ ո՞րքան Կա-  
 թողիկոսներ և Եպիսկոպոսներ եկած , ժողովրդեան  
 առաջնորդաց և վախճանած են և ըն և ըն : Տ. Յով-

հաննէս Եպիսկոպոսի այս ձեռագիր պատմութիւնը  
 կընդօրինակէ Սերաստիոյ Մայր Եկեղեցւոյն Աւագ  
 հոգեւոյս Տ. Մեսրոպը անուն մաքրակրօն քահա-  
 նայն , որոյ վախճանէն յետոյ Ս. Նշան վանուց թան-  
 դարանի մէջ կը պահուի սպարդիւն : Ես արդէն  
 իմանալով Գեր . Առաջնորդ Ս. Հօր հրամանաւ առի  
 զայն և կարդացի ծայրէ ի ծայր , յիրաւի սիրտս  
 ճմլուեցաւ , զգայուն մէկը չկարէ անթաց աչօք և  
 անհառաչ ընթեռնուլ զայն . . . և խիտ փափա-  
 քեցայ , որ ընդօրինակելով զայն ի լոյս ընծայեմ  
 սիրելի Ազգիս գաղափար մը տալու համար Սերաս-  
 տիոյ անցելոյն վրայ : Սակայն ցաւ ի սիրտ պարտաւ  
 որ եմ խոստովանիլ այս տեղ , թէ վանուց Արժ .  
 միաբանակից վարդապետք արդելին կատարել սրբ-  
 տիս իղձը՝ չգիտեմ ինչ պատճառաւ , և ձեռքէս  
 իլելով միւսանգամ թանգարանին մէջ բանտար-  
 կութեան դատապարտեցին զայն՝ որ լոյս տեսնե-  
 լու էր . . . . միայն թէ որովհետեւ սկսած էի ըն-  
 դօրինակութիւնը՝ երբ յափշտակեցին զայն ինձմէ ,  
 սիրելի ընթերցողացս գաղափար մը տալու համար  
 դէթ այսքանը կը հրատարակեմ հոս՝ յուսալով , որ  
 ամբողջին յարգը իւր մասէն կը զնահատուի :



Է.

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՃԱԿԻՆ ՍԵՐԱՍՑԻՈՑ

Յաղագս Էրեւելի ինչ ինչ անցիցն, որք անցին ընդ հրաշափառ վանս, որ յանուն արփիափայլ Ս. Նշանի կառուցեալ կայ ի Մայրաքաղաքս Սերաստիա սկսեալ ի հիմնարկութենէ եւ ի շինութենէ անտի Սրբոյ Մենաստանիս Յովնանէս այսիքն Սենեքերիմ բարեպաշտ արքայի Արծրունեանց Յամի Տեառն 1021 : Եւ Հայոց թիւ Ն 4 :

« Հաւաքեալ եւ ի մի վայր գումարել ի պատմադրաց աստի եւ անտի ի հին եւ ի նոր գրուածոց ի գաւազանագրաց ի կոնդակաց ի տապանագրաց ի յիշատակարանաց գրեանց խաչից զարդուց եւ այլոց կահուց եւ կարասեաց » :

« Յօրինեալ ի Յովհաննէս Արքեպիսկոպոսէ Առաջնորդէ Սերաստիոյ Յամի Տեառն 1830 եւ ի թուին Հայոց ՌՄՂԹ » :

« Կրկին գրեցեալ եղև մեղսամած եւ յամենից յետնեալ Տէր Մեսրոպէ միայն անուամբ քահանայի ընդ հովանեաւ ամենամաքուր Սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյ Մայր Վարժարանի Սերաստիոյ » :

Ը.

### ՆԱԽԱՐԱՍՏՆՈՒԹԻՒՆ ԴՈՅՁՆ ԻՆՁ

« Որպէս ոչ ոք կարէ երկիցս թանալ զոտս իւր ի մի եւ ի նոյն ջուր գետուոյն՝ զոր փութապէս հոսեալ ի բաց անցանէ, որպէս վիճակ կենցաղոյս եւ վայրկեան մի կարէ կեալ ի նոյնութիւն, յար եւ միշտ ի բազմաց դիմի փոփոխութիւնս եւ այլայլութիւնս առեալ իբրև թէ կոհակս ալեաց ել եւ էջս առնէ, երբեմն երջանիկ յաջողութիւն անդորր խաղաղութեամբ զուարճանալով զընծայեալ ճեմն առնէ, եւ երբեմն վնասակար ճախորդութեամբ ազմկալիւ խռովութեամբ վրդովեալ սաստկագոյն տատանի » :

« Որպէս եւ յարկ փառացն Աստուծոյ Ս. Տաճարս այս գերապանծ՝ որ յանուն հրաշակերտ Ս. Նշանի կառուցեալ կայ ի Մայրաքաղաքս Սերաստիոյ, զոր մերթապէս հոգևոր եւ մարմնաւոր վայելչութեամբ զարդարեալ անճառահրաշ սքանչելեօք, երևելի եւ փառաւոր Հայրապետօք, ներհուն եւ բանիբուն վարդապետօք, հռչակաւոր ազնիւնահատակօք, անուանի եւ մեծագործ թաղաւորօք եւ իշխանօք, զգեղազարդ գեղեցկապէս հովակապ յորինուածովք եւ պէս պէս պանծալի ճը

ըիւք անճեալ պերճանայր , և մերթ յողնադիմի վտանգալիր և մնասակար դիպուածոց շուրջ փակեալ վայրենամիտ և կամակոր արանց այլազգեաց պաշարեալ արիւնուռուշտ դժեղակ և գազանաբարոյ բռնաւորաց կեղեքեալ ի յետին սնանկութիւն և անլքութիւն՝ գրեթէ յամայութեան վիճակ ժամանեալ վերև իւր , է այսմ ամէ ամենալնամ աջ հզորին հովանեաւ տեսչութեամբ արգահատեալ պաշտպանեաց զսա մինչև ցայժմ , և սա սրահեցեցէ հաստատուն մինչև ցյաւխտեան » :

« Զսոցանէ սակաւ ինչ ունիմք խօսիլ առաջիկայդ համառօտակի հաւաքեալ ի պատմութեանց ատաի և անտի , ըստ որում ճշմարիտ պատմութիւն ոչինչ է առանց ժամանակագրութեանց , վասն որոյ յաւելաք և Բ. Պատ. խորե . զթուականս ի լուսանցն յընդ որս և զստուգութիւնն Սրբոյ Մեշնաստանիս եղաք յաւարտ պատմութեանս , խօսեցաք սակաւ ինչ և վասն Աստուածընկալ Սրբոց Նշանայն և մեծադոր նշխարաց Սրբոցն՝ որ ի կամս զետեղեալ կան , ի դրօսանս Գերապատիւ բանասիրացդ՝ որ ի սակս ձեր բաղձացելոցդ » :

Մնամ միշտ աղօթարար եւ պաշտօնարար

Առաջնորդ Սեբաստիոյ  
ՅՕՀԱՆՆԷՍ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍ

Թ.

ՔԼՈՒԲ ԱՌԱՋԻՆ

Յաղագս հիմնարկութեան եւ շինութեան Սրբոյ Նշանի ջրնաղագեղ վանիցս , որ ի Մայրաքաղաքն Սեբաստիա : Յամի Տեառն 1021 եւ Հայոց ՆՃ :

« Բարեպաշտ արքայն Արծրունեանց Յօհաննէս որ և Սենեքերիմ անուանիւր , նեղեալ յոյժ ի Թաթարացն Սկիւթացի՝ որք կոչին թուրք , վասն այն հաստատուն զՎասպուրական աշխարհն իւր կայսերն Յունաց Վասլի չորս հազար ընդարձակ և արդիւնաւոր գեղօրիւք , պատուական բերդօք և տանն քաղաքօք , և ընկալաւ ի նմանէ հաստատուն նամակաւ զամենայն երկիրս Սեբաստիոյ հանդերձ ամենայն դաւառօք իւրովք մինչև ի սահմանս Եփրատայ , և առեալ զորդիս և զեղբօրորդիս իւր և զազգայինս և զամենայն աղատագունդ զօրսն և զուամիկս , և գրեթէ զերրորդ մասն աշխարհին իբր չորս հարիւր հազար ոգիս հանդերձ պարագայիւք իւրեանց՝ եկն ի Սեբաստիա , և բնակեցաւ աստ Յամի Տեառն 1021 » :

« Եբերընդ իւր զՍուրբ Նշան , զՍուրբ Խաչն Վա .

բազայ և շինեաց վասն այսր զվանս Ս. Նշանի ի Սերաստիա, և եդ ի տնս զիտաչն տէրունական » :

« Լուեալ Պետրոս Կաթողիկոսի զգալն Սենեքերիմայ արքայի ի Սերաստիա, եկն և ինքն այսր և եկաց ժամանակս ինչ, և ապա պատգամաւորօք Յօհաննէս արքային Հայոց՝ որ նստերն յԱնի քաղաք, գնաց առ Կայսրն Վասիլ ի սահմանս խաղտեաց, և խօսեցաւ ընդ նմս զխաղաղութիւն և արար հաշտութիւն ի մէջ Յօհաննու արքայի և Վասիլի Կայսեր » :

« Անդ արար և զսքանչելիս ի Տօնի Զորհնեաց զի հրամայեաց Կայսրն օրհնել զՂուրն առաջի իւր ի գետն ըստ ծիսի Հայոց, և ի խաչակնքել Հայրապետին զՂուրն՝ արդեղու գետն յընթացիցն, և ի հեղուլն զՍրբալոյս իւրն Միւռոնի՝ ճառագայթ ըստ սոյ հատան ի Ղուրցն, ընդ որ կարի իմն սքանչացեալ Վասիլ՝ մեծարեաց զՀայրապետն, և ապա բազում պատուով արձակեաց զնա, յայսմանէ գետադարձ անուանեցաւ սուրբն » :

« Եւ անտի դարձ արարեալ եկն ի Սերաստիա առ Սենեքերիմ արքայն, և եկաց առ նմս այլ եւս ամս երկուս, և գնաց աստի յԱնի քաղաք և կացեալ անդ ամ մի, և լուեալ զհիւանդութիւն Սենեքերիմ արքայի՝ դարձաւ վերստին ի Սերաստիա, և ի նոյն տարւոյն եհաս վախճան կենաց սորին 1027 » :

Եւ ի մեռաներն իւրում պատուիրեաց որդւոց իւրոց, զի դարձուցեն անդրէն զՍուրբ Խաչն ի Վարազ, և զինքն եւս տարեալ թաղեցնն անդր » :

« Սյս պատուէր տուեալ առ նոսա՝ վախճանեցաւ բարի մահուամբ կեցեալ ի Սերաստիա ամս 6, և թագաւորեալ ընդ ամենայն ամս 55 = Ապա առեալ որդւոց նորա զմարմին նորին և զՍուրբ Խաչն թողեալ մասն ինչ՝ որպէս և աւանդի, ի վանս Ս. Նշանի, և յուղի անկեալ գնացին ի Վասպուրական աշխարհն և զետեղեցին զՍուրբ Խաչն ի տեղւոյ իւրում ի Վարազ : Եւ թողեալ զհայրն իւրեանց դարձան անդրէն ի Սերաստիա : Մագս, Վարդապետ » :

« Եւ թագաւորեաց ի տեղի Սենեքերիմայ երեց որդի նորա Գաւթ յաջորդ ամին, յաւուրս սորա եհաս վախճան կենաց Սիօնի Արքեպիսկոպոսին Սերաստիոյ, վասն որոյ ինդրեաց արքայն ի Պետրոս գետադարձ Հայրապետն զայր ոք արժանաւոր վորձեալ յԱստուածապաշտութեան և յիմաստութեան ձեռնադրել և կացուցանել ինքեանց Եպիսկոպոս, և նա գրեաց առ Գրիգոր Մագիստրոսն և ինդրեաց զմարմինս աշակերտաց նորին՝ որք ուսանէին ի նմանէ զհոգեւոր պէս պէս գիտութիւնս, յորս երևելի եղեն Բասիլ և Եղիսէ » :

« Զսոսա առաքեաց Գրիգոր Մագիստրոսն բա-

րեհաճ կամօք և յանձնարարական դրութեամբ առ  
 Հայրապետան, որ և սկտանի այսպէս : » Զվեռմա-  
 կանն մականուանութիւն սրբաղնարար ընկալեալքս  
 բոլորն հարց պետականութեանց մարութ և անա-  
 ղօտ լուսախայլութեամբ ի մեզ . . . » :

« Եւ ընտրեաց Պետրոս կաթողիկոս գետա-  
 դարձ զեղիսէ, որ և ձեռնադրեաց զնա Արքեպիս-  
 կոպոս Սեբաստիոյ, զոր լուեալ Գրիգոր Մաղխատ-  
 րոսի՝ գրեաց առ նա թուղթ բարեյարմար ազգա-  
 րարութեամբք վասն ընկալեալ աստիճանին, զոր  
 հանեալ ի թղթոյ նորին եղաք աստ ի խրատ խո-  
 հականաց ընթերցաօրաց, առ աշակերտ իւր Ե-  
 ղիսէ Եպիսկոպոս Սեբաստիոյ » :

« Լսեմ զքէն՝ մանուկ դու, եթէ գառնդ  
 երբեմն ելով այժմ հովիւ զքեզ կացուցին, երիս  
 հարցափորձութեամբ խոստովանեալ քո և այն ըզ  
 կատարեալն սէր և զառ ի Հօրէ ուսեալ դաւա-  
 նութեանն սկիզբն, և ապա զպահպանականն ըն-  
 կալար իշխանութիւն և այն զծայրագոյնն յոլովից  
 Հօտին վատահացեալ ուրեմն Աստուածպետականին  
 նմանողդ՝ յանտիական տխգ մատաղերով, զմտա-  
 ածեր զերմնաս և ուսան, զՍողոմոն և զիւրն հայր  
 ի վերջին ծնելոցն մինն օժման իւր զՅովհաննէս և  
 զԱռիստակեսն » :

« Այսորիկ ի հովուաց մեզ իմաստասիրեացի

աարացոյց ի մարտիրոսացն նախավկայ և առաջին  
 սարկաւազաց Ստեփաննոս և ի մարտիրոսաց կիւ-  
 րակոս, այլ ինձ յոյժ երկիւղալից և տրտմական  
 հանդէս հանդերձ ցնծութեամբ, զի մեծագոյն հա-  
 սեր հանդիսի և մրցանաց և մարտի, և աշխոյժ  
 ժամանակի բռնութեան, և տկարացելոցն ի հա-  
 ռատս » :

« Եւ զի՞նչ ոք առ այս քեզ խրատական կամ  
 զգուշացուցանող անուանեսցի ստեղծանիլ բան .  
 կամ եթէ ո՛ր արդեօք օգնականութեան քեզ հա-  
 ւանեաց կամ զգաստացուցէ կամ միեթարեացէ .  
 քանզի միշտ այս զայժմ զծովակենցաղոյս տեսա-  
 նեմ յածեալ զբռնութիւն, և զարեաց ի վեր զժա-  
 ուպելոց ընթացք և զկոհակացն պղտորեալ բարձ-  
 րութիւն, և ո՞րք նաւապէտ մանաւանդ եթէ  
 նաւահանդիստ . վասն զի ժամանակս հնազանդու-  
 թեան և ամենայն Աստուածեղէն պատգամս, զար-  
 ձակումն որդւոյն կորստեան մեզ յայտնէ . վասն ո-  
 լոյ ցամաքեալ է սէր և բազմացեալ է անօրէնու-  
 թիւն, այլ ընտրեալքն սպասեն, վասն զի սակս տյ-  
 նորիկ կարճեալ է զաւուրն » :

« Արդ լեր յընտրելոց, զի իւրաքանչիւր դարս  
 այսօրիկ ոչ նուազին, լեր Աբել, և մի՛ զպատաս-  
 խանիան առ ձեռն զկայենին ուսցիս ոչ եղեալ պա-  
 հապան, որդի ես Նոյի ապրեցուցեալ, և ի չարին

Ժամանակին ոչ ծնեալ, մի ծիծաղեսցիա ի վերայ  
 Հօրն . լեր ի Սահակ և մինչև ի Ղենու մի հար-  
 ցաներ զՊատարագէն, հեղգացեալ կամ փախուց-  
 եալ, լեր Յակոբ և մի ընդ վայրենի որսս յածեալ  
 վաճառեսցես ընդ սոցա զչնորհան, թեպէտ և վա-  
 ճառիս յերարց իբրև զՅովսէփ պատանի՝ մի՛ անո-  
 ղորմեսցիս վաճառողացն զքեզ, և այն յեգիպտոս,  
 եթէ Մովսէս կամ Սհարօն՝ մի՛ զհակառակութիւն  
 մատնեսցի, դու ընդ սմին մեռցիս, և այն ոչ  
 գովեալ, մերձ առ Երիքով և եօթ անգամ զպա-  
 ըսպօքն շրջեսցիս սաղմոսելով, զի տապալեսցի ա-  
 ռաջի Ժողովրդեան քո, զյորձանան Յորդանանու  
 ի վեր կարկառեսցես և զստորական յաղտաղտուկն  
 առաքեա՛ և անցցես յերկիրն Աւետեաց, մեռիք  
 վասն Դաւթեայ ճշմարտութեան ի Սառուղայ, մի՛  
 արծաթասէր՝ որ կորոյսն զՅուդա, այլ մերկ իբրև  
 զՅովհաննէս, մի՛ ստող իբրև զՄնանիա, այլ իբրև  
 զՊետրոս և իբրու զՅակոբոս անկցիս ի բարձանց և  
 մեռցիս, խաչեսցիս՝ եթէ հնար է գլխովայր, զի  
 հիւսիսդ յահեկէն լիցի քեզ և դրախտն բացցի  
 ձեզ երկայնամուտ պարկեշտ խոնարհ, և զորս միան-  
 դամ հայցէ ի քէն, զի ի քեզ Աստուած բնակեսցէ  
 իւր տաճարացուցեալ, առաջնորդեսցէ քեզ և յա-  
 մենայնի յաջողեսցէ շինեալ ի վերայ վիմին, և մի՛  
 զվչումն նորա ի բաց հանցես, զի ի քեզ բնակեսցէ

և դու ի նմա, և լեր որդի լուսոյ և որդի սուրն  
 ջեան, զի յամենայնի փառաւորեսցի անուն Աս-  
 տուծոյ, և ինքն պահպանեսցէ զքեզ և եղիցի օրհ-  
 նեալ յաւիտեանս ամէն » :

Վերոյիշեալ Մագիստրոսի նամակին ընդօրի-  
 նակութեանը մէջ տղիտութեամբ և անհասկացու-  
 ղութեամբ շարադրական սխալներ սպրդած կ'ե-  
 թեին, զորս ես բնաւ ուղղել չուզեցի՝ բնազդին  
 հաւատարիմ մնալու միակ նպատակաւ :

« Ընկալեալ Եղիսէի Արք եպիսկոպոսին Սե-  
 բաստիոյ թուղթ վարժապետին իւրոյ Մագիստրոսի՝  
 ուրախ եղև յոյժ, և սկսաւ այնուհետև առաւել  
 ևս յառաջագէտ լինել, և ընդ բնական ուշիմս-  
 փայլ զգօտնութեան և գերբնական շնորհացն հալ-  
 ուել զհօտն Քրիստոսի բարոյական խրատիք և Ա-  
 ւետարանական կրթութեամբ և լինելով օրինակ  
 բարեաց ամենից հաւատացելոց » :



Ժ.

ՔԼՈՐԻ ԵՐԱՐՈՐԳ

Յաղագս արգելանաց եւ բազմադիմի տառապանաց Տեառն Պետրոսի Կարուդիկոսի եւ մանուան նորին 'ի Սերաստիա : Ուր հայեցի , Կիրակոս Պատմ : Թիւ . Ն Հ Ը .

« Ի սմին ժամանակի մեռաւ Աբաս թագաւորն կարուց կացեալ յիշխանութեան ամս 43 , և թագաւորեաց 'ի տեղի նորա Գաղիկ որդի նորին այր զգօնամիտ , միանգամայն քաջ » :

« Պետրոսի Կաթողիկոսի , զմիան Աբասայ ել 'ի Սերաստիոյ , և զնաց 'ի Կարս և անտի չոգաւ յԱնի քաղաք , և ետես զի թագաւորն Անոյ Յովհաննէս և նախարարքն Հայոց ընդ ահամբ հայէին 'ի նա վասն այնչափ ժամանակս բնակելոյ նորա 'ի Սերաստիա , վասն այսորիկ ելեալ զնաց 'ի Վասպուրական աշխարհ , եկաց անդ առանձնացեալ իբրև զմիայնակեաց ամս չորս 'ի Չորոյ վանս՝ զոր շինեալ էր Ներսեսի Հայրապետին » :

« Ընդ այս դժուարացեալ արքային Յովհաննէս և նախարարացն Հայոց խորհեցան զայլ ոք նստուցանել Կաթողիկոս , բայց երկնէին , թէ ու ոչ

Պետրոս Կաթողիկոս ոչ հրաժարեացի յիշխանութեւնէն և ծագեացի երկպառակութիւն , և երկու լիցին Հայրապետք , վասն որոյ դուաճանութեամբ գրեալ կոչեն զնա դալ և վարել զիշխանութիւն իւր » :

« Եւ իբրև եկն նա և եմուտ 'ի քաղաքն առ 'ի կալ անդ , յղեցին և եղին զնա յարգեւանս 'ի մեծ ամուրն Բջնի ուր եկաց նա ամ մի և ամիս 3 , և եղին Կաթողիկոս զՎանահայր Սանահնի զԴեոսիորոս » :

« Բայց ոչ ընկալան զնա երևելի Եղիսիկոս սուեք մեր և ոչ յիշեցին զանուն նորա 'ի Պատարաղին և ոչ թողին ձեռնադրել զոք Եղիսիկոսոս , և 'ի ձգել նորա զձեռն և գործել զանարժանս՝ ( Ն Զ Դ . ) ժողովել Եղիսիկոսոսաց և վարդապետացն մերոց իբրև չորս հազար անձանց և դատեալ Դեոսիորոս՝ դուն զնա պատառնի , վասն որոյ ընկեցեալ զնա 'ի պատուոյն և պատառեալ զքող նորա՝ արքորեցին զնա 'ի Վանս իւր , և հաստատեցին զՊետրոս Կաթողիկոս վերադին յաթու Հայրապետութեան ( Ն Զ Ե ) ( Ն Զ Զ ) » :

« Ընդ այս ժամանակս մեռաւ Դաւիթ արքայ Սրժբունի՝ որ նստէր 'ի Սերաստիա , որդի Սենեքերիմաց՝ կոցեալ յիշխանութեան ամս 10 , և նստաւ 'ի տեղի Գաթի եղբայր նորին Ստովմ , և

Աբուսահլ եղբայրն օգնական էր նմա և միւս եղբայրն Կոստանդին մեռեալ էր » :

« Այս Ատովմ արքայս Սենեքերիմեան ըստ գրեցելոյ Ուրհայեցւոյն լցեալ առաքինութեամբ և արդարութեամբ և Ս. վարուք 'ի Գրիստոս Յիսուս, զարգարեալ հեղութեամբ և քաղցրութեամբ, ողորմած 'ի վերայ տառացելոց, դարմանիչ աղքատաց և յոյժ սիրելի կրօնաւորաց դասուն, շինող եկեղեցւոյ և բազմադունից վանօրէից ( Ն 2 Է ) » :

« Յաջորդ ամին՝ յորում թագաւորեաց Ատովմ իշխան ոմն Հայոց՝ որ եկեալ էր ընդ Սենեքերիմայ 'ի Վասպուրական աշխարհէ 'ի Սեբաստիա, նախանձեալ ընդ պատիւ նորին՝ ել 'ի Սեբաստիոյ ընտանեօքն և դնաց ի Կոստանդունուպօլիս առ Գ. Միքայէլ կայսր, բազում չարիս խօսեցաւ զնոցանէ » :

« Ապստամբեալ ասէ 'ի քէն խորհեալ են վիշտըս հասուցանել տէրութեանցդ, որոյ վասն և իմ մեկնեալ 'ի նոցանէ, եկի աստ առ ձեզ » :

« Զայն լուեալ կայսերն՝ հաւատաց, զի երեւելի էր չարախօս սյրն, և առաքեաց զօրս 'ի Սեբաստիա 'ի վերայ Ատովմայ, և Աբուսահլայ պատուէր տուեալ զօրապետին, զի թէ կամիցին դալ 'ի Կ. Պօլիս՝ մի՛ տայցէ պատերազմ ընդ նոսա և թէ ոչ կամիցին դալ՝ պատերազմեալ յաւարի առցէ

զաշխարհ նոցա, և կենդանւոյն կալեալ տարցէ զնոսա 'ի Կ Պօլիս » . . . . .

**ԺԱ.**

**Ս. ՆՇԱՆ ՎԱՆՈՒՑ ՇԷՆՔԸ**

Ս. Նշան հրաշակաւորաց մենաստանը՝ ինչպէս ըսի, դաշտային և բարձր գերբի մը վրայ զետեղուած՝ երեք հարիւր յիսուն քայլ շրջապատ, և երկու դուռ ունի : Մին 'ի հարաւ կը բացուի, ուրկից Ժողովուրդք կերթեկեն. դրան փեղկերն թանձրափայտէ շինուած և երկաթապատ, բայց փոքր է. հաստատուն քարէ սեմեր ունի : Այս դրան կից ներքին կողմէն դէմ առ դէմ ընդարձակ նստարաններ կան, որք ուխտաւորաց առաջին թաղի ճամբուն վրայ հաստատուած են, քայլ մ'անդին միջակ և քարայէն բակ մը կայ՝ որ յԱռաջնորդարան կը հանէ. բակին վրայ պատ մը, որոյ ձախ կողմը քաղցրահամ շրոյ աղբիւր մի զետեղուած կայ : Ատոր կից փայտէ հին և փոքրիկ դուռ մը, և անկից ներս երկրորդ և անձուկ քարայատակ՝ որ ուխտաւորաց երկրորդ թաղը կը համարուի :

Այս կրկին թաղերը երկայարկ՝ յիշեալ բա-  
կերուն շուրջ տասներեք փայտաչէն սենեակներ կը  
սլարունակեն, մեծ ու ընդարձակ սեղանատուն մը  
ուխտաւորաց համար, և լուացարան մը՝ որ ժա-  
մանակաւ սա խոհարան է եղեր :

Վերոյիշեալ առաջին բակին մէջ Առաջնորդա-  
բանի պատին աջ կողմն է երկրորդ փայտաչէն մեծ  
դռուը՝ որ թէ՛ յԱռաջնորդարան և թէ՛ միարա-  
նից թաղը կըտանի . հոն տանող ճանապարհը մութ  
և նեղ է :

Գարձեալ նոյն բակի աջ կողմն է Եկեղեցւոյ  
դաւիթի առաջին փայտեայ դռուը, այս դռնէն  
ներս ճիշդ դիմացդ երկաթեայ փոքրիկ դռու մը,  
այս երկու դռանց մէջ տեղը կանգնած են ժամա-  
հար երկաթի կոշնակը : Հոն շտեմարան մը կայ՝  
ուր կ'ամիտինեն թեմերէն հաւաքեալ վանական  
պտղին : Ահա սոյն երկաթեայ դռնէն ներս է  
դաւիթը՝ որ մեծ է և ընդարձակ՝ քսան երկու  
ոտք երկայնութեամբ և յիսուն երկու ոտք լայնու-  
թեամբ, ամբողջ սալայտտակ : Այս երկաթի դը-  
րան ներսի երկու կողմերը պատերու մէջ մեծ դըս-  
տիկոններ կան՝ դաւիթը մանող անձանց երբեմն  
հանդստեան տեղի և խուց մը՝ ուր սպաս կը դոր-  
ծեն, բովանդակ փայտաչէն : Գաւիթին մէջ տեղը  
փայտեայ դմբէթ մի կայ ինը լուսամուտներով, ու

րոցմէ երեքը դէպ 'ի հարաւ և 'ի հիւսիս դէմ  
առ դէմ դաւիթը կը լուսաւորեն : Պատերն սպի-  
տակ կիրով ծեփուած են :

ԺԲ.

### Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Բ

Գաւթին Արևելեան կողմը Ս. Նշան եկեղեցւոյ  
դրան աջ դին Հարաւային պատին առջև վեց Ե-  
պիսկոպոսական և քանի մը Վարդապետական դե-  
րեզմաններ կան պատուական բարձր շիրիմներով  
յորս ամիտփուած են եղեր քաղաքին Առաջնորդ-  
ներն, և այսօրիկ են անուանք նոցա ըստ թուա-  
կանի վախճանմանն :

Կարապետ	Վարդապետ	1200	Թուական Հայոց
Եղիազար	Եպիսկոպոս	1203	»
Յակոբ	»	1250	»
Գաւիթ	»	1773	Թուական Փրկչի
Կարապետ	»	1842 (*)	»
Յովհաննէս	»	1830	»
Կարապետ	»	1273	Թուական Հոյոյ

Այս վերջին Կարապետ եպիսկոպոսը՝ նախոր-  
դին Յովհաննէս եպիսկոպոսի առաջնորդութեան

(\*) Այս տեղ թուականի սխալ մը ըլլալու է :

ատեն փոխանորդութեան պաշտօն վարեր է՝ ինչպէս նշանակուած է շիրմին վրայ : Այս երկուքը այնչափ սիրով կը վարուին եղեր միմեանց հետ , որ զիրենք ճանչողներն խիստ մեծ գովեստ կուտան :

Մի և նոյն գաւթին մէջ կան նաև միաբան վարդապետաց գերեզմաններ ալ : Ասոնցմէ զատ գաւթին Հիւսիսային կողման պատին անկիւնը Ս. Կարապետ Եկեղեցւոյ աջ կողմը դրան կից բարձր տեղ մը մտրմարոնեաց շիրմ մը կերևի աշխարհականի : Թէպէտ կան եղեր ուրիշ շատ գերեզմաններ ալ , բայց հիմայ անցայտ են եղած :

**ԺԳ.**

**ԽՈՐԱՆՔ Ս. ՆՇԱՆԻ**

Գաւթին Արևելեան կողմը մէկ կարգի վրայ իրարու կից երեք Եկեղեցիներ են , վերի ծայրը Ս. Նշան , երկրորդ Ս. Կարապետ և երրորդ Ս. Աստուածածին : Ս. Նշան Եկեղեցւոյ ճակատը չը տեսայ հիմնարկութեան թուականը և կառուցողին յիշատակարանը , սակայն վերոյիշեալ ձեռագիր պատմութենէն տեղեկացայ , թէ Սենեքերիմ արքայն հիմնած ըլլայ զայն , զոր ապա յառաջնորդաց ոմանք կիսովին և ոմանք հիմնովին նորոգած են քարու-

կիր հոյակապ և խաչաձև՝ եօթանասուն և չորս ոտք երկայնութեամբ և քառասուն և մէկ ոտք լայնութեամբ : Աւագ խորանի բեմը տասն և ութ ոտք լայնութիւն ունի : Ընդարձակ փառաւոր և պատկառելի է բեմը ու սեղանը՝ որ յաջ և ձախ ոսկէզօծ ու պատկերազարդ խաչկալներով դուռներ ունի Ս. Լուսաւորչի և Ս. Յակոբայ անուամբ օծեալ : Այս դուռներն կը բացուին Պատարագ եղած ատեն վերաբերման միջոցին , իսկ ուրիշ ատեն գրեթէ գոց են :

Աւագ խորանը բարձր և պատկառելի դիրք մը ունի , և գոյն զգոյն ներկերով և ոսկեզօծ ընտիր նկարներով զարդարուն , մանաւանդ Ս. Աստուածածնայ մեծ պատկերն :

Սեղանին ճակատը յիշատակարան մը կայ այսպէս : « Ժամանակս քաջ գիտողի Տեառն Յովհանն « նու Արհիպետի , արդեամբ բոլոր Հայկեան աղ « գիս , մեծ և շինումն խաչկալի , չքնաղափայլ և « պանծալի , նորին խոհեմ փոխանորդի Տէր Կա « րապետ վարդապետի . . թիւ Հայոց » (1) : Աւագ խորանի ետև պատուական զանգակ մը կախուած կայ :

Մէկ քանի լուսամուտներ ունեցող հոյակապ

(1) Թիւը եղծուած էր :

գրեթէ մը՝ որ ուղղակի Եկեղեցւոյ դասերուն վրայ կը նայի : Դասերուն մէջ յարեւելեան կոյս երկու փոքրիկ քարտկիր և հինաւորց մատուռներ՝ մէկը յանուն Ս. Պետրոսի Առաքելոյ՝ համանուն պատկերազարդ դռներով, որք չըջապատեալ են . ըստ սովորութեան աշակողմեան պատին ազուցեալ մը կրտսութեան կամարածե աւազանը նոյնպէս ճիշդ ձախակողմեան պատին ազուցեալ է կամարածե շէնք մի բայց ոչ ոււազան . նոյն աւազանին դիմացը կամարածե փոքրիկ շէնք մը կայ, որոյ համար աւանդութիւն է, թէ նախապէս դուռ մ'է եղեր, թէ Սենեքերիմ արքայն Հայոց նոյն դռնէն ելև մուտ կրնէ եղեր, և թէ նոյն դրան Սրեւելեան պատին մէջ շինուած սանդղէ մը երներով ձախ դասուն վերոյնչեալ մասրան դրանը վրայ գտնուած քարտկիր փոքրիկ սենեկին մէջ՝ որ ցարդ կայ՝ կազօթէ եղեր :

Նոյն դրան արտաքին կողմը Անանիա կաթողիկոսի գերեզմանը կայ որոյ գամբանադիրը հղծուած է, և հաղիւ կորոշուի թէ Փրկչեան 1256 թուականին է վախճանած, և թէ նա գետադարձ Պետրոս Հայրապետի ազգականն է եղած՝ ինչպէս պատմութիւնը կը ցուցնէ :

Դասերէն դուրս Տաճարին մէջ դէպ յաջ կողմ մարմարոնեայ Խաչկալով պատած հրաշագործ Ս.

Աստուածածնայ անուամբ կառուցեալ փայտաւոր Սեղան մի կայ, որոյ ճիշդ ձախ կողմն է Որդւոց Որոտման անուն Սեղան մը, այս կրկին Սեղաններուն վրայ երբեմն երբեմն Ս. Պատարագ կը մատուցուի : նոյն հրաշագործ Աստուածածնայ Սեղանին դէմ Եկեղեցւոյն հիմանց ներքև նահատակ Եպիսկոպոսի մը գետնի հաւասար շիրիմը կը տեսնուի, որոյ ոչ անունը յայտնի է և ոչ թուականը :

Ս. Նշանի Տաճարին երկաթի փոքրիկ դրան վրայ փայտակերտ վերնատուն մի կայ՝ որոյ դուռը դաւիթին մէջ կը բացուի : Տաճարին ներկայ կերպարանքը կը ցուցնէ որ ներքին պատերուն կիսէն վեր բարձրացած կամարները ատենօք կրով ծեփուած և գոյն զգոյն ներկերով պատկերներով զարդարուած են եղեր, և կիսէն վար ալ բոլորովին կապտադոյն շինիւն ազուցեալ, սակայն ժամանակին անցմամբ թէ նոյն ներկերն ու սպիտակութիւնը եղծուեր սեցեր, և թէ՛ շինիւնը գրեթէ յաճախ անջատուեր ինկեր են՝ վերջապէս նախկին պայծառութիւնը կորուսեր է այժմ : Երկրորդն է Ս. Կարապետի Տաճարը, որոյ համար աւանդութեամբ կը պատմեն՝ թէ Ս. Լուսաւորիչ Ս. Կարապետի և Աթանաղինեայ մարմիններն հետ առած Կեսարիայէն վերադարձած ժամանակ Սեբաստիա նոյն վանքը հանդիպելով, Ս. Պատարագ մատու-

ցեր և իւր իսկ ձեռամբ օծեր է յիշեալ մատու-  
 ուր յանուն Ս. Կարապետի : Հոգեւոյս Տէր Յովհանն  
 նէս Եպիսկոպոս նոյն փոքրիկ մատուուր մեծցնելով՝  
 քարուկիր Եկեղեցւոյ կը փոխարկէ զայն , որ յետոյ  
 ՚ի հնութենէն յաւերակ կը դառնայ , սակայն այժ-  
 մու Գեր. Առաջնորդ Պեպրոս Ծ. վարդապետ ՚ի  
 հիմանէ կը նորոգէ զայն արդեամբ և ծախիւք  
 տեղոյն բարեպաշտ ժողովրդոց երկու հազար  
 ոսկւոյ չափ ստակ ծախսելով և աւելի կ'ընդարձա-  
 կէ : Երանի՛ կ'ըլլար , թէ անատեն նոյն գումարով  
 յիշեալ Եկեղեցւոյ հետ մէկտեղ վանուց մէջ ժա-  
 ոանգաւորաց գիշերօթիկ վարժարան մ'ալ կա-  
 ուուցուէր . . . այս իմ կարծիքս ու գիտողութիւ-  
 նըս է , և ոչ ուրիշ բան :

Խիստ պայծառ , հոյակապ և փառաւոր է ներ-  
 կայ շէնքը , ուր ամառները յամերգութիւն կը կա-  
 տարուի : Իննսուն երկու ոտք երկայնութիւն ունի  
 և երեսուն երկու ոտք լայնութիւն , բարձր և ըն-  
 դարձակ կամարը՝ որ առանց սիւնի կանգնած է ,  
 Աւագ խորանին վրայ կը տարածուի , և բեմը քսան  
 և չորս ոտք լայնութիւն ունի , սակայն Աւագ խո-  
 րանի Խաչկալը սակաւին շինուած չէ : Ունի բար-  
 ձրը քարուկիր գմբէթ մի փոքրիկ և բոլորաձև լու-  
 սամուտներով՝ որք ուղղակի դասին վրայ կը հային :  
 Տաճարին հիւսիւսային պատին ներքև երկու կա-

մարներ շինուած կան , մէկը աջ դասի մէջն բարձ-  
 րացած և միւսը ժողովրդոց , այս կամարներն ու-  
 նին երկաթեայ վանդակներով գեղեցիկ դռներ ,  
 որոցմէ ներս քարուկիր մատուու մի փոքրիկ : Այս  
 մատրան Սեղանին ներքև իբրև վեմ զետեղուած է՝  
 Քառասուն մանկանց նահատակութեան ատեն Քը-  
 ըիստոսի իջման քարը , ուր երբեմն Ս. Պատարագ  
 կը մատուցուի : Եկեղեցւոյն արտաքին դռներն եր-  
 կաթեայ վանդակներով գեղեցիկ շինուած են :

**ԺԴ.**

**ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ**

**Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Ս. Կարապետ Եկեղեցւոյ նորոգութիւնը այս-  
 պէս կը պատմեն տեղացիք , այսինքն նախկին Ա-  
 ռաջնորդ Գեր. Կարապետ Արքեպիսկոպոսը ճշդիւ  
 խոստացեր է՝ թէ նոյն տաճարը իւր քսակէն պիտի  
 շինէ : Սակայն սկզբնաւորութեան ատեն պատճա-  
 ոաւ իւրիք Կ. Պօլիս երթալով շինութեան ծան-  
 րութիւնը մնացեր է՝ ներկայ Գեր. Առաջնորդի  
 վրայ , որ ստիպուեր է ի կատար հասուցանել զայն՝  
 ասկեց գրեթէ 13 տարի յառաջ : Երկրորդն է Ս.  
 Աստուածածնայ Եկեղեցին՝ ուր կը մտնեն Ս. Կա-

բապետ Եկեղեցւոյն կէց Հիւսիսային կողման պատին մէջ հաստատուած փայտաշէն փոքրիկ դռնէ մը, ուրկից ներս նախ տաճարին փոքրիկ դաւիթն է, որ քսան և մէկ ոտք երկայնութիւն և քսան և վեց ոտք լայնութիւն ունի քարուկիր է, բայց տակաւին ամբողջովին բուեալ չէ, և մէկ լուսամուտ ունի յարեմտեան կողմ, որ ոչ այնչափ բարձր է միւս մեծ դաւթին նման։ Այս դաւթին մէջ յարեւելք կոյս Աստուածածնայ տաճարին փոքրիկ փայտակերտ դռններ, որ կարմրագոյն ներկուած տեղ տեղ ոսկեղօծեալ և ընտիր ընտիր պատկերներով զարդարուած է։ Սոյն դրան երկու կողմերը յանուն Քառասուն մանկանց և Ս. Գեորգոս փոքրիկ մատուռներ կան կիսաշէն։

Վերը յիշուած փայտակերտ փոքրիկ դռնէն ներս Տաճարին գեղեցիկ շէնքը կը ներկայանայ, դրաւիչ և յանկուցիչ շքեղութիւն մը՝ Տաճարին փոքրութեան հակառակ, որոյ երկարութիւնն է երեսուն երեք ոտք և լայնութիւնը տասն և ինն ոտք։ Այսչափ փոքր գիրքի մը վրայ այսչափ ձեւաւոր և օքանչելի շինուածք մը չափազանց ճարտարութեան արդասէք է։ Չորս փոքրիկ կամարներու վրայ մէկ երկու լուսամուտներով փառասոր փորձիկ հոյակապ դմբէթ մը չորս սիւնակներու վրայ կանգնած է, երկուքը պատին մէջ և երկուքը Տա-

ճարին դրան առջև կցուած ըլլալով աջ և ձախ կողմերը մէկ մէկ փոքրիկ դասեր ձևացուցած են ուր դպիրք ժամերգութեան ասեն կը կանգնին։ Աւագ սեղան մը նրբարուեստ և ոսկեղօծ խաչկալով մարմարինեայ փոքր բեմի մը վրայ հաստատուած կայ։

ԺԵ.

### Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն

#### ԳԵՏԱԴԱՐՁ ՊԵՏՐՈՍ Ս. ՆԱՅՐԱՊԵՏԻՆ

Տաճարին երկու կողմը պատկերազարդ դռներով երկու փոքրիկ պահարաններ շինուած են յարեւելք կոյս, յորս ըստ սովորութեան Սեղաններ շիկան տակաւին։ Այդ պայծառ Տաճարին ուղալայտակը զարդարուած է կապտագոյն շինիներով՝ որք առ ոչ-դգուշութեան խարիչած են։ Տաճարի աջ կողմը դեռագարձ Պետրոս հոգեւորչս Հալլապետին գերեզմանն է՝ որ յառաջ վանքէն դուրսն է եղեր, սակայն յետոյ հանդուցեալ Յովհաննէս Եպիսկոպոսի օրով ներս առնուեր է։ Մարմարինեայ շիրիմը խիստ փառասոր է և պատուական, որուն վրայ փայտաշէն երեք դմբէթներով չորս սիւնի վրայ կանգնեալ կաթողիկէ մը զետեղուած է հա-

մակ ոսկեզօծ և շքեղ : Հողերոյս Հայրապետի նկա-  
րէն պատկերը այն կաթողիկէի տակը ամփոփուած  
է, սև տախտակի մը վրայ դամբանականը գրուած,  
որոյ օրինակն է հետեւեալը :

**ՆԵՐՐՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ**

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պանծալի պսակ Աղբիս Արամեան  
Գետադարձ Պետրոս վեհո Աստուածածան  
Երկունս ճգանց և վիշտս անձանց  
Եռանդեամբ կրէ յանձին գերազանց  
Տատանեալ շրջիւր տեղի 'ի տեղեաց  
Տայր արգել գետոց ջուրցն հոսանաց  
Բենային ջրիւք զազգ մեր զարդարէր  
Աղնիւ պերճ երգովք զբան մեծարէր  
Ուղիածեմ հրաշիւք զինքն շողջողէր  
Դրուադ ճոխ բանից տալ սմա ճահրէր  
Սխրալի զկեանս աստէն վճարէր  
Աճապար յերկնից կայարան չուէր  
Սահէր քառավտակ առանց պետութեան  
Բամիւր Ս. մարմնով ի վայրս հանգստեան  
Արդ փոխադրի յայս չքնաղ դամբան  
Զեղ լինի միջնորդ առ Տէր անխափան  
Վախճանի յամի Տեառն 1058  
Փոխադրեն զՍ. Նշխարս նորին յամի 1827 :

**Ժ. 2.**

**ԳԵՐԵԶՄԱՆ**

**ՆԱՀԱՏԱԿԻՆ Ս. ԹԵՈԴՈՐՈՍԻ**

Յիշեալ Գետադարձին գերեզմանին դէմ սա-  
դէմ նոյնպէս կանգնեալ է Տաճարին ձախ կողմը  
Գոհարինեայ վկայուհւոյն որդի Թէոդորոս նահա-  
տակի գմբէթաւոր գերեզմանը :

Այս նահատակը Սերաստացի էր և միաբան  
Ս. Նշան վանուց . բարբարոս ժամանակի մէջ օր մը  
վանքէն քաղաք երթալու ատեն այլազգիները սեւ-  
նելով զսա կ'ատիպեն՝ որ ուրանայ իւր ֆրիստունէա-  
կան Հաւատքը, երբ կընդդիմանայ՝ կը յօշոտեն  
զանի յերիս մասունս . ֆրիստոսի 1150 թուականին,  
որոյ մարմինը կը թաղուի վանուց գերեզմանատան  
մէջ : Յետոյ Յովհաննէս Եպիսկոպոսը զանի ալ նկա-  
տունելով կ'ամփոփէ նոյն Տաճարի մէջ և յիշատա-  
կարանը գրել կուտայ սև տախտակի մը վրայ, որոյ  
օրինակն է հետեւեալը :

**ՆԵՐՐՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ**

ՍՐԲՈՅՆ ԹԵՈԴՈՐՈՍԻ ՎԿԱՅԻՆ

« Թէոդորոս այս աւուր Գոհարինեայ վկայի որդի  
էր տեպեամբ չքնաղ անձամբ փառացի քաջ առաքինի  
Ռ. բազմօք ամօք ազօթիւք պահօք խաչակցիւր Քրիչին  
4

Գառնաչխատ ճգամբ կայր ի Մենաստան սրբոյ Նշանին  
 Որոյ յըմբռնել ի սակս հաստոյ պիղծ Ափային  
 Բամբուր արութեամբ ճշմարիտ վկայ Աստուծոյ բանին  
 Ուր մասնիւր քանիցս դժնեայ կտտանաց կարի սաստկազին  
 Սրոյ յօշատիւր ի մասունս յերիս սուրբ անձն նորին  
 Աճապար չուէր սրբակրօն հոգին կայանս յերկնային  
 Բն անդէն փարին ազգային նովաւ վկային  
 Առաջին եղեալ դամբանի ի յեկեղեցւոջ Ս. Կարապետին  
 Ղամբարաճաճանչ չնորհք հրաշից միշտ արտափայլին  
 Արդ փոխադրի ի շքեղ շիրիմ ի տաճար կուսին  
 Յովհաննէս դիտէ Կարապետ պետէ գործակից նորին  
 Նահատակեալ յամի տեառն 1150 ին  
 Փոխադրութիւն Ս. նշխարացն յամի տեառն 1827 ին : »

Ճշմարիտ կրտսմ, որ տաճարի նոյն ձեւաւոր  
 տակեղօծ խաչկալի և յիշեալ դերեղմանաց ոսկե-  
 դօծ դմբէթներուն փայլունութիւնը կրկին շքե-  
 դութիւն տուած են տաճարին :

Աւանդութեամբ կը պատմեն , թէ յիշեալ  
 տաճարը թաղէոս առաքելոյ շինած մատուռն է :  
 Ռմանք ալ կը կարծեն , թէ Սերաստիա Յունաց  
 իշխանութեան ձեռքն եղած ատեն շինուած ըլ-  
 լայ այն մատուռը . վասն զի կրտսն , Հոգեւոյս  
 Յովհաննէս Եպիսկոպոսի նոյն Աստուածածնայ  
 տաճարը նորոգած ատեն Յունական նշաններ ե-  
 րկցեր են :

**ԺԷ.**

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ**

Վանուց մէջ պարունակուած եկեղեցեաց , և  
 վանուց երկիցս նորոգութեան յիշատակարանք , Ս.  
 Նշան եկեղեցւոյ դրան վրայ այսպէս գրուած է .

**ԱՌԱՋԻՆ ՆՈՐՈԳՈՒՄ**

« Ողորմութեամբն Աստուծոյ վերստին նո-  
 « րոգեցաւ Ս. Նշանի կաթուղիկէն , վերստին Ս.  
 « Ժամատունն և Ս. Աստուածածնայ տաճարն և  
 « Ժամատունն և Ս. Կարապետի տաճարն և զայլ  
 « ուխտատեղիս և շրջապատ պարիսպն և խցերն  
 « ի Ժամանակն Ակնեցի Առաքել վարդապետի որ  
 « Եպիսկոպոս էր այն ատեն թուին Հայոց ՌՃՂ »

**ԵՐԿՐՈՒԴ ՆՈՐՈԳՈՒՄ**

« Անհաս պարզեօք և ողորմութեամբ՝ ան-  
 « բաւած որին շքնաղանման շքեղ շինեցան տաճարք  
 « երեքին ջանակուռ ճգամբ Յովհաննու արհի վե-  
 « րադիսողին՝ նպատիւք ջանից նիղար Յարու-  
 « թիւն պերճ ամիրային շնորհածիր հայցմամբք  
 « Ըրիւրնկալ յաղթող Ս. Նշանի . և նորոգեցան յար-

« կըք Մենաստանիս ի հիմանց կրկին թեակոխու-  
 « թեամբ կարագեա Րաբուն և անզակալին ար-  
 « դասեօք արդեանց Սերաստեան խմբից Արամեան  
 « Աղին . յամի Տեառն 1828 և թիւ Հայոց ՌՄ Հէ :

**ԺԸ.**

**ՄԻԱԲԱՆԻՑ ԵՒ ՈՒՒՏԱԻՈՐԱՑ ԹԱՂՆ**

Գաւթին մէջ հիւսիւսային դրսն արտաքին  
 ձախակողմը փոքրիկ սենեակ մը փայտաչէն , որոյ  
 դրան գիմացը երկու փայտակերտ դուռներ մէջէ  
 մէջ , որոնցմէ դուրս դէպ ի ձախ կողմ , ուխտա-  
 ւորաց թաղը կեղնէ՝ աջ կողմը ունենալով միաբա-  
 նից թաղը՝ մթին և անձուկ ճամբու մը մէջ , ուր  
 կը գտնուի և վանուց հաց եփելու փուռը . հացն՝  
 որ երեք օրը միանգամ կեփուի ոչ այնքան ճերմակ :  
 Առաջնորդարանը՝ որոյ դուռը այս փոռն ճիշտ  
 դիմացն է , կրկնայարկ է մեծ և փառաւոր սեն-  
 եակներով ընդարձակ և փայտաչէն . կիցն է փո-  
 խանորդարանը , որոյ դռան դէմ յանդիման նեղ  
 ճանապարհ մը՝ աջ կողմն ունենալով աղբուր մը  
 և քանի մը քայլ յառաջ ձախ դին մեծաչէն ա-  
 խոռ : Այս ախոռը այժմ անպէտ է . վասն զի ա-  
 նոր դէպ յարեւելք ունեցած փայտակերտ դռնէն

դուրս շինուած են մշակաց օթիւաններն , և վա-  
 նուց սեպհական նախընթաց ախոռները , որոյ կիցն  
 եղող պարսպի մեծ դռնէն անցուդարձ կրնեն մը-  
 շակք և նախիրք : Այս դռնէն դուրս շէնք մը՝  
 ուր զետեղեալ կան վանուց սայլերն և ձմրան հա-  
 մար վառելիք փայտերը : Միաբանից թաղին մէջ  
 կայ անոնց պիտոյիցն համար փոքրիկ խոհարան  
 մը և սեղանատուն , և քանի մը քայլ անդին սա-  
 լայատակ մը փոքրիկ :

Միաբանից թաղը կից է Առաջնորդարանին ,  
 և կը բաղկանայ տասն երեք փայտաչէն , այլ գե-  
 ղեցիկ խցերով : Ասկից զատ վանուց հիւսիսային  
 կողմը պարսպին վրայ ընդարձակ ամարանոց մը  
 շինուած է Պօլսոյ ձեւով , ուր ամառը Գեր, Առաջ-  
 նորդը կ'փոխադրուի : Միաբանից յիշեալ թաղը  
 կրկնայարկ է . ներքնայարկի հիւսիւսային կողմը  
 նեղ անցքի մը , վերի ծայրը , քաղցրահամաղբուր  
 մը կայ՝ որոյ կից կը գտնուի այն փայտաչէն սեն-  
 եակը՝ որ երբեմն դպրոց է : Այդ սենեակին առջևը  
 առազան մը կը գտնուի ցնցղաւոր , որ կը թուի թէ  
 արդեօք պարտիզի մը զարդն եղած ըլլայ , որոյ  
 այժմ չըջապատի փայտեայ վանդակներն կերեխն :  
 Ունի մտռանատուն մի փոխանորդարանի կից՝ տա-  
 բերկրեայ քարուկի շտեմարանի մը վրայ ուր կը  
 գրուին եղեր երբեմն գիւնոյ կարասներն , թէ և

այժմ գատարկ է . վասն զի վանուց նխթական կարողութիւնը նուազած է արդ : Վանուց տանիքները բաց ի ամարանոցէն , ինչպէս Ստիոյ ուրիշ գաւառներն՝ ձմեռ ատեն ձիւնով կը ծածկուին և հողով ծածկուած են՝ ի բանալ գարնան մեծ դժուարութեամբ զանոնք կը մաքրեն . ունի մէկ մեծ բողբոսակ գմբէթ քարուկեր և երեք ալ փոքր որ կը մինչդրով ծածկուած , և հազուագիւտ է Սերաստիոյ համար այս դիրքը :

**ԺԹ.**

**ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ**

**ԵՒ ՊԱՐՏԻՉ ՎԱՆՈՒՅ**

Ս. Նշան վանուց հարաւային արևելեան կողմը պարսպին կից բաւական մեծ կակ գերեզմանատուն մի կայ պարսպապատ՝ ուր կը գտնուի զերատենօք , Գետագարձի գերեզմանը և հանդուցեալ Յովհաննէս Եպիսկոպոս զայն փոխադրած է վանուց Ս. Սատուածածնայ տաճարը : Անանիա կաթուղիկոսի գերեզմանն ալ նոյն գերեզմանատան մէջնէ : Կան նաև Եպիսկոպոսայ և վարդապետաց գերեզմաններ , և երկու դռներ որոնց մէկը վանուց պարտիզին մէջ , և երկրորդը Սրեմոեան

կողմը հրապարակի վրայ կը բացուի : Սյս վերջին դռնէն յարևմուտս ուխտաւորաց դրանը գիւմայ ( պահաճագ ) ըսուած զբոսավայր մը կը տեսնուի կիսով չափ սրմապատ , ուր երբեմն միաբանութիւնը կ'ըբօսնու : Սյս անունը դրուած է . վասն զի բարձրագիւր բլլարով թէ՛ քաղաքը և թէ շրջակայ լեռներ և ձորեր ակնյայտի կերևին : Քովըն է պարսպապատ պարտէզը որ խիստ ընդարձակ գլխը մը ունի ի հարաւ և ի հիւսիս , և որուն մէջ դէպ ի հիւսիս պարսպին մօտ գետնէն ջուր կը բղխէ որ կըսուի Լոյսաղբիւր : Սյս պարսպը շինուած է ներկայ Գեր. Առաջնորդ Ս. Հօր ձեռամբ 60,000 դահեկան ծախս ընելով , ասկից 16 կամ 17 տարի առաջ : Եթէ օրինաւորապէս դարմանուի պարտէզը՝ մեծ արդիւնք կը գոյանայ վանուց համար . բայց ինչ օգուտ որ այժմ իւր մէջ ունեցած ( ճէրիէն ) միայն տարին 15-20 հազար դահեկան եկամուտ կը բերէ միջին հաշուով : Ունի նաև արմատաներկ , ( Քօօպօյս ) ըսուած ներկը , որ թէպէտ դարմանուած ատեն տարին 15 հազար դահեկան հասոյթ կրնայ բերել , բայց անփոյթ և անհոգ՝ գրեթէ բնաւ արդիւնք չունի : Նոյն պարտէզին մէջ կան ուրիշ պտղատու ծառեր ալ , և ունի միաբանից պիտոյիցն համար ալ բանջարեղէններ որ Ս. Նշան վանուց կը վերաբերին :

Ի.

Ս. ՆՆԱՆ ՎԱՆՈՒՑ ԵՎԱՄԱՌՏԸ

Ոչ միայն մերձակայ, այլ և Անապատ մե-  
 նաստանի քառասուն կտորէն աւելի արտերն ալ  
 հաւասար մէկ տեղ հաշուելով հարիւր հազար  
 դահեկան արժէք ունին: Այդ արտերն վաթսուն  
 դու սերմ ցորեան և գարի կրնան ընդունիլ, սա-  
 կայն ամեն տարի փոխնի փոխը արտերուն կէսը կը  
 ցանեն և միւս կէսը անհերկ կը թողուն, տեսակ  
 մը հողագործական նախապաշարմամբ: Բայց և  
 այնպէս արատադրութիւնը հարիւր գուռն պակաս  
 չըլլար, որոյ խրաքանչխր գոռը կը կշռէ հարիւր  
 յիսուն քաշ:

Այս եկամտէն զատ Սերաստիոյ ընդհանուր  
 վիճակէն յիսուն գոռ գրեթէ պողի կուգայ թէ  
 ցորեան և թէ գարի, թէև ոմանք զիւզորայք ցո-  
 րենի կամ գարոյ փոխանակ դրամ կը նուիրեն:

Այս չէ միայն աղբիւր եկամտի Ս. Նշան վա-  
 նուց, քաղաքին մէջ սեպհական տասն կրպակ ու-  
 նի որոնց տարեկան հասոյթն է գրեթէ 20 հա-  
 դար դահեկանէն աւելի. վանուց արևմտեան կող-  
 մը ջաղացք մը՝ որ վարձու կը արուի ամեն տարի.  
 Ազգային Նշանադրութեան և հարսնախօսու-

թեան հասոյթներ. որք վանական գանձուն կը  
 պատկանին, Ծննդեան և Զատիկական տնօրհնէից  
 նուէրք. ամառները ժողովրդոց յաճախմանէն գու-  
 յացած «Ժամուց» ի ևն. պարզէներ, որք տասնը  
 հինգ հազարի կը հասնին: Այս ամէնը վերջապէս  
 կը հաւաստեն, թէ՛ Ս. Նշան վանքը տարեկան մեծ  
 գումար մը ունի գանձելի, որք կը բազմապատ-  
 կին՝ եթէ ջանք պազմապատկին:

Բայ ի ասոնցմէ հարիւրի չափ ոչխար, 20ի  
 չափ կթան կով, և ութն զոյգ ալ եղներ և գու-  
 մէշներ ունի: Ս. Նշան վանուց ծախսերն այնչափ  
 կրցայ ամփոփել. այսինքն վանքը ունի տասնի չափ  
 հողագործ մշակ, հացագործ մը, պարտիկայան մը,  
 և երկու պառաւ սնտեսուհիներ տարեկան վար-  
 ձուք: Ասկէց առաջ միաբանից ուտելիքն ու վա-  
 ուելիքն թէպէտ ձրի կը հողացուին եղեր վիճա-  
 կի ժողովրդներէն, բայց այժմ դադրած է այդ  
 սուրբը, և վանքին արկղը կը հողայ զանոնք:  
 Նոյնպէս վանական եկամտի գանձէն կը հողացու-  
 ին քաղաքի Առաջնորդարանին ամբողջ ծախքերը:  
 Եւ քանզի Սերաստիա գաւառագլուխ է և կուտա-  
 կալ կը նստի հոն, ուստի նոյն կուտակութեան  
 ներքե գտնուած ուրիշ Առաջնորդանիստ գաւառ-  
 ներէ հասած քաղաքականապէս կարգադրու-  
 թեան արժանի գործերուն ալ, Սերաստիոյ առաջ-

նորդը պարտաւորեալ է միջամտել և անոնց հա-  
մար ալ մասնաւոր ծախքերը ընել, զորս նայեալէս  
վանական պրկզը կը վճարէ : Այս անուղղակի  
ծախքերն՝ լրի վանուց գանձային ելից որքանու-  
թիւնը գիտնալու արդեւք կըլլան : Այս ընթաց-  
քով ոչ դրամ կաւելնայ վանուց արկղին մէջ, և ոչ  
ժառանգաւորաց զպրոց կը բացուի . մինչև ցարդ  
այդ պիտի վարժարանի մը չը հաստատուելուն պատ-  
ճառն ալ այս է եղած : Եթէ նոյն վանքը օրինա-  
ւոր վանական խորհուրդ ունենայ, որ ամենայն  
անձնուիրութեամբ և գործունէութեամբ՝ վանուց  
բարեկարգութեան և ժողովրդոց բարոյական վի-  
ճակի զարգացման վրայ խորհելով, և վանուց  
ծախքը սահմանափակելով գործ տեսնել յօժարի,  
Ս. Նշան վանքը քսան աղայէ բաղկացեալ ժառան-  
գաւորաց օրինաւոր վարժարան մը կրնայ անտե-  
սել : Այն ատեն թէմական ժողովուրդք ժրջան  
միաբանութեան վաստակոց արդիւնքը նկատելով  
պիտի փութան անշուշտ ձեռն օժանդակութեան  
կարկառել և առատանալ ի տուրս : Ս. Նշան վա-  
նուց մէջ բաց ի Գեր. Առաջնորդէն չորս վարդա-  
պետք կան : որք են՝ Արժ. Տ. Յակոբ վարդապետ  
Ակնեցի . Տ. Յովհաննէս վարդապետ Մեծիեան,  
Սեբաստացի, Տ. Ստեփան վարդապետ Վանեցի  
«չուչտակ» և Տ. Մովսէս վարդապետ Զարագիւղցի :

Ասոնց մէջէն երկուքը միայն բնիկ միաբան են վա-  
նուց՝ Տ. Յակոբ և Տ. Յովհաննէս վարդապետները .  
Տ. Մովսէս վարդապետ Լիմ անապատէն, ուր տա-  
սը տարի մնալէն ետքը ձեռնադրուած է Գեր. Տ.  
Յակոբ Եպիսկոպոսէն, և Տ. Ստեփան վարդապետ  
թէպէտ քահանայութեան կարգը, Սեբաստիոյ  
նախկին առաջնորդէն է առած, բայց այրի մնա-  
լէն յետոյ Լիմ անապատի մէջ ընդուներէ վեղարը :  
Վանուց ներքին և արտաքին կառավարու-  
թիւնը այս չորս վարդապետաց ձեռքն է : Թէպէտ  
Գեր. Առաջնորդ Ս. Հայրը Վանորէից բարեկարգու-  
թեան փախաբող և ասոնց նիւթապէս և բարոյա-  
պէս յառաջադիմութեան նախանձախնդիր է, և  
վարժարանի բացման մը՝ անձկայրեայ՝ միշտ կ'ա-  
ռաջարկէ ում և պետք է, բայց իրմէ զատ երբեք  
հոգ տանող չի կայ . . . Առաջնորդ զբաղեալ բազ-  
մաթիւ գործերով՝ որք իւր պաշտաման կը պատ-  
կանին, առաւօտ և երեկոյ Վանքէն քաղաք, և  
քաղաքէն Վանք, երթևեկելու կառավարական ժո-  
ղովոյ նիստերուն միշտ ներկայ գտնուելու բռնա-  
դատեալ . ուստի և Վանուց բարեկարգութիւնը՝  
յիշեալ արժանապատիւ վարդապետներէն կ'սպաս-  
ուի, որք նիւթական միջոցներն պատրաստ ունե-  
նալով՝ իրենք միայն բարոյականը պիտի հիմնեն .  
եթէ ասոր մէջ պակաս կը գործեն կամ բնաւ չեն

դործեր՝ պատասխանատու են և պիտի մնան առաջի Աստուծոյ, Եկեղեցւոյ և Ազգին :

Վանուց մէջ միայն հինգ տղայք կան՝ զանազան հասակէ որք և անբարեկարգ են, վարժիչ և դաստիարակ չունին, անմաքուր զգեստներ կը հագնին՝ զորս իրենք իրենց տունէն բերելու պարտաւոր են, միաբանից հետ ճաշել արդիլուած է նոցա . խտիր կայ այս տղայոց և վանական պաշտօնէից մէջ անգամ :

Ո՛ր և է անկարգ բանի մը համար բողոքած ատեննին կը յանդիմանուին . Ազգին ստակը Ազգէն կը խնայուի : Կեր. Առաջնորդը ամէն ատեն վանուց թէ ներքին և թէ արտաքին կառավարութեան և բարեկարգութեան և թէ ուտելեաց և ազանելեաց մասին առաջարկութիւններ կընէ և կատիպէ իսկ, սակայն կարեւորութիւն չի տրուիր, և միաբանք իրենց անհոգ կենցաղաւարութեան մէջ կը յարատեւեն . ախո՛ս . . . :

Այս սողերը գրեցի՝ ոչ թէ իբրև դանդաղ Արժ. միաբան վարդապետ եղբարց դէմ, այլ իմ որտիա ցաւն է՝ զոր զգացմամբ կը յայտնեմ հրապարակաւ . քանզի գիտեմ թէ այսպիսի վանքերը իրենց վիճակի ժողովրդոց համար շինութեան, բարեկարգութեան և գիտութեան, մէկ մէկ ազբիւրներ կընան ըլլալ եթէ բարևոք մատակարարուին :

Վանուց մէջ Եկեղեցական հանապաղօրեայ ժամերդութիւնը, Արժ. միաբան վարդապետաց ձեռօք կը կատարուի, բայց Շարաթ և շատ անգամ կիւրակի օրեր քաղքէն Քահանայ կուգայ Ս. Պատարագ մատուցանելու . միայն Ս. Զատիկի և Մընընդեան և ուրիշ Տաղաւարաց օրեր, և երբեմն իսկ ժողովրդոց խուռն բազմութեան ատեն վարդապետք կը Պատարագեն կարգաւ :

Վանքը ունի իրեն համար Եպիսկոպոսական և վարդապետական ծանրագին զգեստներ, Եկեղեցական արծաթի սրբազան անօթներ, չափէն աւելի պղնձեղէններ և կահ կարասիք, զորս միլստ միոջէ նշանակել աւելորդ կը համարիմ : Վանուց թանգարանը ճոխ է, ուր կը գտնուի 296 կտոր ոսկեալ գրեանք և 47էն աւելի ձեռագիր, որ բընաւ լոյս չեն տեսած :

**ԻԱ.**

**Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ**

Սերաստիոյ քաղաքէն վեց ժամ հեռու դէպ ՚ի Արևելեան հարաւ լեռան մը ստորոտը բարձր բլրոյ մը վրայ հիմնուած է՝ այդ Ս. Հրեշտակապետի Վանքը որ իւր առջին ընդարձակ դաշտ մը ունի խիստ զուարճալի հաւասարագիր դրեթէ, Ս.

Նշան վանուց : Անոր վանահայրը առժամանակեայ պաշտօնով Ս. Նշան վանքէն կերթայ, վասն զի նորա իրաւասութեան ներքեւ է :

Վանահայրն ինձ պատմեց թէ՛ հարիւր յիսուն տարուան ձեռագիր մատեան մը ձեռքն անցնելով՝ կարդացած է անոր մէջ, որ Ս. Հրեշտակապետ վանուց մատրան հիմնադրութիւնն ու շինութիւնը, Մեծին Ներսէսի ձեռքն են եղած. սակայն որովհետեւ նոյն վանքն մէկ քանի անգամ նորոգուած է՝ հիմնարկութեան թուականն անյայտ է եղած :

Ձեռագիր մագաղաթի վրայ Աստուածաշունչ մի տեսայ՝ յորում նշանակուած էին Սերաստիոյ բաղմահայ ժամանակէն Առաջնորդական պաշտօն վարող Եպիսկոպոսաց անուանքն, զորս ըստ պատշաճին թուած եմ մի առ մի տեղեկագրիս մէջ :

Վանքը պարսպապատ է և ունի երկու դռներ, որոց մին յՍրբեմուտս կը բացուի՝ ուրկից ուխտաւորք կ'երթևեկեն, իսկ միւսը 'ի հիւսիս՝ ուստի մշակները ելու մուտ կընեն սայլերով և նախրով : Եկեղեցին շինուած է վանուց բակին կեդրոնը, գաւթին գուռը ուխտաւորաց ելու մուտի դրան ճիշտ գիմացն է : Գաւթի մը՝ յորում երեք Եկեղեցիներ կը պարունակուին, մեջ տեղինը՝ յանուն Ս. Հրեշտակապետի, աջ կողմի յանուն Ս. Կարապե-

տի, և ձախ կողմընը յանուն Ս. Աստուածածնայ, հոյակապ և փառաւոր. բայց ասոնց մէջ խաչածեղ մբէթաւոր և սքանչելի կերտուած Ս. Աստուածածնի Տաճարն է, որ ունի Աւագ Խորան մը՝ երկու կողմէն մէկ մէկ փոքրիկ մատուռներով, Ս. Աստուածածնի և Սրբոյն Ստեփաննոսի :

Վանքն ունի բաւական ծանրագին զգեստներ և Սրբազան անօթներ և շատ մը պղնձեղէններ : Երեսնի չափ փայտակերտ խցեր կան միաբանից և ուխտաւորաց համար, և մէկ Առաջնորդարան երկու սենեակներէ բաղկացեալ, խոհանոց և փուռ մը՝ ուր հաց կ'եփուի, անտեսատուն և լուացարան մը : Տիրացու մը իբրև Տեսուչ կը կառավարէ այդ վանքը՝ որ ունի բաւական ոչխար և կովեր, տասն եղ՝ որոց աղագաւ հինգ մշակ վարձած է, երեսունի չափ արտեր՝ որոցմէ ամեն տարի — եթէ ցանուելու ըլլան — վաթսուն գուռն աւելի ցորեան և գարի կը համբարէ :

Ոչ ժամերգութիւն կ'ըլլայ հոն միշտ և ոչ Ս. Պատարագ կը մատչի, զի ո՛չ Քահանայ կայ և ո՛չ վարդապետ, իբրև ամայի ինչ վայր՝ այնպէս լըքեալ կը մնայ այս վանքը, որ կրնար արդիւնաւորիլ, եթէ բարուք Տեսութեան մը ներքեւ ըլլար, միայն ամառները զրօտավայր կը հանդիսանայ ուխտաւոր ժողովրդոց : Վանքը ունի իւր կից գէպ յԱ-

րևելեան հարաւ՝ Թուղթասար անուն Հայու մի գիւղ : Այս գիւղի Քահանայն է , որ ամառը երբեմն ժամերգութիւն կը կատարէ կամ Ս. Պատարագ կը մատուցանէ , երբ ուխտաւորք յաճախեն :

**ԻՒ.**

**ՍԵՒԱՍՏԻԱ**

Սըվազ (1) նահանգը Տաճկաստանի մէկ կուսակալութիւնն է՝ կեսարիա , Տիվրիկ , Չանդորը , և Շապլին Գարահիսար քաղաքաց մէջ տեղը մայրաքաղաք մը : Այս նահանգին արևմտեան կողմի մէկ մասը ապառաժուտ է՝ և անբոյս , իսկ միւս մասը անտառու՝ Մայրի ծառերով պատած , որ Չալալի կըսուի : Հիւսիսային կողմը շատ բարեբեր է դաշտերուն ու ձորերուն մէջ : Բերքն են ցորեն , գարի , արօտ , բամպակ , մետաքս , կտաւատ , ճէհրի , ներկարմատ (քէօքպոյա) ճակնդեղ , կորեկ , հաճար , և վիռ : Այս նահանգը բաժնուած է եօթը գաւառներու որք են , Սըվազ , Ամասիա , Չօրուժ , Ճանիկ , Տիվրիկ , Արապկիր և Եօզղաս : Այս նահանգը կը պատասխանէ Գալասի և Պօնտոսի մեծ մասերուն , նախ Հայաստանի մէկ փոքրիկ մասին (փոքր Հայք) Ալիս գետէն Գըլըւ Ըրճա՝ մէկ ու կէս ժամ հեռի :

(1) Սըվազ սեւաստոսի աղաւաղեալն է , որ Յունական բառ մի է :

Մերասախա քաղաքը Ս. Նշան վանքէն ամբողջապէս կընշմարուի , վասն զի կէս ժամու հալիւ հեռաւորութիւն տնի : Բաղաք մանկելու դիւրին երեք ճանապարհներ կան դէպ ի հիւսիս բացուած , որք ամառնային են : Առաջինը կըսուի Պալաս Ղուֆալի , այս անունը ստացած է այն գոմէն՝ ուր ժամանակաւ գոմէշներու ձագերը կը պահուին եղեր , և թէ հիմա գոմ չկայ , բայց ճամբուն այդ անունը չէ կորսուած : Ս. Նշան վանուց պարտիզի արևմուտեան կողմի պարսպին առջևէն կանցնի և ուղղակի քաղաք կերթայ : Այդ ճամբուն եղերքը խրամ մը բացուած է ուրկէց անցնելով « Պէհթիմ վաշա » անուն ջուրը քաղաք կը հոսէ : Երկրորդն է միջին ճանապարհը ( Պէնկիկէր զուգապի ) , որոյ նշանակութիւնը գիտող բնաւ չկայ , մէջ տեղէն յասակ ջուր մի կանցնի որ քաղաքին ջաղացները կը դարձնէ , նաև տաճիկ ժողովրդոց լուացման կը ծառայէ , և ուղղակի քաղաք հոսելով « մունտառ դէս » անունը կընդունի , և տպա Ալիս գէտը կը թափի : Երրորդ ճանապարհն է Գաւաս Էաղլու բաւածը՝ որ արևմտեան կողմի կիսայ , Ս. Նշան վանքի հիւսիսային կողմէն ուղղակի այս ճամբան մաներն տեղը գետնէն ջուր մը կը բղխի՝ որ ոչ այնչափ անոց է : Այս աղբիւրէն քանի մը քայլ յառաջ է պողպատէն բաւած կիրճը , առջև մունտառ գետը լիճ մը կը

ձևացրնէ, նախ քարաշէն և այժմ փայտեայ կա-  
մուրջ մը երկու եզերքը իրարու հետ կը միացրնէ :

Կամրջին կից դէպ ի հարաւ ջրաղաց մը կայ,  
զոր նախ Տ. Սարգիս անուն քահանայ մը շինած է,  
և ապա Տաճիկը յափշտակէր են զայն : Ջրաղացքէն  
դէպ հարաւ կը հոսէ Կէֆէնէ : ըսուած ջուրը՝ զոր  
արդէն ուրիշ առթիւ յիշեցինք, հոս դէպ ի արեւ-  
մուտք բարձր բլուր մի կայ՝ որ կըսուի Սէհրաթ Թե-  
բեթ :

**Ի Գ.**

**ԳՍՎԱՔ ԵԱԶԸՍԸ**

Գեքէնէկ գետն կամուրջ մ'ունի, ուրկէց անդին  
վարդապետի աղբիւր, ըսուած ջուրն է՝ ոչ այնչափ  
քաղցրահամ, անկից անդին Գավաթ Եաղըը ըսուած  
դաշտը՝ որ ըստ Հայոց կաղամախեաց դաշտ կան-  
ուանի : Այս դաշտը բարձր դիրք մ'ունի կանան-  
չաղեղ, լայն և ընդարձակ և խիստ գեղեցիկ :  
Դաշտին մէջ տեղը՝ իբրև յաղթութեան կոթող մար-  
դաշտի քար մը կանգնած կայ, հոն ի զէն կը մար-  
դուին Տաճիկական զօրքերն ամառներն ամեն առա-  
ւօտ : Սաուդիս զուարճալի տեսարան մը կը ներ-  
կայացնէ սոյն դաշտը, քանդի քաղաքին մեծ մասը,  
լեռներ, բլուրներ, հովիտներ, և Ագիս դէտը հա-

մայնդամայն իւր մէջ կը բովանդակէ : Թէ ինչո՞ւ  
համար այդ զմայելի տեղը « Գաւազ Եաղըը »  
կըսուի՝ այս է աւանդութիւնը, թէ հին ատենը  
Մայրագամ լեռնէն և իւր արուարձաններէն մինչև  
այդ դաշտը կաղամախի ծառերով պատած է եղբր  
մէկ օր հեռաւորութեամբ : սակայն հետ զհետէ  
կտրուելով այդ ծառերը՝ անսպաս դարձեր է այժմ  
այդ դաշտը, և ամենափոքրիկ ծառ մը անգամ  
չունի :

Նոյն դաշտին եզերքը դէպ ի Արեւելք Պօլսոյ  
ձևով կրկնացարկ պատշգամ մը կայ շինուած բարձր  
և ընդարձակ՝ իւր ստորոտն ունենալով մարմարոն-  
եայ աղբիւր մի քաղցրահամ ջրոյ, զոր ասկէց 29  
տարի առաջ շինած է, Կիրիակի օղը - Մէհմեթ Բաշա  
անուն մէկը : Այս պատշգամին կարգը դէպ ի Հա-  
րաւ քաղմութիւ այլադգի գերեզմաններ կան հին  
առաջ քարուկիր և քմբէթածե շիրիմներով :  
Հաս են կրօնն սրբոց Եւտրատիոսեանց դամբան-  
ներն, որ հասարակաց չեն մատչելի, հինգ տափա-  
րակ տապանաքարեր Քրիստոնէից գերեզմանաց  
նման յարեւելք կոյս :

Կարգ մը ուռի ծառերու մէջէն օճապտոյտ  
շաւիզ մը քաղաքին վերի ծայրէն Սեբաստիա կա-  
ուաջնորդ է, որոյ ի մուտս դէպ ի Արեւմուտք աջ  
կողմը, միայարկ քարուկիր Զօրանոց մը կը տես-

նուի միջակ մեծութեամբ : ճախ կողմը մարմարոն-  
 եոյ աղբիւր մը քաղցրահամ շրոյ . քիչ մ'ալ ան-  
 դին կառուցեալ է , կառավարութեան ազարանքը  
 բայնատարը՝ ուր նահանգին կռտակալը կը բնակի ,  
 և ունի նորահաստատ ազարան մը ընդ անօրէնու-  
 թեամբ **Մեծ** . Անդրանիկ էփէնտի վարդանեանի որ  
 Սրբազ անուն Տաճկերէն գաւառական թերթին  
 խմբագրութիւնը կընէ :

Ազարանից առջևը ընդարձակ հրապարակ մի  
 կայ՝ ուր ուրբաթ օր առաւօտները տօնախմբան  
 կըլլայ զանազան մանր մանր պիտոյից :

Սրբազ բերդաքաղաք մ'է :

Սրբազ սրբապատաս չէ , բայց տեղ տեղ կը  
 տեսնուին հին պարապի մը ինկած բեկորներ որով  
 կը հասկցուի , թէ ի հնումն պարսպապատ է եղեր ,  
 զոր 1 Էնկի իմուր 1400 ին կործաներ է յեա առժամ  
 քաղաքին : Արեւմտեան ծայրն է կեստրիս ըսուած  
 դուռը՝ որ ցարդ կը պահէ իւր հին անունը . թէև  
 ոչ պարիսպ կայ այժմ և ոչ դուռ :

**ԻԳ.**

**Բ Ե Ր Դ Ք**

Սերաստիոյ քաղաքին մէջ երկու բերդեր կան՝  
 որոյ մէկը Թօբրա-գալու ըսուածը խի միւսը Թօբ-  
 րա-գալէ՝ որ վերի բերդ ալ կըսուի . բայց երկուքն

ալ կործանեալ են : Թօբրաք-դարու ըսուած բերդը  
 միւսէն շատ հին է : Սերաստիս հին ատենը « Գա-  
 բրէ » կըսուէր՝ որ խալէքէն լեզուա տեղ դըս-  
 նալ կամ տեղ առնուլ ըսել է : Ասկից հազար տար-  
 ւոյ չափ յառաջ ճէնտիացիկ Հատիմ քաղաքէն նոյն  
 քաղաքը արչաւելով կը պտտեբաղմին Յունաց հեա  
 և անոնց յալթելով կը հարատակեն զանանք : Մեր  
 ազդային պատմութիւնը կաւանդէ թէ՛ մեր Տիգ-  
 բան Բ . Արչակունի արքային քեռայր և Պոնտոսի  
 թագաւոր Միհրդատ այս քաղաքին մէջ Հատիմա-  
 յեցոց հեա պատերազմ մըած է և հաս բերդ կա-  
 ուցած . շատ հաւանական է որ Միհրդատի շե-  
 նածը վերոյիշեալ Թօբրաք-դարու ըսուած բերդն  
 ըլլայ . Յոյեր ինչ ատեն վերասին տիրեցին քա-  
 ղաքին , ասանց մէջէն Սերաստու և Սեփաստոս ա-  
 նուն արքայապատիւ իշխան մը այդ վերի բերդ-  
 ըսուած բարձր հողաբլուրի վրայ բերդեր և եկե-  
 ղեցիներ՝ որք կործանած են այժմ , և միայն խա-  
 ջանիչներէն կը յայտնուին , շինել տարով քաղաքը  
 իւր անուամբը կանուանէ Սերաստիս , որ ազա-  
 տաճիկ հնչմամբ Սերաստ կամ Սրբազ կը կոչուի :

Գարձեալ նոյն վերի բերդին վրայ կայ հարիւր  
 ու թատնի չափ Տաճկաց տուն , միեւոյն բլուրի դա-  
 դալթը փայտաշէն աշտարակի ձեով ժամացոյց մը  
 որուն չորս կողմը քառասուն քայլ է . հնչուած ժա-

մանակ քաղաքին ընդհանուր բնակիչք կը լսեն ,  
բլուրը բաւական բարձրութիւն ունի , որուն վրա-  
յէն անձ մը կարող է ամբողջ քաղաքին տարածու-  
թիւնը տեսնել . քաղաքին երկայնութիւնը Արև-  
մուտքէն սկսեալ դէպ ի Արևելք երկնցած է , իսկ  
լայնութիւնը ոչ այնչափ :

**ԻԵ.**

**ՍԵՐԱՍՏԻՈՅ ՀՆՈՒԹԻՒՆԸ**

Սըվազ նախ Պոնտոսի վիճակն էր ետքը կա-  
պադովիկոյ վիճակն եղաւ ի վերջն ալ Հայոց Մայ-  
րաքաղաք : Գրիստոսէ 74 տարի առաջ Միհրդատ  
Հռովմայեցոց զօրապետ Լուկուլլոսի հետ պատե-  
րազմ՝ բրած ատեն Սեբաստիոյ , քաղաքը Հռով-  
մայեցոց անցաւ . ապա երկու անգամ Հայոց և  
Հռովմայեցոց փոխադարձաբար անցնելէն յետոյ  
վերջապէս վերջնոյ ձեռքը մնաց . թէև այս մասին  
պատմիչներն կը տարբերին իրարմէ , շատերն այս  
յաղթանակներն Միհրդատոյ կուտան և ոմանք ալ  
Պոնպէոսի կ'անփոհականեն . կը պատմուի թէ Պոնտոսի  
Բոլէմոն Թագաւորին մահուանէն ետքը . իւր այրի  
կինը Բիթոս Թորիս Գրիստոսի ժամանակէն այս քա-

ղաքին վերստին յառաջին անուն Սեբաստիա Յգու-  
րուս փոխարկեց ի պատիւ Հռովմէական կայսերաց :  
Տաճկաց 799 թուականին Սուլթան Օմանի՝ օրով  
Տաճիկները գրաւեցին Սըվազը , Սուլթան Պայաշի  
Երբուրըմի օրովը՝ որ Պրուսա կը նստէր , որդին է-  
Ռի Սիւլէյման իբրև իշխան՝ կուսակալ կը գտնուէր  
ի Սեբաստիա : Լէնկթիմուր տասն և ութը օր քա-  
ղաքը պաշարելէն զկնի՝ սուտ երդմամբ տիրեց  
բերդին . իւր աշխարհաւէր ձեռքը ազատ չը թո-  
ղուց այս քաղաքն ալ , և մերկացոյց զանի տասնև  
հինգ դարուն սկիզբներն իւր գեղեցկութիւններէն  
և այն հոյակապ շէնքերէն՝ որոնք Սենեքերիմ Հա-  
յոյ արքային ձեռակերաններն էին :

ԻՌ Սիւլէյման , գահը բարձրանալէն 14 տարի  
ետքը գերի ինկաւ Լէնկթիմուրի ձեռքը ու մե-  
ռաւ , իսկ իւր յաջորդը Զեյթուի Սուլթան Մեհմեդ  
կրկին ետ առաւ Լէնկթիմուրէն գրաւելով ամէն  
քաղաքներն , ինչպէս նաև Սըվազ 117 թուակա-  
նին Տաճկաց , յորմէ յետէ մինչև ցայսօր , այսինքն  
877 տարիէ ի վեր Օսմ , կայսրութեան ձեռքն է :



Ի. 2.

### ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

#### ՔԱՅԲԱՍՏԻԱ

Բազրատունեաց տէրութեան վերջերը, երբ Հայաստան թշնամիներէ տոնակոխ կըլլար, շատ Հայեր թողելով իրենց երկիրը՝ եկան փոքր Ասիոյ մէջ բնակեցան՝ զոր Յունաց ձեռքն էր: Տասն և մէկ դարուն վերջերը վասպուրական աշխարհի Սենեքերիմ թագաւորը բոլոր իւր ժողովուրդովը Սերաստիա քաղաքին կողմերը եկաւ բնակեցաւ՝ Յունաց կայսեր թողլով վասպուրականը, զոր կը յիշէ պատմութիւնը «Սերաստիա Մայրաքաղաք յերկրորդ Հայկ լինի արքայանիստ Արծրունի»:

Այս Մայրաքաղաքի Հիւսիսային կողմը Մայրողում ըստւած լերանց ասդին է, որ Արեւելքէն մինչև Արեւմուտ պատած է, կէս մղոն անդին Գարբաշար ըստւած ահագին բարձր լեռն է՝ որ քաղաքին Հարաւային կողմը կը պատէ. լեռան վրայ Քէօթ օղլու անուն աղբիւր մը կայ անուշահամ. լեռան Արեւմտեան կողմը Թալլը բերէ ըստւած ձորը՝ որ Կեսարիա երթալիք ճանապարհն է: Գարբաշար լեռան ստորտար չուրջանակի ամխահանքեր

կան, զորս եթէ ձեռք բերելը հնար լինի՝ մեծ շահ է տէրութեան: Մայրաղում և Գարբաշար կրկին լերանց մէջ խիստ ընդարձակ դաշտ մի տարածուած է՝ յորում է կանգեալ Սերաստիա իւր դիւղերովը և Ալիա գէտը:

Սերաստիա քաղաքը իր առաջին հիմնարկութեան առհմանէն խախտած է դէպ յԱրեւելք. դիրքը երկար է և նեղ: Ս. Նշան վանուց մէջ գտած պատմութիւնս կրտէ թէ՝ Սերաստիա կը բաղկանայ եղեր վաթսուն հաղար Հայ աներէ, լայնադիր և խիստ ընդարձակ է եղեր քաղաքը, ինչպէս որ տեղ տեղ գեանի նշաններէն յայտնի է: Գաշապին է քաղաքին դիրքը և օդը առողջարար և խիստ ցուրտ: Կերևի թէ գեա քաղաքը չը հիմնարկուած ճահիճ մի է եղեր այդ վայրը. որովհետև ջրոս է և զարդարուած կաղամախի, ուռի և ուրիշ ծառերով:

Ի. 3.

### ՍԵՐԱՍՏԻՈՅ ՓՈՂՈՑՆԵՐՆ

Քաղաքը վաթսուն երկու փողոցներէ կը բաղկանայ որոց անուանքն են:

- Մարը—Շէյխ
- Պատիթխար—Պօստանը
- Օղրան—Չափուշ
- Ա. Ի—Պապա

Կէ յօճէ—Պօստանը թօրբաք—Գարու  
 Սաֆի—Հիւմմէթ Բէօհնէ—Ճիւլան  
 Հանի—Սայիթ խօճա—Իմամ  
 Խամուր—Բէսէն Փաղար—  
 Յիհրատ—Պօստանը Սիւրեանի—Մխլիմ  
 Շահ—Հիւսէին Պալար—Բաղար  
 Կէչի—Պուլան Սիւրեանի—Չիմնի  
 Չայիր—Աբար Բիւչիւք—Պէնկիլէք  
 Համամ—Աբար Բէօսէ տէտէի—Մխլիմ  
 Բիւչիւք—Մինարէ Պէզիրճի—Թարլար  
 Եահէա—Պէկ Ա.ք—Տէ յիրմէն  
 Ղալէ—Աբար Հիւլիւք—Լիւք  
 Պապը—Ղարսէրի Դաւուս—Գիւղ  
 Բուրու—Մէճիս Բէօսէ տէտէի—Չիմնի  
 Բիւչիւք—Բիլիսէ Ղայուշ—  
 Աղճէ—Պիւլքէ Չալիւէ—Ալի պոպու  
 Տէ յիրմէնճիլէր—Աբար Հանի—Սիւ պապա  
 Էօրթիւլիւ—Բունար Եէլուր—  
 Էճէ— Սրչայը—ճամի  
 Չալուշ—Պաշը Ղալէի—Աթիք  
 Օսման—Բաշա Շէ յիւ—Չօպան  
 Ճամիի—Բէպիր Կէօյ—Մէտրէտէ  
 Վէլէա—Պէկ թօրբաք—Գալէ  
 Փաշա—Պէկ ևն ևն  
 Ասոնցմէ դուրս են այն մեռապան փողօցիներն՝

որք դիտովին Տաճկաց կը պատկանին , և զանց լրբի նշանակել : Քաղաքին ժողովուրդը երեք աղգերէ կը բաղկանայ , Հայ , Յոյն և Տաճիկ . Հայք այժմ երկու հազար հինգ հարիւր տներէ կը կազմուին , որք համեմատական հաշուով տասն երեք հաղարէն աւելի ժողովուրդ կը բովանդակին . տուն մ'ալ թափառիկ Հայ կայ :

Հայերն բաժնուած են քառասուն երկու թաղերու մէջ՝ յորս Տաճկախառն կը ընակին . մնացեալներն լոկ Տաճկաց թաղեր են , ոսկայն աղքատ և անօգնական . Հայ ընտանիք առ ի չգոյէ նիւթական կարողութեան Տաճկական տուներու մէջ կը ընակին վարձու : Հայք մեծաւ մասամբ արհեստաւորք են՝ որոնց նկատմամբ ապա պիտի խօսիմ : Սակաւթիւ են հարուստք և վաճառականութիւնը մասնաւոր կերպով ծաղկած է Հայոց մէջ :

**ԻԸ.**

**ԵԿԵՂԵՑԻՔ ՍԵՐԱՍՏԻՈՅ**

Ղանքի մէջ տեսած ձեռագիր պատմութիւնս կըսէ թէ Սենեքերիմ արքային ժամանակ երկու հարիւր յիսունէն աւելի հոյակապ Եկեղեցիներ կան եզեր Սեբաստիոյ բուն իսկ քաղաքին մէջ , սակայն

այժմ չորս Եկեղեցիք միայն են՝ Ս. Աստուածածին ,  
Ս. Սարգիս , Ս. Մինաս և Ամենափրկիչ :

Ա. Մայր Եկեղեցի որ Ս. Աստուածածնայ ան-  
ուամբ կառուցեալ է , շուկայի մօտ խիստ փառա-  
ւոր և հոյակապ շէնք մը ունի , որ դաւիթը մեկ  
տեղ արտաքուստ չափերով ունի հարիւր ութսուն  
և չորս ոտք երկայնութիւն , եօթնասուն և հինգ  
ոտք լայնութիւն , քսան կանգուն բարձրութիւն ,  
բաց ի կաթուղիկէն՝ որ տասը կանգուն է : Եկեղե-  
ցին տասն երկու շքեղ կամարներու և վեց կճեայ  
սիւներու վրայ կանգնուած է : Սեան միոյն ճակատը  
Յունական յիշատակարանաւ երկաթէ հինաւուրց  
սև խաչ մը կայ՝ որ Սրապ խաչ կըսուի և որուն հա-  
մար հրաշագործ է կըսեն : Տասներկու լուսամուտ-  
ներով շքնապաշէն բոլորաձև գմբէթ մ'ունի եր-  
կաթեայ վանդակներով պատած , և վեց դանաչափ  
բարձրութեամբ պատուական մարմար քարերով  
շինուած բեմ մը երեք խորաններով :

Աւագ խորանի խաչկայը տակաւին չէ շինուած  
աջ կողմնը սակեղօժ է , յանուն Ս. Կուսաւորչի իսկ  
ձախ կողմնը սպիտականերկ յանուն Ս. Կարապե-  
տի : Սեղաններու կարգն է երկու քարակիր պա-  
հարանները՝ յանուն Սրբոյն Թաղէտի և Գլխաղիք  
Յակովբայ Առաքելոյն : Ի Հիւսիս և Ի Հարաւ կող-  
մերը գեմ առ գեմ փայտաշէն և գմբէթաղարդ

երկու շքեղ ամպխոններ՝ Եկեղեցւոյ պատերուն մէ-  
ջն ունին իրենց աստիճանները , կանանց սեպհա-  
կան մեծ լայն վերնատունը յիւր սովորական տե-  
ղին՝ յորում աջ և ձախ երկու սեղաններ հաս-  
տատուած կան յանուն Բառասնից Մանկանց և  
Հրեշտակապետի : Գաւիթը լայն է և նեղ , յաջ և  
յահեակ դէպ յՍրեւելը երկու փոքրիկ սեղաններ  
կան՝ յանուն Սրբոյն Գէորգայ և Սրբոյն Թորոսի :  
Բանկայն ալ նոյն գաւթին մէջն է արակափեղք :

**ԻԹ.**

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ**

Մայր Եկեղեցին ունի չորս դռներ՝ երկուքը  
ի Հարաւ և Ի Հիւսիս՝ ամպխոններու ներքև , եր-  
րորդն է Տաճարի դռուը՝ որոյ վրայ փորագրեալ է  
Եկեղեցւոյ շինութեան յիշատակարանը , որ հե-  
տեւեալն է :

« Արև փառաց Փրկչին ինամոց տունս փայլի ,  
Թագ պարծանաց Սղղիս Հայոց արձան կանգնի ,  
Չքնաղ Տաճար յանուն Սրբոյ Աստուածածնի ,  
Ռրպէս փիւնիկ նոր ի նորոյ հաստատ հիմնի ,  
Աքանջելի ձեռաց նիւթից զք ես երկինի ,  
Աչօք մտոց Սուրբ Հաւատոյ սաս նշմարի :

Ի դատողութեան արթուն հովուին կարապետի,  
Էվերեկցի արիաճան Վարդապետի,

Սատարութեամբ փութաց գոյից հողեծնից,  
Մեծ իշխանաց և էննաֆից գլխաւորի,

Սեբաստիոյ արանց կանանց եկաց և բնակի,  
Փոխան վարձուց պարզ և առջի անհուն բարի» :

« Թիւ յամի Տեառն 1856. Թիւ Հայոց 1303 ին է  
կառուցեալ սոյն հոյակապ Եկեղեցին » :

Տաճարի դրան պատուական սեմը կճեայ քա-  
րերով շինել տուող բարերարին յիշատակարանն  
ալ հետեւեալն է .

- « Աւագ դուռս Սրբոյ Տաճարին ,
- Խասապապչեան մեծ իշխանին ,
- Սատուածատրոյ և Մարթային ,
- Եւ կողակցւոյն Մ. Եուշանին .
- Է յիշատակ Մ. Յակոբեանին ,
- Վասն հողւոց իւր ծնողին ,
- Եւ եղբօրն իսկ Ներսէսին ,
- Եւ համայնից զարմից նորին » :

Չորրորդ դուռն է գաւթին արտաքին դուռը՝  
որ Եկեղեցւոյ բակը կը հանէ : Բակին Արեւելեան  
կողմը Աւագ Սեղանի ետեւը փոքրիկ գերեզմանա-  
տուն մի կայ փայտեայ վանդակներով շրջապատ  
ուած , և զայն արտաքին հրատարակէն անջատող

պարսպին երեսը երեսուն և հինգ հաս մեծ և վաքը  
վիմափորիտաչեր կան հինօրեայ սրտին մէջ ազուց-  
եալ :

Նոյն գերեզմանատան մէջ փոքր գերեզմանա-  
քար մը տեսայ կիսակոտոր՝ որ Հայու տան հիմանց  
տակէն էր ելած սա գրուածով .

« Քրիստոս Որդի Աստուծոյ՝ ողորմեա թուոն-  
կայ ծառայի քում » : Չէ հասկցուած որ այս թուո-  
նիկն օվ է , որովհետեւ քարը կորսուած ըլլալուն՝  
դատմանագրին միւս մասը կորսուած էր :

Է.

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Եկեղեցւոյ բակին մէջ Արեւմտեան կողմն ան-  
կիւն մը կառուցեալ է կրկնայարկ Առաջնորդարան  
մը փայտակերտ՝ որոյ վերնայարկը կիսատ է տա-  
կաւին . ներքնայարկն ունի երեք սենեակներ , ուր  
Առաջնորդը կիջնէ վանքէն եկած առնն , և հոն  
նիստ կընեն Ազգային Ժողովներն : Սենեակներէն  
միոյն ճակատը այսպիսի վերնագիր մը ունի .

« Առաջնորդարան Սեբաստիոյ Ազգային Հա-  
սարակութեան և համայն վիճակայնոց նորին յամի  
Տեառն 1856 » :

Առաջնորդարանն ունի իւր մէջ բակ մի քաշ  
բայատակ և սրճատուն մը , և աջ կողմը քահանայ  
յեց և Ժամակոչաց սենեակները : Սոյն ընդարձակ  
բակին մէջ կը բացուին վերնատան դռներն ի Հիւ  
սիս և ի Հարառ : Բակին երկու դռներուն քովերը  
երկու առատահոս աղբիւրներ կան քաղցրահամ  
ջրոյ՝ որք փայտեայ վանդակներով շուրջ պատեալ են :

Նոյն Եկեղեցին սասն երեք քահանայ ունի ,  
որք են՝ Բարեչնորհ Տ. Գաբրիել Աւագ քահանայ ,  
Տ. Վարդան , Տ. Մկրտիչ , Տ. Գրիգոր , Տ. Յակոբ ,  
Տ. Նշան , Տ. Յովսէփ , Տ. Մարտիրոս , Տ. Ռաֆա  
յէլ , Տ. Եղիշէ , Տ. Պետրոս , Տ. Պօղոս և Տ. Յով  
հաննէս : Ունի եկեղեցական ընտիր զգեստներ ,  
բայց ոչ զարդ , և չափէն աւելի սղինձեղեններ՝  
հարսանեաց և այլ հանդիսից համար վարձելի :

**ԼԱ.**

**ԿԱԼՈՒԱԾՔ ԵԿԵՂԵՑԻՈՑ**

Եկեղեցին անշարժ կալուածներ ունի ութն  
կրպակ շուկայն , որոց իւրաքանչիւրը երկու հա  
րիւր դահեկան վարձք կը բերէ առ մին մի ամիս ,  
և երեսուն խցերէ բաղկացեալ փայտաշէն պանդոկ  
մը՝ որ տարին քսան և հինգ հազար դահեկան հա

սոյթ կուսայ : Ծախտ առնուած է քառասուն հա  
զար դահեկանի դեափն մը , որուն վրայ մտերո  
ուրիշ իջեան մը շինելու պատրաստութիւն կը տես  
նուի :

**ԼԲ.**

**ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ ՄԸ**

Հունկրայու մէջ Հեթում Հայոց Թագաւորի  
հրամանաւ Տ. Թորոս քահանայի մը ձեռօք ընդօ  
րինակած մագաղաթեայ ոսկետառ և պատկերա  
զարդ Աւետարան մը տեսայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝  
աակից ԵԱՅ տարի յառաջ գրուած միջակ դիրքով ,  
որոյ յիշատակարանը օրինակեցի հոս ահաւասիկ .

« Փառք քեզ անտոհման անուն և անզուգա  
կան անձնաւորութիւն Հայր և Որդի և Սուրբ Հոգի՝  
որ ետուր կարողութիւն և սաստար եղեր անկարու  
թեան իմոյ ի զբաւ հասանել ըզձայի մատենիս աւրհ  
նութիւն է քեզ Սուրբ Երրորդութիւն և միամա  
կան Աստուածութիւն այժմ՝ և միշտ և յաւիտեանս  
Ամէն » :

« Ծնորհ իմն սկսեալ և ողորմութեամբ նորին  
յանդ ելեալ աւարտեցաւ մատենսս Աստուածա  
խառն Աստուածունակ երկրորդելի և պաշտելի  
Աւետարանս յեւթն հարիւր և մեռասան երրորդի

ամի թուարեքութեանս Հայոց յայխարհամուս ա-  
 թուս Հռովմայ ընդ հովանեաւ Աստուածաբնակ  
 Տաճարիս այս, որ յանուն Սուրբ Փրկչին և Սրբոյ  
 Աստուածածնին և Սուրբ Լուսաւորչին մերոյ, և  
 այլ զբազմահաւաք Սրբոց ի ժամանակս Աստուա-  
 ծասէր բարեպաշտ արքային Հեթմոյ և ի Հայրապե-  
 տութեան Տեառն Կոստանդիա Կաթողիկոսի՝ որ  
 սրբաղան վարուք իւրովք առ հասարակ զարմացու-  
 ցաներ զբազումս, մինչ զի և յարտաքնոցն առաւելս  
 ընդդռներ վկայութիւնս զանհամեմատ վարուցն իւ-  
 ըոց մարբութեան » :

« Հեզ էր և ողորմած և բազում բարութեանց  
 լինեք աւրինակ. ուստի և եղբոր որդին էր թորոս  
 բահանայ, ի նմանէ ուսեալ լինէր գրասէր և Աստ-  
 ուածասէր, զմտածեալ թէ ամենայն որ ինչ յերկրէ  
 բնծայեալ և եթէ ընդ սոյն կորնչիլ ունին և որ  
 յախտեան մնայ՝ բանն է. վասն այսորիկ եռափա  
 փակ սիրով ստանայր մատենաս Աստուածաշունչս  
 ի հին և ի նոր կտակարանաց գոյս. իւրև զարարս  
 դողջիւր ջանայր զնել ի վերայ նոցա և այլ եւս զար-  
 դուց Սրբոց Եկեղեցւոյ. վասն զի յոյժ տաւնասէր  
 էր այրն և պայծառացոյցիլ Եկեղեցական կարգաց.  
 նմին իրի ստանայր կրկին անդամ զմատենան Սրբոյ  
 Աւետարանիս յիմիւ անարժանութենէ թորոսէ մա-  
 կանուն Ռուսեան կոչեցելոյ, որ և բաս կարի ի-

մուս յանդ հաներով զհրաման նորա. նոյնպէս զար-  
 դարեալ ոսկւով սրբով և երազ երազ գունակաւք  
 ներքոյ և արտաքոյ ընդելուզեալ քարասիւք պատ-  
 ուականաւք առ ի սիրելի առնել զսա մանկանց սըր-  
 բոյ Եկեղեցւոյ. վասն որոյ աղաչեմ զձեզ ով Աստ-  
 ուածասէրք, որք հանդիպիք սմա և որք ժառան-  
 գէք զսա՝ յիշել աղաւթիւք ի Տէր զարժանաւորսն  
 ամենայն բարեաց յիշատակի, զբարեպաշտ արքայն  
 Հեթում և զՍրբուհի թագուհին իւր և զՉապէլ  
 դուստր Լեւոնի արքայի և Աստուծով զորդիս սոցա  
 զՊարոն Լեւոն և զՊարոն թորոս և զամենայն նախ-  
 նիս իւրեանց՝ որք և անուանին Ռուբինեանք » :

« Յիշել աղաչեմ և զթագաւորահայրն Պարոն  
 Կաստանդին ուստերաւք և դաստերաւք և ամենայն  
 զարմիւք » :

« Յիշեաջիւք զերջանիկ Հայրապետն Հայոց զՏ.  
 Կոստանդիա և զհայրն իւր Վահրամ և զմայրն իւր  
 Շուշիկ, և զեղբայրն իւր զՎեորդ և զՔրիզոր և ըզ  
 պարկեշտուհի դուստրն իւր Շուշանիկ և զՎանէնի-  
 աղաչեմ յիշել և զքաջախրաւն քահանայն թորոս ըզ  
 գրող Սուրբ մատենիս և զընկերն իւր Քեորդ քա-  
 հանայ և զմայրն իւր զԱլիս և զեղբայրան իւր  
 զԱստուածապատիւ եպիսկոպոսն զՏէր Ստեփաննոս  
 և զՔրիզոր նորին հարազատ և զքոյր իւր զՇուշա-  
 նիկ և զդաստերան իւր Սլքի և Շուշան, և զմայր

սոցա Տախիգաւ կանուխ վախճանեցեալ զկենցաղս ,  
և զհայր իւր և զեղբոր որդիսն իւր զԳրիգոր և  
զՊատեփաննոս և զԹորոս և զամենայն աղգայինս  
իւր » ։

« Յիշեւ աղաչեմ և դբարի շառաւիղ որդին  
իւր Պարոն Ստեփաննոս իշխանական պատուով զին  
ուրեալ ի դուռն արքայի և զամուսին նորա զտիկ  
նակաց մեծ տոհմէ և զըւստերս սոցա և զգասերս՝  
սրոց ամենայն յիշեւ և այս առ հասարակ » ։

« Քրչիստոս Աստուած ննջեցելոց հանգիստ և  
ողորմութիւն պարգեւոցէ , զկենդանին անխռով  
խաղաղութեան պահեացէ Ամէն » ։

« Երեսնակեալ բազմամեղ և թարմասար գրիչ  
աղաչեմ յիշեւ և զիմ անարժանութիւն և զճնաւդն  
իմ և զբարի ուսուցիչն իմ , և զԱստուած զձեզ յիշ  
եացէ յիւրոմ Արքայութեանն ի վառս ամեն » ։

Սոյն Աւետարանը Հռովմայի մեջ գրուելն  
վերջը Ռուբինեանց թագաւորութիւնը երբ կը վեր  
ջանայ , կերպով իւր Սյաղգեաց ձեռքն անցնելով  
կը պահուի երկար ժամանակ , յետոյ Հայերը իմանա  
լով և պաշտպանութիւն ընելով՝ կառավարութեան  
մշտցաւ կիսանան զայն , ինչպէս որ նոյն Աւետա  
րանի սկիզբը այլազոյի գրով նշանակուած էր : Սյա  
ղգեաց ձեռքէն Հայերը զայն ազատող երկրորդ յի  
շատակարան մը կ'յաւերուն առաջնոյն վրայ՝ որ այս է .

« Զվերջին ստացող Սուրբ Աւետարանիս յիշ  
եալիք ի սուրբ և ի մաքրախալ յաղաթս ձեր  
զՊատուական՝ որ ազատեաց զսուրբ Աւետարանս  
ի ձեռաց այլաղգեաց և եղ յիշատակս պատուականս  
իւր հոգւոյն և իւր հօրն Կուլիճանին և իւր մօրն Ա  
նուշին և իւր կնոջն Դումարին և իւր հօրն Յովհա  
նէն և մօրն Ճանվովին և քեռւոյն Մկրտչին վախճի  
և յիշատակ իւրեանց հոգւոյն՝ Պատուականին եղ  
բօրն Աբրահամին , Իսկանուարին և Խաչատուրին՝ որ  
փոխեցաւ առ Քրիստոս աղայ հասակաւ . Աստուած  
ողորմի իւրեանց հոգւոյն ամէն » ։

« Գարձեալ յիշեալիք յաղաթս ձեր զխորըն  
զկիինն զԿուլիստանն և զիւրեանց զաւակն՝ զՊափա  
րըն , զՆախաշն , զՔնքուշն և Վարդանին , զԿե  
ռասն , զՂամուրին , և զբայցն զխաչատուրին . այս  
եղև ի քաղաքն Սերաստիոյ ի թուին Հայոց ՌԾՍ  
ի վառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ » ։

« Սյս սուրբ Աւետարանս եւս յիշատակ Պատ  
ուականն ի ձեռն Տէր Տիրաւորին . խնամ ատնողըն  
աւրճինն յԱստուծոյ ամեն . եւ Միքայել էրեցս զը  
րեցի զյիշատակարանս՝ միով Տէր ողորմեաի » ։

Սյս Աւետարանին մեջ յիշատակարան մ'ալ  
կար , որ յիշեալ Աւետարանի առաջին կազմութեան  
հետ թիւն ալ կը յիշէ . որ է

« Զմեղաւք դատապարեալ կազմող սորա զԱ

ուարել հնադանդենց և զծնողս իմ և զհարադասն իմ զՊաւղոս սարկաւադ և զուսուցիչն իմ զՍարգիս քահանայ զհանդուցեալն ի քրիստոս ազաչեմ յիշել ի Տէր ի թուին Հայոց ՉԺԱ » :

« Գարձեալ ես բազմամեղս թորոս ի թուին Հայոց ՉԺԵ ետու զսուրբ Աւետարանս ի սուրբ ուխտն արքակազին կոչեցեալ ի ձեռն Տէր Սիաւնի եպիսկոպոսի , և խնդրեցի ի նմանէ , զի յիշատակէ նախափայլին զՊատարագն իմ ծնողացն և հողեւոր տիրոջն և ինձ մատուցին՝ զինչ յայնմ աւուր Պատարագ մատուցի . և որք զխնդրուածք մեր կատարեն՝ քրիստոս Աստուած զիւրեանցն կատարեսցէ » :

Աւետարանին երկրորդ կազմութեան յիշատակարանն ալ այսպէս գրեալ է .

« Կազմեցաւ սուրբ Աւետարանս (1) ի թուին Հայոց Ռ՛ՀԵ Հայոց ի քաղաքն Սեբաստիա ի դուռն Ս. Աստուածածնին ձեռամբ Սուտ անուն մեղօք լցեալ Մեքքիսէդ գպրիս . և զուսուցիչն իմ զՄեքքիսեդեկ վարդապետն՝ որ հանդուցեալ է ի քրիստոս , որ

(1) Ուստի ըսել կրկայ որ Աւետարանին բուն Հայոց թուականն մինչ հիւս 615 տարի ուրիշ 364 տարի վերջը Սեբաստիոյ Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյն յանձնուէր է , անկից ալ մինչև հիւս 251 տարի է , զարդ մնալով յիշեալ Եկեղեցւոյ մէջ :

բազում աշխատեցաւ ընդ իս և ուսոյց զարհեռա զայս . ո՞վ ընթերցող քահանայք՝ ազաչեմ զձեզ , որ մէկ հայրմերիւ յիշէք զմեզ ազաչեմ ազաչեմ » :

Այդ Աւետարանը արտաբուսա անխառն նակ է , ընդ հակառակն ներքին կողմն ոսկեզօծ պատկերներ ունի : Ականատեսներ կը պատմեն , թէ ասկից Չ3 տարի յառաջ կաշէպատ աջ կողմին վրայ թանկագին և բաւական մեծ և ընտիր զմբոխա քար մը կայ եղեր . բայց զիացող չկայ՝ թէ ինչպէս կողսուերէ այն :

Մայր Եկեղեցին իրեն յատկացեալ նորական և իգական սեռի հինգ դպրոց ունի որք են , թարգմանչայ , Սահակեան , Ներսէսեան , Հովիտիմեանց և Գայիանեանց :

### ԼԳ.

## ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Թարգմանչայ փայտակերտ դպրոցը քաղաքի Մայր վարժարանն է , ընդարձակ և կրկնայարկ վերնայարկին սրահին ուսանող աշակերտաց թիւն է 200 . յորոց հարիւրը տասն և մէկ կարգի բաժնուած ուսմանց և շեղուադիտութեանց կը պարտապին . այսինքն ֆերականութիւն , ճարտասանութիւն , Տրամարանութիւն , Աշխարհագրութիւն , Թուարանու

թիւն, Բրիտանեական վարդապետութիւն, Սրբ-  
 րօզան պատմութիւն, Հայոց պատմութիւն, Տաճ-  
 կերէն և Գաղղիերէն : Հայկաբան պատուելին Թա-  
 դէաս Սեբաստացի Հայերէն լեզուի քաջ հմուտ թե-  
 նէն զատ՝ ունի նաև Գաղղիարէն, Արաբերէն և  
 Պարսկական լեզուաց գիտութիւն : Խիստ ընտիր ալ  
 նուազածու, սակայն Հայերէնը միայն կառանդէ :  
 Յասպի, բայց միանգամայն հիանալին այն է՝ որ  
 այս անձը կոյր է երկու աչքերէն ալ խիստ երկար  
 ժամանակէ ի վեր : Նկատողութեան արժանի է իւր  
 սուր յիշողութիւնը : Աշխարհագրութեան դասա-  
 տուն է Սեբաստացի Թերղեան Սիմօն պատուելի,  
 Թուարանութեան և Գրավարժութեան Սեբաստա-  
 ցի Նորհատեան Մանուկ պատուելի : Տաճկերէն կը  
 դասախօսէ աշխարհիկ Մահմետական մը և Գաղղիա-  
 լէնը՝ Հայ մը : Դպրոցին կառավարիչը միանգամայն  
 և երաժիշտ դասատուն է : Վերին սրահը երեք  
 դասարան ունի :

Ներքնասրահը իննսուն տղայ կը պարունակէ  
 ոչք հասարակ ընթերցանութեան կը պարապին ըստ  
 այժմեան նոր եղանակի և առանձին համարատու  
 վարժապետաց ձեռօք կը դասախարակուին : Ուսա-  
 նօշ աշակերտաց մէջ բաւական յառաջադէմներ  
 կան, որ նախորդ Գեր. առաջնորդ կարապետ Սրբ-  
 բաղանի պատճառաւ քաղաքին մէջ ծագած երկ-

պառակութենէն յետոյ սկսած են իրենց ուսմունքը  
 և այսչափ յառաջացած :

Վարժարանին նախկին աւարտող աշակերտաց  
 մէջ կան այնպիսիք, յորոց ոմանք հեռադրատան  
 մէջ պաշտօն կը վարեն, ոմանք Հայերէն դասախօ-  
 սութիւն կընեն և ոմանք վաճառականութեամբ  
 կըբաղին : Այսպէս պիտի ըլլային և կարգ մը երի-  
 տասարդներ ալ եթէ վերոյիշեալ խառնութիւնը  
 արդեւը չըլլար : Այս դպրոցի ստորնայարկին մէջ  
 Անճնուէր Ընկերութիւնը հարուստ թանդարան մը  
 ունի, ամեն տեսակ տպեալ գրքերով լի, մէկ քանի  
 հաստ ալ մագաղաթի վրայ գրուած հին մատեան-  
 ներ : օրինակի համար՝ մէկ շարական մագաղա-  
 թեայ՝ Հայոց ՌՃՂ թուականին գրուած ձեռամբ  
 Սեբաստացի Աստուածատուր քահանայի, մէկ սաղ-  
 մու մագաղաթեայ՝ Հայոց ԶԾԳ թուին Գառնեցի  
 Տ. Յովհաննէս քահանայի ձեռամբ գրուելով այժմ  
 Այլազգաց ձեռքն եղող Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյն  
 յանձնուած, ինչպէս կըսէ յիշատակարանին մէջ .  
 շարական մ'ալ նոյնպէս մագաղաթեայ ի թուին  
 Հայոց ՌՂԷ ջահընկալ Յովկի ձեռամբ գրուել են :  
 Ատոնցմէ իզատ նոյն թանդարանին մէջ Հեթմոյ և  
 Լեւնի թագաւորաց ստակնիք ալ կային սղընձէ  
 որոնց վրայ գրուած է «Ողորմութեամբն Աստուծոյ Հե-  
 թում (կամ Լեոն) թագաւոր շինեալ ի քաղաքն Սիս» :

ԼԳ.

### Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Թարգմանչաց դպրոցը Սեբաստացի Ա. քոէրեան Յովսէփի անուն բարերար անձ մի կանդնած է, որոց յիշատակարանը վերնայարկի դրան վրայ զետեղուած կայ վիմամիոր այսպէս .

« Հրճուեցէք մանկտիք յայս յարկ դիտութեան յերդատեալ զձեր մեծ իշխանացս յարմ. Մ. Յովսէփի Մ. Գէորգ երկուքին եղբարց վեհից բարերար, Երախտիս՝ որոց մատամբ Ա. քոչին գրեալ կան յերկինս յաստեղաց կամար Որ ձեզ կառուցին զայս Մայր վարժարան ինքեանց արդասեօք յոյժ բարեյարդար Յանուն Թարգմանչաց՝ ազգիս Հայկազանց մատուցին ի ձօն կամովին յօժար, Եւ ընդ սմին կեց սրբոյն Յակոբայ նորոգեալ լայնեալ զանձուկ հին Տաճար նաև առ շինմամբ Մայր Եկեղեցւոյն բաշխեցին դրամ յըղովազումար, վեհազնեայ իշխանքս զարմ Օտոսպաշեան, կեցցեն և լիցին Ազգիս միխթար

Եղբորորդւովքն Կարապետ, Սերովբ, Պօղոս մահատեալք ընտելւոք դալար Փոքր Յովհաննէս Թոռամբն իւրեանց և ամէն տոհմիւք յամն անհամար Հանդուցեալ ծնողք իշխանապետացս Մ. Կարապետ տիկինն Աննա մայր Որդիքն՝ որոց Յակովբ և Յոհան, Թոռունքն ազնիւ Մեխայն Գրիգոր Այց արա՛ սոցա, Տէր բարեխնամ, ամբառ դթու թեամբք արարեալ արդար Այսք դպրատան ի թիւն Փրկչեան 1861 աւարտ շինութեան եղև անվթար » :

ԼԵ.

### ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Այս դպրոցը նոր փայտաչէն և դեանայարկ է որ Մայր վարժարանէն տասը վայրկեան հեռու քաղաքին Հարաւային կողմ շինուած է, և հոն կը դաստիարակուին 72 աշակերտք Սեբաստացի Յակովբ Ահարօնեան անուն դասատուի մը ձեռօք. հոն ինչ աշակերտք միայն ֆերականութեան և Թուազի տութեան կը պարասկին :

**Լ. 2.**


**ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ**

Այս աղջկանց վարժարանը՝ որ իգական սեռին միայն յատկացեալ է, քաղաքին Հիւսիսային կողմը Մայր վարժարանէն հինգ վայրկեան հազիւ կը տուէ : Տուն մ'է փայտաշէն զոր վարձած են : Երբ Բողոքականք այս թաղիս մէջ աղջկանց դպրոց մը կառուցանելով Հայոց աղջիկներէն բաւական աշակերտուհիներ հաւաքեցին, Սերաստիոյ Ուսումնական Խորհուրդն անմիջապէս նոցա ճգանցն առաջըն առնելու համար այս Հռիփսիմեանց կրկնայարկ վարժարանը հիմնեց, աղջիկներն ժողվեց հոն, և Բողոքականաց ջանքն ի դերև հասնեց : Այժմ սոյն դպրոցին մէջ 200 աշակերտուհիք կը գաստիարակուին կրկին վարժուհեաց ձեռօք՝ որք Սերաստացի են :

Ուսանող աշակերտուհիք կը պարապին Քերականութեան, Թուրքանութեան, Աղգային պատմութեան, Քրիստոնէական վարդապետութեան և ասեղնագործութեան, իսկ մնացորդը հասարակ ընթերցման : Յառաջադէմներ չունի, վասն զի նոր քացուած է և նիւթական կարողութենէ զուրկ : Բայց որպէս զի, Տեղեկագրիս մէջ թերութիւն մը

չի գործեմ, կը նկարագրեմ աշակերտուհեաց արտաքին կերպարանքը . զլուսնին կարմիր գտակն ; վրայէն էաղձս կապած, ճակատնին ոսկի շարած ալանջնին օղ և կարմիր գտակին վրայ մարդարտախառն ոսկի շարուած ձեռքերնին հինա դրած և մատանի ի մատին . ոմանք ալ գլթերնուն մէկ կողմը ծակած և փոքրիկ օղակ մը անցուցած են՝ որուն էրիչն կրօնն . այս վերջինը աղջկան նշանուած ըլլալուն նշանն է : Կան աղքատիկ աշակերտուհիներ որ կարճ պարեգօտ կը հագնին մանչու նման, և վրայէն կարճ սալն մը : Եթէ հասակաւոր է՝ գլուխը ետալմա մը կը ձգէ փողոցը երթալու ատեն, եթէ աւելի կատարեալ է՝ կանանց պէս սպիտակ տուանով մը կը ծածկուի :

Վերոյիշեալ աշակերտուհեաց նկարագրէ կարճ Գրիգոր-Միւն մը ընել թէ՛ ինչպէս որ Սեբաստացիս աղջկանց վարժարանի մը պէպէք զգալով սոսոսայն ի գործ Գրեթ եւ՝ նոյնպէս ալ եթէ կարելի է, աշակերտուհեաց հագուստի հասին ալ պէպէ՛ է ի նկարի առնուլ՝ որ խնայ պարզ և ւայ . չանգի ոչ արպախոսպ այլ ի ներսոսպ պարպին շարեարեւ շնորհայի Բարեհասնութեամբ :



**ԼԷ.**

**ՄԱՍՆԱԻՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՔ**

Վերոյիշեալ դպրոցներէն զատ Սերաստիոյ մէջ անկախ երեք մասնաւոր վարժարաններ ալ կան արական և իգական սեռի միայնդամայն յատուկ, որոնց մէջ կաւանդուին մասնաւոր անձանց ձեռօք ընթերցմունք, դրավարժութիւն և ասեղնագործութիւն :

Սերաստացիք եռանդուն են, սակայն զիրենք մղող և քաջալերող չկայ գրեթէ :

Այս դպրոցներէն մեկուն անունն է Հայրենասիրական, իսկ միւսները անանուն :

Ազգային հինգ վարժարանները Մայր Եկեղեցւոյ կարուածոց արգեամբք և Եկեղեցեաց արօք կը մատակարարուին . Մայր Եկեղեցին սահմանադրապէս կազմեալ բանիբուն և աշխատաւոր թաղական խորհուրդ մը ունի, և դործունեայ ուսումնական խորհուրդ մը՝ որ վարժարանաց հոգաբարձութեան պաշտօնն ալ կը վարէ և տեսուչ մը, որք համայնդամայն մեծ և անձուէր աշխատանք կը զոհեն իյառաջագիւմութիւն նոցա :

**ԼԸ.**

**ԱԶԳ. ԺՈՂՈՎՔ ՍԵՔԱՍՏԻՈՑ**

Սերաստիա ունի իւր սահմանադրական ժողովները՝ երեսուն և վեց երեսփոխաններէ կազմեալ Գաւառական Ընդհանուր Ժողովը, Կրօնական և Քաղաքական Ժողովները, Եօթն անդամներէ բաղկացեալ, որք սահմանեալ աւուրց մէջ իրենց նիստերը անձնուիրարար կը շարունակեն և կ'գործեն : Սակայն Տնտեսական խորհուրդ չիկայ : Վիճակի գիւղորէք ալ, իրենց ըստ օրինի Թաղական խորհրդներն ունին :

**ԼԹ.**

**ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ**

Այս Եկեղեցին քաղաքին Արևմտեան կողմը Մայր Եկեղեցիէն հեռու տասը վարկեան, երեսուն և հինգ տարուան նորոգեալ չէնք մ'է հոյակապ, բայց փոքր քան զառաջինն : Առաջին հիմնարկութիւնը եղած է երկու հարիւր քառասուն

երեք տարի յառաջ : Վեց սուներու վրայ հաստատուած է Եկեղեցին և տասը կամարներու վրայ ձգուած :

Ունի գմբէթ մը որուն մէջ երկաթեայ վանդակներով և լուսամուտներով չըջապատուած է Եկեղեցւոյն Արեւմտեան կողմն երեք խորանայ մին Աւագ խորանն է , որոյ աջ կողմինը Ս. Յակոբ և ձախինը Ս. Լուսաւորիչ : Գէպի Հարաւ և Հիւսիս քարաշէն մեծ սահարաններ կան մին Ս. Գէորգ , որ Հարաւային կողմն է , իւր մէջ ունենալով մկրտութեան աւազանը և նորա կից որմին վրայ ալ հինաւուրց քանդակեալ քարէ խաչ մի կայ և որուն մէջ բեւեռ մի քանուած . աւանդութեամբ կը հաւատեն թէ Ս. Թագէտս առաքելոյն ժամանակէն մնացած է , և Հիւսիսի կողմն ալ Ս. Ստեփաննոս անուամբ օծեալ է , ունի երկու հատ գեղեցիկ գմբէթաղարդ ոսկեղօծ և վայտաշէն ամպլոններ դէմառ դէմ : Եկեղեցւոյն բուն շէնքը ունի իննը սուն և մէկ ոտք երկայնութիւն և քառասուն ոտք լայնութիւն , որուն բեմը մարմար քարերով զարդարուած ընդարձակ պատկառելի գիւղը մը կը կրէ , գաւիթ մ'ալ ունի վաթսուն տանաչափ լայնութեամբ և տասն և ութը ոտք երկարութեամբ , որուն տաճարի դրան վրայ հեռեւեալ արձանազրութիւնը կը տեսնուին :

« Շնորհիւ եռանձնեայ Էն միամականի ,  
Նորոգեցաւ Տաճարս Սրբոյն Սարգսի ,  
Որ ընդ ժամանակաւ քաջ մերոյ դիտի ,  
Կարապետ Սրբազան Եպիսկոպոսի ,  
Շրջադատ սարսուղք հիմախի հաստատի ,  
Հողնաջան եռանդեամբ իշխանաց մեծի ,  
Խակ արդեամբ բարմաշխատ Սերաստեան հօտի ,  
1390 թուի » :

Նաևս յիշեալ Տաճարի դրան կամարին վրայ կայ Գրիստոսի պատկերը , իւր շուրջը ունենալով Առաքելոյն ալ . նոյն կամարին վերի կողման անկիւնոց վրայ Աւետանս պատկերները նկարուած կը տեսնուին , որոնցմէ քիչ մը վեր յաջ և յահեակ , հրեշտակը փողով մեծաւ կը հռչակեն Յիսուսի սոյն խօսքերը « Որ ոք մտցէ և ելցէ իսկապէս ճարագ դասցէ » այլև Տաճարին դրան ձախ կողմը , վեց թիղ բարձրութեամբ կանգնած քարէ սեան ձակասութեամբ կը կերտուած է . սիւնին վրայ ալ քառանկիւն քար մը զետեղուած ըլլալով Արապ խաչ անուէր կուտան և հասարակութիւնը ուխտի կերթոց . աւանդութեամբ կը պատմուի թէ՛ քառասուն մանկանց լճէն դանուած ըլլոյ այդ քարը . կան նաև գաւթին մէջ քահանայոց և աշխարհականաց գերեզմաններ . եւ Եկեղեցւոյն մէջ ժողովրդոց յատկացեալ աջ դասին ետեի կողմը , կայ վեց թիղ երկայն

նութեամբ և հինգ թիզ բարձրութեամբ սև մարմարեայ քարով Սերասացի ներսէս հողերոյ Հայրապետի (1) շիրինը սքանչելի կերտուածքով, որուն Սերասացիք Հողեոր Տէր անունը կուտան. և նոյն շիրմին վրայ կը տնտնուի սա հետեւեալ մահարձանը :

« Փոխումն Մ. Հայրապետիս կաթուղիկոս Տէր  
 « ներսէս ԶԳ. իսկնորոգումն գերեզմաննիս ՌՄՂին  
 « արդեամբ աղելու Յարութիւն Գրքբիկիկեան մըր  
 « գաժախի » :

Ամեն ամառգլխուն Հայ կանայք անպատճառ կերթան քահանայի մը ձեռօք կ'օրհնուին նոյն գերեզմանին վրայ, ինչպէս որ հնօրեայ սովորութիւն եղած է : Եկեղեցին ընդարձակ բակի մը մէջ շինուած, որուն շուրջը որմով շրջապատեալ է. որմն Հիւսիսային կողմէն կը բացուին երկու պղտի դռներ՝ որոնք ժողովրդեան երթևեկութեանը կը ծառայեն, որոնց կից՝ մին դէպ յԱրեւելք և միւսն դէպ յԱրեւմուտս երկու անուշահամ աղբիւրներ կան :

Եկեղեցին ունի վեց քահանայ որոց անուանըն են .

(1) Այս այն ներսէսն է որ Սոյ կաթուղիկոսութեան պաշտօնն վարած է ի վարուց :

- գան Սրժ. Եղիա քահանայ աւագերնց
- » Բարթուղիմէոս քահանայ
- » Ստեփանն քահանայ
- » Յովհաննէս քահանայ
- » Վարդան քահանայ
- » Միքայէլ քահանայ

Որոց ոնեւեակն ալ, բակին Արեւելեան կողմը կիցնայ :

Խ.

### ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վեց անձերէ բաղկացեալ Թագ. Խորհուրդ մը ունի Եկեղեցին, որոնք ամէն կիրակի օրեր, խորհրդարանը գտնուելով, ազգին և միանգամայն դբայրոցին յատաջագիմութեան համար կաշխատին բոլորով ճգամբ : Նաև ունի Եկեղեցին երկու կալուած՝ մէկ տուն մը, դրեթէ 13000 դուրուշ արժէքով, որուն տարեկան եկամուտն է 300 դուրուշ մէկ ալ քսան կանգուն տեղի վրայ կրպակ մը, որ այժմ այրած կը կենայ . Ս. Ստեփաննոս անուամբ ընկերութիւն մի կայ, որուն արդեամբը առնուած է ժամանակին յիշեալ կրպակը . սակայն յոյս մեծ կայ՝ որ դարձեալ ընկերութիւնը, ինչպէս առջի անգամուն նոյնպէս ալ վերստին նորոգէ շէնքը, իրենց

քառուկ եղած աղղասիրական ջանիւքք : Նաև ունի  
 Եկեղեցին մի ամենապատուական կաշիակաղմ խիստ  
 ընտիր և ապիտակ մագաղաթի վրայ ամենամաքուր  
 բոլորադիր գրերով ու փառաւոր և սքանչելի պատ-  
 կերներով զարդարեալ, ամբողջ ոսկեզօծ Աստուա-  
 ծաշունջ մի, որ այժմ հարբազխատ է : Ներսէս հո-  
 գեղոյս Հայրապետ ուր անդ կը հանդչի, յատկապէս  
 իւր արդեամբը գրել առած է ջահընկալ Բարազամ  
 անուն դպրի մը, որուն վերջը յիշատակարան մ'կայ,  
 և կ'պատմէ Եկեղեցւոյ առաջին հիմնարկութեան  
 թիւր, որին օրով շինուած ըլլալը, հին ժամանակ-  
 ները Սերապտիոյ վիճակի մէջ քանի եպիսկոպոսոս-  
 յան ըլլալը, յիշեալ մատենին, որ թւոյն սկստած  
 և որ թւոյն վերջացած ըլլալը, և ի վաղուց Սերապ-  
 տիոյ վիճակը կիլիկիոյ դէմ ըլլալը, բառական ուրիշ  
 շատ մը ծանօթութիւններով հանդերձ յայտնած ըլ-  
 լալուն, փախաբեցոյ ընդ օրինակելով, ի լոյս բնծա-  
 յել սոյն տեղեկագրաւ : Ահա առիկ յիշատակա-  
 րանին ճիշդ գրութեան օրինակը որ հետեւեալն է :

**ԽԵԱ.**

**ՊԱՏՃԷՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՆ**

« Ներսէս անուն Սերապտացի կոչեցեալ յառ-  
 տիճան եպիսկոպոսութեան և վարպտարեսութեան »

շնորհիւ Տեառն . ցանկացայ սուրբ սատիւս ինձ և  
 արեան մերձաւորացս և ինձ խրատատու և դաս-  
 ախարակ բարունի կաթուղիկոսաց Տէր Յովհաննէս  
 և Տէր Մինաս անուն, որ յաթոռն կիլիկիոյ, այլև  
 միահամուռ ժողովրդեան Հայոց Աղղիս Սերապտիոյ  
 Եւզոկիոյ, Ուրհայու, Կարնոյ, քաղաքի և այլոց  
 Քրիստոնէից արօք և ողորմութեամբ տացայ զսուրբ  
 գիրս զայս, ի վրկութիւն մարմնոյ և հոգւոյ . և  
 ըստ երանութեան մարգարէին՝ որ ասէ « Երանի  
 սր ունի զաւակ ի Սիօն և ընտանեակ յերուսաղէմ »  
 այլ և բազում յուսադրութիւն որ ի սուրբ գիրս  
 յիշատակի վասն բարի յիշատակաց՝ այսմ պայմանի  
 զի Տէր Աստուած իւրաքանչիւրոցն աշխատողաց և  
 ինչս տուողաց վարձս բարեայ պարգևեացէ, և մա-  
 քուր և սուրբ պահողաց, և խնամք տանողաց,  
 հմուտացելոց, թաղաւորաց և ժողովրդականաց,  
 վասն զի ես մայն փոքր ինչ ունիմ և ինչս և ապ-  
 րանս և ծախսս, որ ի սուրբ գիրս եղև հաւատա-  
 ցելոց Քրիստոնէիցն է, և ոչ թէ իմ և որդւոց յոր-  
 դիս յիշատակ է ըստ իւրաքանչիւրոց, թէ ապրա-  
 կաց և թէ աշխատանաց կողմանէ, զոր Տէր Աստ-  
 ուած իւրաքանչիւրոցն վարձահատոյց լիցի, որպէս  
 և ինքն գիտէ . Ամէն » :

« Աղղ՝ եղև սկիզբն գրոյս թիւին Հայոց ՌՁԵ  
 (1085) ձեռամբ Բարազամ ջահընկալի Սերապտացւոյ

Ս. Սարգիս և Ս. Աստուածածին Եկեղեցեայցս ի քաղաքիս և ի կատարումն սուրբ դրոյն եղև թուին Հայոց ՌՁԹ 1089, և եղաւ կամօք ամենայն ժողովրդեանն յիշատակ ի դուռն նորայնն Ս. Սարգիս Եկեղեցւոյ ի Հայրապետութեան և ի կաթուղիկոտութեան Տէր Փիլիպպոսի ի սուրբ Աթոռն Էջմիածնայ, և Տէր Սիմէօն կաթուղիկոսի, որ ի Կիլիկիոյ, և յաւուրս եպիսկոպոսացն: Անդրէաս եպիսկոպոսի, որ յԱթոռ Ս. Նշանի, և Յովհաննէս եպիսկոպոսի որ յԱթոռն Ս: Անաստի և Նիկողայոս եպիսկոպոսն որ յԱթոռն Ս. Հրեշտակապետի, և Մկրտիչ եպիսկոպոսն, որ յԱթոռն Ս. Գէորգոյ Տեէկոսյու վանից, ի Հայրապետութիւն աշակերտիւ մերոյ Մելքսիանոս երիցու ի դուռն խնդրակատար Սուրբ Աստուածածնի):

«Արդ և են անպիտան Ներսէս վարդապետ կոչեցեալս աղաչեմ զձեզ հանդիպող սուրբ տառիս և թէ օրինակելով, եթէ ընթեռնելով և եթէ տեսութեամբ վայելելով հանդիպիք, ի մաքրախոյլ աղօթս ձեր, զիս զմեզաւորս և ծնողս իմ զկարապետն և Մահաբեի իսթուման և զեղբայրն իմ Մահաբեի Տէր Աստուածասուր նորընծայ քահանայն, և ըզնորին զաւակքն և զամենայն արեան մերձաւորսն իմ, զկենդանին և զհանդուցեալս և զսրբիացեալ և աշակերտեալ մանկունս իմ զՏէր Յակոբ բանի

ապասաւորն, խաչատուր սարկաւազն, այլ և զչինոզ և աշխատող ի վերայ մադաղաթիս զկարապետ ջուհրնկան Ասանայի և զՅովհաննէս զորդեգիրն իմ և զմիւս կարապետն և դուք յիշեալ լիջիք աստ և ի հանդերձեալն, առաջի Տեսուն Աստուծոյ մերոյ. Ամէն»:

«Բնդ սոցին և զանպիտան և զմեզաւանձ ծառայս ձեր զՔարաղամ սուտ անուն գրիչս յիշեցեք և մեղաց իմոց թողութիւն խնդրեցէք, որ չէի արժան ձեռնարկել ի դիրս յայս, անտրհետ գրով գրել, սորին այլ օգնականութեամբ Աստուծոյ և յուսադրութեամբ բազմերախտ և երջանիկ հոգեւոր հօրս մերում, Ներսէս քաջ բարուհապետիս ձեռնարկի և դրեցի, զոր Տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրս. և յետ ատեանցս ելանելոյ երկոտասան վարդապետացն դասուցն գասակից և պասկակից արաոցէ զինքն և զնմեցեալսն իւր անդրաւ յախտնիւ. Ամէն»:

«Արդ ի թուին Հայոց ՌՁԳ (1083), թագաւորն Տաճկաց Սուլթան Մուրատն եկն ի Սիրասոխս, գնալ ի Պարսս ի պատերազմ. կամօքն Աստուծոյ հրաման եղև նորոգելոյ զԵկեղեցիս Սուրբ Սարգսի, որ ի վաղուց հետէ հնացեալ և խախտեալ էր և երաշտորհ Հայրս մեր Ներսէս վարդապետն, վերատեսուչ Սայրաքաղաքիս մերոյ Սի

բաստից, թողեալ հողս մարմնականս, և միայն հողեւորին բուռն յարեալ, և վառեալ ի սէրն Գրիստոսի ձեռնարկ ի շինուսն Ս. Եկեղեցւոյս, և բազում ներութիւնս կրեաց ի յանօրինաց, որպէս ի շնուսն զԲարեւ և Յովսէփեկիանոց քահանայ մեծ, որ բազում և շատ աշխատանս կրեաց հաւատով և յուսով, և մշամիտ սիրով շինեաց բազում ծախիւք և նորոգեաց ողորմութեամբն Աստուծոյ, և լուսաորեալ պայծառացոյց զկարգս և զկրօնս Եկեղեցականացս՝ որ խանդարեալ էր ի թուրամորթ և ծոյլ Առաջնորդաց, և յետ այսր յաւել ևս նորոգել Ս. Աստուածածին Եկեղեցիս մեր, և ոչ այսմ միայն շատացեալ, այլ և զԱյն Եօրկի զԵկեղեցին Յունաց ազգին, որ ի վաղուց յետէ խախտեալ և կործանեալ էր, և նորս անսխիթար մնացեալ ոչ ունենալով ձեռնասու ի մարմնաւոր և ի հողեւոր կարեաց, վասն որոյ յոյս ի յԱստուած եղեալ ձեռնարկ, վերապին նորոգեաց և ուրախացոյց եւս դնտս, զոր Տէր Աստուած իւր աշխատանացն փոխորէն հասուցումն արասցէ հարիւրապատիկն աստ և ի հանդերձեալն, զանպատում ուրախութիւն պարզեւեացէ անդրաւ յախտենիս, և դարձեալ ստացայ զսուրբ գիրս զԱստուածաշունչս այս անմաշի թղթով, որ ինքն իւր ձեռամբն շիներ ըզհողաղաթս, քերէր և պատրաստեր զտեարս, առ

ի գիրաւթիւն ինեղոյ ինձ, անվարժ գրիչս և բազումս զմեզ մխլթարեաց ի հողեւոր և ի մարմնաւոր կոչմանէ, որ թէպէս մեր անարժան էաք դործոցս այսորիկ, սակայն ստատարութեամբ աղօթից բազմերախտ Հօրս մերում բարերարն Աստուած ոչ ըստ մեզայ իմոց արար և ոչ բնա անօրէնութեան իմում հատոյց ինձ, այլ ըստ իւր մարդասիրութեան ողորմեցաւ մեզ և գթացեալ փրկեաց յամենայն փորձանոց հողոյ և մարմնոյ, վասն որոյ հայցեմք յանկարօս փրկէն մերմէ Յիսուսէ Գրիստոսէ, որ փոշանակ յայսմ գրի որ յիշատակագրեցաք, գրեացէ Տէր ի գիրն կենաց և նմա փառք յաւիտեանս. Ամէն» ։

« Յիշատակս օրհնութեամբ եղիցի, և ձեզ յիշողացդ առ հասարակ ողորմեացի, Գրիստոս Աստուած մեր, Ամէն » ։ Հայր մեր որ յերկինս . . . ։

« Կատարեցաւ գիրս ծաղիկս և յիշատակարանս թուին Հայոց հազար ութսուն և ինն Օգոստոս 22 օրն շարաթ » ։

« ի Փառս Աստուծոյ »

« Գիրք այս սիրելի,  
 թուղթս անմաշիլի,  
 եւ կարս անդակտելի,  
 յՕրինակն մի ինայեացի » ։

«Աստուած ողորմի Անդրէաս Պարոն Տիրօջն  
և իւր ծնոգացն՝ որ եղ ի գին Աստուածաշունջ դը-  
րոյս քօան դահեկան . Աստուած լուսա որէ զիւր  
հոգին » :

«Աստուած ողորմի Մահտեաի Պաշտասարին  
և կողակցոյն իւր Սնուշին որ ետուն Աստուածա-  
շունջ գրոյս սուն մի իննըսունըեօթ դահեկանի .  
Աստուած լուսաւորեոյէ » :

**ԽԲ.**

**ՅԲԾԱՏԱԿԱՐԱՆ**

**ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ**

Մագաղաթեայ փորրիկ Աւետարան մ'ալ կայ,  
միևնոյն Ներսէս Հայրապետի հրամանաւ, դարձեալ  
վերոյիշեալ անձի ձեռօք գրուած . խիստ մտքաւ  
դրով որուն յիշատակարանը հետեւեալն է :

«Փառք Անեղին, անհատանելի, անքննելի,  
անհետազօտելի, եռանձնակի միասնական սուրբ  
Արքայութեան . յաւիտեանս յաւիտենից . Ամէն» :

«Գրեցաւ Աւետարանս ի թուին Հայոց հազար  
իննըսուն և վեց, հրամանաւ և արդեամբ Սերաս-  
տացի Ներսէս փորդ տպեալին . որ ետ գրել զոյս

յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնոգաց իւրոյ . և ամե-  
նայն արեան մերձաւորաց . արդ՝ աղաչեմ զամե-  
նեանն որք ընթեռնուք արինակէք, յիշեալիք ի  
Քրիստոս զհոգեւոր հայրն մեր, և զվերոգրեալ  
Ներսէս վարդապետն . և զյանցաւոր գրիչս զԲա-  
րաղամ . զի և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսե Աս-  
տուծոյ մերոյ, որ է արհնեալ յաւիտեանս . Ամէն » :

«Որ ետ ի ձեռն Տէր Աստուածատուրին և  
իւր օրդւոյն Յակոբին, Կարապետին, Դաւիթին,  
որ եղաք յիշատակ ի դռուն նորաշէն Ս. Սարգիս  
Եկեղեցւոյն չունի ոք իշխանութիւն ծախելոյ, կամ  
գրաւելոյ, կամ ի դրանէ Սրբոյն Սարգիս յափշտա-  
կելոյ, եթէ ոք յանդքնի զմասն Յուդայի և զպա-  
տիժն Կայնի կրեացէ աստ և ի հանդերձեալ . Ամէն » :

**ԽԳ.**

**ՆԵՐՍԷՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

Եկեղեցւոյ բակին Արևմտեան կողմն ալ Ներ-  
սէսեան անուամբ ընդարձակ և կրկնայարկ նորա-  
կառոյց դպրոցը բարձրացած է՝ որուն մէջ զայ-  
նուոր կառավարչի մը ձեռօք կը դատաւարակուին  
300ի մօտ աշակերտք՝ որոնք չորս կարգի բաժ-  
նուած են . առաջին կարգը ու թը աշակերտաներէ

կը բաղկանայ՝ Գործնական քերականութեան պա-  
 րագրով տասներեքերորդ հրահանգը թարգմա-  
 նելով, միանգամայն թուարանութեան չորս գոր-  
 ծողութիւնը . երկրորդ կարգը որք տասը աչա-  
 կերաներէ կը բաղկանան նոյնպէս ֆերականու-  
 թեան հինգերորդ հրահանգը կը թարգմանին  
 միանգամայն թուարանութեան ալ բարձման խըն-  
 դիրներն . երրորդ կարգը քսան և հինգ աչակերու-  
 ներէ բաղկացեալ, որք միմիայն թուարանութեան  
 դումարներն կրնեն ի միասին հասարակ ընթերցա-  
 նութեան . նոյնպէս ալ չորրորդ կարգիները հա-  
 սարակ ընթերցանութեան պարսպելով պարզ թիւ  
 կը գրեն . որոնցմէ տասը տղայի չափ ալ Գրիտտո-  
 նէական վարդապետութեան դաս կառնուն և եր-  
 կուք ալ Սրբազան և Հայոց Պատմութիւն կրն-  
 թեւնուն . Իսրոյցի վարի յարկը տակաւին կիսաշին  
 ըլլալուն նախակրթարան չիկայ . և տղայք գեոնի  
 վրայ կ'նստին գրասեղան չըլլալուն պատճառաւ,  
 սոյն շէնքէն ի զատ կայ փառաւոր առաջնորդա-  
 րան Ը՞փայտաշէն :

ԽԳ.

ԳԱՅԻԱՆԵԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Եկեղեցւոյն Արեւմտեան կողմը Սրբոց Դայիան  
 ետնց վարժարան մը կառուցուած է որուն մէջ

վարժուհիի մը ձեռօք հարիւր տասը աչակերտուհի  
 կը դաստիարակուին , որոնցմէ երեքը ֆերականու-  
 թեան կը պարսպին և հինգն Գրիտտոնէական  
 վարդապետութեան և մէկն ալ Աղգային պատ-  
 մութեան . միւս մնացածներն հասարակ ընթեր-  
 ցանութեան . ասեղնադործութիւն չի կար տակա-  
 լին . Այն երկուք վարժարանաց նիւթական ծախսը  
 էկեղեցւոյ կալուածներէն կը հողացուի , թէպէտ  
 և սցօմ՝ նիւթական կարողութեան նեղ ըլլալուն՝  
 այսչափով մը միայն բաւականացած են , բայց յոյս  
 մեծ կայ որ ապագային մէջ նիւթական վեճակը  
 բարւոքելով , աւելի յառաջ տանին յիշեալ դպրոց-  
 ները :

Եկեղեցւոյն պարսպէն դուրս Արեւմտեան կողմը  
 ժամանակաւ ընդարձակ պարտէզ մը ունի եղեր ,  
 տակայն բարբարոս Տաճիկք բռնի յախչտակեր են  
 զայն որ սցօմ՝ իրենց սեպհականութիւնը եղած է :

ԽԵ.

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ

Մայրաքաղաքիս Հայոց այս երրորդ Եկեղե-  
 ցին , քաղաքին սակաւ ինչ Արեւմտեան Հարաւո-  
 յին կողմը կիցնայ . վաքրիկ և հոյակապ վերատին

Նորագած տանն և վեց տարուան դեղեցիկ չէնք  
 քի բլլալով քանն ուրք երկայնութիւն և տասը ուրք  
 այնութիւն ունի . միմիայն Աւագ խորանով և փակ-  
 վիկ գաւթով մը , Տաճարին որմերուն տեղ երկաթ-  
 եայ վանդակներով բակուած է , որպէս զի գաւի-  
 թը գամուողներն ալ կարենան Եկեղեցոյն ներքը  
 տեսնել . իրեն յատկացեալ դպրոց չունի . կրտե-  
 թ է տասը հազար դահեկանի չափ ալ պարտք ունի .  
 տեղոյն քահանայն Մայր Եկեղեցիէն կերթայ թաղ .  
 Խորհուրդ չունի , այլ ընդ իշխանութեամբ Մայր  
 Եկեղեցոյ Մեծ . Թաղականաց է :

**Խ Գ .**

**Ս Ա Ռ Ի Բ Ք Մ Ի Ն Ա Ս**

Այս չորրորդն քաղաքին Արեւմտեան կողմի  
 վերջի ծայրը եղող Ս . Մինաս անուամբ կառուց-  
 եալ փոքրիկ փայտաշէն Եկեղեցի մ'է . ունի մէկ  
 Աւագ խորան և մէկ փոքր պահարան Եկեղեցոյ  
 աջ կողմը . Արթ . Տէր Իէորդ քահանայ մը կայ որ  
 միշտ հոն է . Եկեղեցին փոքրիկ բակ մը ունի՝ որուն  
 արեւմտեան պարսպին վրայ կը բացուի Եկեղեցոյ  
 դուռը . Իւր կիցը ունենալով քաղցրահամ ջրով  
 աղբիւր մը և երեք տուն ալ կալուած ունի՝

որ տարին երեք չորս հարիւր դահեկան արդիւնք  
 կը բերէ . ունի փոքր դպրոց մի փայտաշէն որուն  
 մէջ բաւական աշակերտք կը դաստիարակուին յիշ-  
 եալ քահանայի ձեռօք , այս ալ ընդ իշխանու-  
 թեամբ Մայր Եկեղեցոյ է . ունի Եկեղեցին տանն  
 և հինգ հազար դահեկանի չափ գումար մի՝ որ  
 բաւական ատեն , ասոր և անոր վրայ կենալով ի  
 կալուատ համարուած է :

Սյս և միւս բոլոր Եկեղեցիք իրենց համար  
 յատկացեալ բաւական ծանրադին ղգեատներ և  
 զարդեր ունին :

Սոյն վերջին երկու Եկեղեցիք իրարմէ տանն  
 և հինգ վարկեան հեռաւորութիւն ունին :

Նաև քաղաքին Հարաւային կողմը կէջ Թորե-  
 բուած Տաճկական թաղի մը մէջ փոքրիւք փայտա-  
 շէն շինուածքով տեղ մը կայ՝ որուն մէջ ամփոփ-  
 ուած է վլախոս Ս . Հայրապետի մարմինը , պատ-  
 ուական մարմարեա շիրտի մը ներքև որուն հրաշք-  
 ներք շատ խիստ կը պատմեն , այս երկու երեք  
 տարուան մէջ երեւելի հրաշք մը տեղի ունեցած  
 ըլլալուն պարտաւորեցայ յիշել անգեկազրիս մէջ .  
 Սեբաստիոյ Հայ երեւելի բնակիչներէն Ս . Չօտցի Պա-  
 յրևորեան Յովհաննէս աղայի դուստրը , որ բա-  
 ւական տարիներ իւր տանը մէջ անդամալուծու-  
 թեան ակոտէն նեղուելով , ջերմեռանդ սրտիւ կը

դիմէ յիշեալ Ս. Հայրապետին շիրմին վրայ իւր  
 ցաւոց բժշկութիւն խնդրելու, որով անմիջական  
 դարմանը կրնգունի: Ս. յրազիք միանդամայն այս-  
 պիսի հրաշքներուն ականատեսս ըլլալով խիստ կեր-  
 կնչին և կը սրատուեն. արդէն իսկ պահպանու-  
 թիւն ընողն ալ Ս. յրազի մ'է և իրենցմէ ալ բա-  
 ւական դացողներ բժշկութիւն գտած են:

**ԽԵ.**

**Ս. ԳԷՈՐԳՈՅ ԵԿԵՂԵՅՈՒՆ**

Բաղաքին Պարաք փողոցի ճամբուն Արեւել-  
 եան կողմը զարծր դիրքի մը վրայ, և չորս կողմէն  
 որմնապատ ընդարձակ գերեզմանատուն մի կայ,  
 որուն մէջն է յանտան Ս. Գեորգայ կառուցեալ հին  
 առաջ Եկեղեցին. Հայք և Յոյներ շատ ժամա-  
 նակէ ի վեր այն գերեզմանատան սեպհահանու-  
 թեան վրայ կը միճին. գերեզմանատան մէջ երկու  
 ազգաց շիրիմք կը տեսնուին. վերոյիշեալ Եկեղեց-  
 ւոյն արտաքուստ լայնութիւնը տասն և ութ և եր-  
 կայնութիւնը քառասուն ոտք. ինքն ալ անշուք  
 չինուածք մ'է. գերեզմանատան թէ արեւելեան  
 և թէ արեւմտեան կողմերը փայտաշէն փոքրիկ դրո-  
 ներ ունին, և մէկ ալ Յունաց դպրոց մը կայ ա-

րեւելեան կողմի որմին առաջքէն մշտահաս առուակ  
 մը կ'անցնի բաւական մեծկակ, որ վերոյիշեալ  
 Մուսկատ գետին ջուրն է:

**ԽԶ.**

**ՍԵՒ ՀՈՂԵՐ**

Գերեզմանատան բուն տեղոյն անունը Սեւ  
 Հողեր կ'ըսուի, սա պատճառաւ որ Ահնկթիմուր  
 ժամանակաւ Սեբաստիա գալով անթիւ Հայեր ջար-  
 դելէն վերջը կարգը կուգայ մտտալ մանկանց,  
 տեսնելով որ մի առ մի ջարդելով չի պիտի հաս-  
 նի, ամենքը մէկէն ցորեանի նման գետինը սրվ-  
 ուելով, բաւական թուով կատրած ձիերու տանակող  
 լինել կուտայ անդթաբար, որոնց արլւնը տեղոյն  
 առաջքէն անցած գետը վազելով կերթայ. այն ա-  
 տենէն Սեւ Հողեր անունը կը դրուի, ըստ պատ-  
 մութեան վանուց Ս. Նշանի. կը պատմեն թէ յիշ-  
 եալ Եկեղեցին Հայ կանայք ձեռքերնին մօմ ս-  
 ուած ուխտի կերթան միշտ, մանաւանդ Զատիկ և  
 Ծննունդի օրեր երկու ազգէ արք և կանայք,  
 երկուսաարգք և կուսանք, հոն խառնուելով և ձեռք  
 ձեռքի տուած փողով և թմբուկով կը պարեն,  
 ուր եպեղեցի արարքներ ալ պահատ լին ըլլար

տակայն այս տարի Սերաստիոյ Գեր. Ս. Հայ-  
րէ նկատելով սոյն խայտառակութիւնները խստիւ  
արդիւնեց :

**ԽԹ.**

**ԱԶԳՕԳՈՒՏ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ**

Յիրաւի գովութեան, և օրինակ այլոց հան-  
դիսանալու արժանի են այս տեղի Հայք, քանզի է-  
րևնց մէջ Ազգասիրական եռանդէ դրդեալ հաս-  
տատուն ընկերութիւններ կաղմած են ի նպաստ  
Ազգիս, որոնց անուանքն են, Ա. Անճնուէր, Բ.  
Լուսաբեր, Գ. Նպաստամատոյց, Դ. Խնամակալ,  
Ե. Օժանդակ Անճնուէրի, Զ. Սենեքերիմեան ընկե-  
րութիւն :

Որոց առաջինին նպատակն է կիրակնօրեայ  
դպրոց բանալով, երկուստարդաց պէտք ըլլալիք  
գատեր կ'աւանդուին անճնուիրարար, երկրորդ և  
երրորդ՝ Լուսաբեր և Նպաստամատոյց ընկերու-  
թեանց նպատակն է, դպրոցի մէջ գանուող աղ-  
քատ տղայոց ճրի թուղթ, գիրք, մելան, գրիչ,  
և ըն. տալէն զինի տարին անգամ մ'ալ աղքատիկ  
մանկանց հագուած չինել կուտայ, չորրորդ Օժան-  
դակ Անճնուէրի նպատակն ալ կիրակէ օրեր հա-  
տալաւոր մարդկանց համար կրկին դպրոց բանա-

լով Սասուածաշունչի և Աւետարանի դասեր կու-  
տայ հանդերձ բացատրութեամբ, սոյն ընկերու-  
թիւնը բարեսիրական ալ կը կոչուի. հինգերրորդ  
Խնամակալ ընկերութեան նպատակն ալ է, Տաճ-  
կաց տուներու մէջ խառն բնակող աղքատ անտէր  
Հայ ընտանեաց համար Հայոց թաղերու մէջ տու-  
ներ շինել տալով բնակեցնել և ըստ կարի ինա-  
մել նիւթապէս, ու տղայքներն ալ ճրիարար դրու-  
րոցներու մէջ կրթել. վեցերրորդ Սենեքերիմեան  
բարեջան ընկերութեան նպատակն ալ, Սերաստիոյ  
Մեծապատիւ Թաղականաց արկղին նիւթապէս  
նպաստել է, որոնց Մեծ. անդամոց կեդրոնատեղին  
է Պօլտոյ Ղալաթիոյ Գոմէսիօն խանը, որոնք տան  
և հինգ օրը անգամ մը Սերաստիոյ Հայոց բարս-  
յական յառաջադիմութեան պէտքերը հողալու հա-  
մար ի ժողով կը գումարին, սուանց երբէք քըլա-  
նաջան զոհողութիւնք խնայելու : Եօթներրորդ ըն-  
կերութիւն մ'ալ կայ, ասոր ալ նպատակն է ընդ-  
իշխանութեամբ Մեծապատիւ Թաղականաց Չատ-  
կի և Ծննունդի օրերը աղքատաց դրամ բաշխել  
ըստ արժանւոյն :

Վսեմ նպատակք, չի կրցայ առանց աչերէս  
ուրախութեան մի քանի կաթիլ արտասուք թա-  
փելու, դիտել սոյն ընկերութեանց գովելի ըն-  
թացքը, որոնք ազգի ազգի ծառայութեամբ, թէ

նիւթապէս և թէ բարոյապէս կուզեն նպաստել  
 Ազգին, ինչո՞ւ ուրեմն Պօլսեցիքս չի պիտի կարող  
 ըլլամբ ընել, միթէ մենք ալ նոցա պէս Հայ չեմք  
 միթէ նոցա եղբայրները չե՞մք, ես բողբոլիւն կը  
 հերքեմ Հայոց շատերուն այն դադարարը թէ՛ Հայն  
 կարող չէ միաբանիլ, զրպարտութիւն մի է այդ մեզ  
 համար, մարդկային սեռին մէն մի անհատին,  
 բան մը միայն կը սրահսի, զոր եթէ ուզէ կարող է  
 առնել, այսինքն, ԿԱՄՔ ԵՒ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ,  
 այս երկու վսեմ բառերը, Ազգի մը, ընկերու  
 թեան մը, ընտանեաց մը, միանգամայն անհատի  
 մը երջանկութեան սկզբնապատճառն են . . . տար  
 երկինք որ այս ընկերութեանց առաջին սկզբուն  
 քնն ալ սոյն երկու բառերուն մէջ կայանար, այն  
 արեւն ամեն արդեւք և խոչնդոտք մեծաւ մասամբ  
 բարձուած պիտի ըլլային . . .



**ԲԱՐՔ ԵՒ ԿԵՆՏԱՂՔ**

Կուզեմ քանի մը խօսք ալ Սեբաստացի Հայոց  
 բնաւորութեան, բարոյականութեան և նիւթական  
 վիճակին վրայ ընել. այս ժողովուրդը իւր սրարդ և  
 գեղեցիկ բնաւորութեամբը դո՛ւր թեան արժանի է,

քանզի մեծաւ մասամբ միութիւնն ու խողաղու  
 թիւնը տիրած է, միանգամայն խիստ յարգող իւր  
 նախնեաց Ս. Կրօնին և ջերմեռանդ եկեղեցւոյ  
 մասին, նաև արթուն և հեռաքրքիր Հայաստանի  
 հին սոյնութիւնը տակաւին իրենց մէջ մնացած է,  
 ինչ որ ընեն սրտի մտօք կընեն, թէ աղքատաց և  
 թէ նեղերոց մասին խղճահար, չափէն աւելի  
 հիւրասէր, թէ իրենք և թէ տղայք փողոցէն անց  
 ներս տանն երբ հեռուէն կղերի մը դայը տեսնեն,  
 խոնարհ ակնածութեամբ մը կը կանգնին մինչև որ  
 կղերը անցնի, և իրենց առջևը եկած միջոցին գըլ  
 խոյ խոնարհութիւն մը ընելով կը պատուեն զանի,  
 թէպէտ ուսումնական չեն բայց ամենքն ալ ուսում  
 նասէր են. ամեն տարի այնանային եղանակէն բս  
 կսեալ անճնուէր խումբ մը, ազգային սրտածմիկ  
 ոյբերգութիւններ կը ներկայայնէ Մայր վարժա  
 րանի ներքնայարկին մէջ, ի ներկայութեան խուռն  
 ժողովրդեան, ազգութեան ոգին արծարծել տա  
 լու համար և անկէ հաւաքուած գրամը դպրոցած  
 բարեկարգութեան կը վաանուի :

Սեբաստացիք որ այսչափ յառաջացած են, և  
 ոչ մէկէ մը դրդեալ և կամ քաջալերեալ են, արգ  
 քանի՞ աւելի պիտի յառաջադիմին, եթէ ազգասէր  
 ուսեալ և բարեկիրթ անձինք իրենց առաջնորդ են,  
 այս մասին խիստ դատն գանդատներ կընեն տեղ

ւոյն հասարակութիւնը , և թէ ինչու տարուան մէջ հազիւ հազ 5-6 անգամէն աւելի քարոզ չի տրուիր իրենց , և տեղւոյն Արժ. վարդապետը վանքերու մէջբակուած մնացած են , և ի՞նչու ուսեալ քահանայներ չի պիտի ունենանք որ կըսեն գոնէ ամիսը մէկ երկու անգամ մեր տուները այցելելով բարոյական յորդորներ և խրատներ տան մեզ :

Թէպէտ Գեր. Առաջնորդ Հայրը աւելի եւս փառաքանօք իւր պաշտօնը անթերի կը գործադրէ , բայց այնպիսի ընդարձակ վիճակի մը մէջ մինակ մէկը որ մէկին կրնայ հասնիլ , հազիւ հողքազարական գործերը կրնայ կատարել , ասոր համար պէտք է այսպիսի մեծ վիճակի տէր եղող առաջնորդի մը իրաւասութեան ներքե , բանիբուն անձնուէր և ուսեալ վարդապետներ գտնուին՝ որ ի հարկին տեղւոյն ժողովուրդը կրօնական և բարոյական խրատներէ զուրկ չի մնայ :

**ԾԱ.**

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԻՃԱԿ**

Եկեղեցւոյ ժամասացութիւննին քիչ շատ օրինաւոր է , կայ ժամասաց տիրացուներու խմբեակ մը բաւական քաղցր ձայներով , կրթեալ ձայնաւոր

դասատուի մը ձեռօք : Նաև քահանայից դասն ալ օրինաւոր է կարգապաշտութեան մասին , սակայն Հայաստանեայց Եկեղեցւոյ անպատեհ , միանգամայն ըստ իմ կարծեաց արօրինի , Եկեղեցւոյ դէմ բան մը տեսայ , զոր չեմ ուզեր առանց նկատողութեան առնելու անցնել . Եկեղեցւոյ մէջ ամօթ համարելով գանձանակ պտտցնելը նորա տեղ քահանայի մը ժամարար եղած օրը մէյմէկ խապի յատկացուցած են , ինչպէս որ սովորութիւն է քահանայի մը ժամարարութեան օրը թափօրի եղնելուն խապիլը պատարագիչ քահանային ետեւէն կերթայ , բայց ասոնք առջեւէն կը տանին , և նոյն խապիլի մէջ հաւաքուած ստակն ալ անպատճառ սեղանին տուլեւ ժամարարի տոբերուն տակ կը դրուի :

**ԾԲ.**

**ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՆԻԹՍԿԱՆ ՎԻՃԱԿ**

Ժողովրդեան նիւթական վիճակնուն նկատմամբ ինչպէս որ հին սովորութիւն մ'է գաւառաց համար , որ ձմեան պաշարը ամառունէ ախտաւրով քիչ շատ կը պատրաստեն , նոյնպէս ալ ասոնք ձմեռները , քիչ մը ունեցած արհեստնուն քիչ մ'ալ ամառունէ համբարած պաշարնէն օգտելով , ամ

բայը ձանձուր կը կառավարուին . Պոլսոյ նման զուր  
տեղը սասակ վասնող խիստ քիչ են (1) և ոմանք  
ալ պանդխտութեամբ սասակ կը շահին :

ԾԳ.

ՍՈՎՈՐՈՅԹՔ ԿԱՆԱՆՑ

Կուզեմ մի քանի խօսք ալ Հայ կանանց սովոր  
ութիւններուն վրայօք գրել . այս սեռը ամառ և  
ձմեռ նաև սաստիկ ցուրտ ժամանակին ալ առա  
ւօտ և երեկոյ Եկեղեցի և վանքերը կերթան յուխտ  
և յերկրպագութիւն ընելու , ուսումնասիրութեան  
վստիարող , աշխոյժ և աշխատող են , ոմանք կտա  
կը գործեն և ոմանք գուլպա , որ խիստ յարգի է ,  
եթէ տուներնին հիւր մի երթայ չեն երեւնար , ի  
րենց մեծերուն հետ տարիներով երբէք չեն խօ  
սիր , մինչև որ հրաման չըլլուի . օրիորդք առանց  
խառտովանութեան կը հաղորդուին , տակաւին ան  
մեղ սեպուելով , որ այս ալ Եկեղեցւոյ օրինաց  
գէտ է . տարիքնին առնող կանայք միայն Եկեղեցի  
կրնան երթալ : Հազուամնին է , գլուխնին ֆէ՛ս վրան  
եաղճայով բոլորուած , ճակատնին ոսկի շարած , սո

(1) Թէեւ շոսալ ևւ սփնասէրներն ալ պակաս չեն :

վերաբար կարճ պարեգօտ մը կը հագնին , շրջազ  
գեստ հագնողները խիստ քիչ են , հագնողներն  
ալ կը մեղադրուին , վողոց ելած ժամանակնին մէյ  
մէկ սպիտակ սաւան կառնեն . վերջապէս կանայք  
հազուստի կողմանէ այն որ պարկեշտութիւն է ի  
րենց համար մեծ ամօթ համարած են , և այն որ  
ամօթ է , պարկեշտութիւն , վասն զի տակաւին այդ  
մասին վրայ գաղափար մը չունին :

Դարձեալ մէկ քանի նախապաշարեալ սովոր  
ութիւններ ալ ունին . Չատիկ և Ծննդեան գե  
շերները անպատճառ ձեռքերնին և ոտքերնին  
հիւս կը դնեն ի նշան և ի պատիւ ուրախութեան  
Քրիստոսի Ծննդեան և Յարութեան :

Երկրորդ Սւազ ուրբաթ առաւօտ երբէք չեն  
լուացուիր ու սուգ կը պահեն , Հրէայք զԻրխոսոս  
խաչելուն համար :

Երրորդ Ս. Գէորգայ տօնախմբութեան օր Հայ  
և Տաճիկ կանայք , գործելու համար երբէք ձեռ  
քերնին բան մը չեն առներ որպէս զի իրենցմէ  
ճնանելու ազոց վրայ բիծ և կամ արատ չ'գտնուի ,  
թէ կաղ և թէ կոյր ևն : Կանայք ասոր պէս շատ  
տեսակ անտեղի սովորութիւններ ունին , բայց հա  
մեստութիւննին ալ քիչ պատիւ չէ քաղաքին հասա  
րակութեան . թէպէտ հարսանեաց ձևերուն նը  
կատմամբ ալ կուզէի խօսել այս կարգին մէջ , աւե

լի յարմար դատեցինք առանձին յօդուածով մը յիշել մի առ մի :

ԾԴ.

### Յ Ո Յ Ն Ք

Յունաց ազգէն քառասուն տուն կազմող առանձին թաղ մը կայ՝ որ համեմատական հաշուով երկու հարիւրէն աւելի ժողովուրդ կենէ . մեծամասամբ արհեստաւոր և աղքատ , գրէթէ մէկ քանի վաճառականներ կը գտնուին . ունի Եկեղեցի մը միջակ գիրքով և մէկ քահանայ Տէր Անտօն անուամբ , և մէկ ալ դպրոց որուն մէջ կայ միայն հասարակ ընթերցանութիւն . իրենց մայրենի լեզունին բողբոջին կորսնցուցած մեծ մասամբ Տաճկերէն կը խօսին , Հայոց հետ խիստ սիրով են սուկաւթի ըլլալուն պատճառաւ :

ԾԵ.

### Պ Ա Պ Ա Կ Ա Ն Ն Ա Յ Ք

Պասպական Հայք ասան և հինգ տունէ բաղկացեալ ութսունէն աւելի ժողովուրդք կը կազ-

մեն . ունին մէկ Եկեղեցի Ս . Վլասիոս անուամբ և երկսեռ դպրոց մը , ընթերցանութեան պարապող բաւական աշակերտք , և առաջնորդ մի Տէր Սահակ վարդապետ ու քաղաքէն մէկ ժամ հեռու դէպ յարեւը Փրզընիկ անուամբ Պասպական Հայոց գիւղ մի կայ ըստ բաւականին մեծ , երկու հարիւր տունէ բաղկացեալ , նաև ունին հոյակապ Եկեղեցի մը և մէկ քանի վարդապետներ և մէկ ալ դպրոց հասարակ ընթերցանութեան պարապող աշակերտք . և երբեմն Ս . Նշան և Ս . Հրեշտակապետ վանքերը ուխտի կուգան անխտիր կերպով , կը վիպեն թէ՛ իրենց նախնիքները Բագրատունեաց դաւառէն դաղթած է հոն , անոր համար Բագրատունէն աղաւաղելով Փրզընիկ կոչուած են : Յիշեալ Տէր Սահակ գերապայծառը կը հովուէ զանոնք , ժողովուրդը մեծաւ մասամբ հողագործութեան կը պարապին , փոքր մաս մ'ալ շորեպանութեան գրէթէ աղքատ . հարուստք սակաւթիւ են :

Կանայք տեղակ մը հազուստ կը հագնին . այսինքն գլուխին բաւական Եաղճաներ պլլած երկայն շաւարայի նման մէկ կողմ ծռած , և երկար թեւերով սև կտաւէ պարեգօտ հաղած կը շրջին , և իրենք աշխոյժ վառվառն և խիստ ուժով են . կայ նաև Հայաստանի հնաւանդ սովորութիւն մ'ալ որ երբէք մազերնին չեն ցուցներ կարմիր լաթով մի

ծածկուած . սովորաբար Հայերէն կը խօսին , սա-  
կայն խիստ բիրտ հաղիւ հասկանալի :

Տասն երկու տունի չափ ալ Հայ—Բողոքական  
կայ (1) որոնք ունին մէկ ժողովարան և մէկ մի-  
սիօնար , դպրոց մը , որուն մէջ քսանի չափ աշա-  
կերտք , Թուարանութեան և աշխարհագրութեան  
կը պարապին :

Սերաստիոյ Հայք անտեղի սովորութիւն մի ալ  
ունին այն է Ս. Թորոս Թուցնել Բուն բարկենդանէն  
սկսեալ մինչև Ս. Թորոսի շարաթ օրը կուտեն կը  
խմեն , և Բագոսի երկրպագելով կը զուարճանան  
սակայն սրահոց կերակրով . և նոյն օրէն մինչև խթման  
օրը չոր պահք կը բռնեն , սակայն կը յուսամք քանի  
որ քաղաքակրթութիւնը յառաջ երթաց ասանկ տե-  
ղեր , այս և ասոր նման անտեղի սովորութիւնը  
կանհետանան օր ըստ օրէ :

Դարով մահմետական ազգին հինգ հազար տու-  
նէն աւելի կը հաշուի հանդերձ երեսնի չափ քրն-  
չուից (2) , որ համեմատական հաշուով քսան և հինգ  
հազարէն աւելի անձ կելլէ առ հասարակ , թէպէտ  
և Հայոց հետ առ երեսս սիրով են բայց ի ներքուստ  
խիստ կատեն իրր ռիսերիմ թշնամի մը , մանր և

(1) Քսան տարւոյ չափ կայ որ բողոքականութիւնը  
մուտ գտած է հոս պակասած է եւ ոչ աւելցած :

(2) Քնչու , որ բնիկ բուշա , չինկանէ :

չափահաս տղայք քահանայ մը փողոցը տեսած ա-  
ւաննին ամենքը մէկ բերան (Կեղիշ օղջ) կը պօւան  
և մեծերն բերններնուն իրր սովորական բառ մը  
( Կեպուր ) կանուանեն Հայերը , ասելութիւննին  
մինչ այն կետը հասած է որ , երբ Հայ մը շուկայ-  
էն վաճառք մը գնած ատեն Տածիկ մը տեսնէ զա-  
նի որ իրեն ալ պէտք է չի թողուր առնել Հայուն ,  
այլ ինքը աւելի վար գնով կառնու , որ տեսակ մը  
բարբարոսութիւն է այս , և միանգամայն շատ ան-  
գամ ալ կարգը եկած ատեն , կը հայհոյեն , կը նե-  
ղեն ու կը հարուածեն , սա ալ կայ որ տեղւոյն Ս-  
ռաջնորդէն ըստ բաւականի կ'ահրածեն , սակայն  
ինչ օգուտ որ հասարակութիւնը օր չըլլայ որ շինե-  
ղի ի սոցանէ , Հայերը կալուածատէր ըլլալու կը  
վախնան , կայ թէպէտ սակայն խիստ քիչ , քանզի  
հին ժամանակները , բաւական կալուածք բռնիյա-  
փշտակած են Հայոց ձեռքէն , որ այսօր փառաւոր  
կերպիւ կը վայելեն , թէ և հարուստք և կարու-  
ծատերք բազմութիւ են , սակայն մեծ մաս մ'ալ  
աղքատ են որ գրեթէ Հայերէն կը շահուին , մա-  
նաւանդ երկու հոգի կան , մին Սեհեթ Աւի և  
միւսն Դահիլ անուետով , որոնց համար կը պատմեն  
թէ վատութեան կողմանէ նշանաւոր հանդիսացած  
են , սակայն դաղանադողի , թէպէտ և կեղծ սի-  
րով կը վարուին , և խիստ ռիսերիմ թշնամի Հայոց ,

այս նշանաւոր անձերը ոչ արհեստ և ոչ վաճառականութիւն ունին, բայց սոսկալի կերպիւ հարուստ են, որովհետեւ բաներնին գործերնին յափշտակել է, զարմանալին սա է թէ՛ ինչպէս եղեր է՝ որ այսչափ հարստութիւն ձեռքերնին անցուցեր են՝ քանզի և ոչ մէկ Ազգի մը առջև պատիւ ունին: Տաճիկ կանանց մէկ բարբարոսութիւնն ալ սա է որ, Հայ կանանց հետ չեն լուացուիր, պիղծ համարելով զանոնք, ութը բաղանիս որոշած են որ Հայ կանայք իրենց յատուկ օրը երթալով լուացուին՝ այսինքն, շաբաթ և երեքշաբթի օրերը այն ալ կէս օրէն վերջը, եթէ աղքատ է նէ, զորս դու պատուիրեցիր, կամ կրնայ կէս մը լուացուիլ և կամ ոչ երսէք այնպէս դուրս կելլէ, մանաւանդ ձմեռուան եղանակին, որնոր հիւանդութիւններ ալ պատահած է երբեմն, իսկ եթէ հարուստ ընտանիք է՝ այն ալ ընծայներ պիտի բերէ բաղնեպան կնոջ որ գոնէ հանգիստ լուացուելով դուրս ելլէ, իրենք միշտ և հանապաղ արձակ համարձակ են ամեն պարագայի մէջ, վերջապէս այս և սոոր նման գեշութիւններ և բարբարոսութիւններ պակաս չէ, դժբաղդ Հայուն գլխէն, որովհետեւ անմեղ Հայը ուր որ երթայ դժբաղդարար նեղութիւնը իր հետ կերթայ կարծես Նախախնամութիւնը թշուառութիւն բառը դրոշմեր է խեղճ Հայուն ճակտին վրայ: Հա-

յոց այս մասը վասպուրականէն Սեբաստիա երկաւ կրկին աղատութիւն չգտաւ իրեն համար, սակայն յուսով եմք որ Օղոստափառ Սուլթան Համիտ բարեխնամ կայսեր շնորհիւ պիտի աղատի անշուշտ Հայոց Ազգը իրեն կրած նեղութիւններէն:

Ծ. 2.

Թ Է Ք Կ Է

Քաղաքին մէջ ունին Մահմետականք վեց թիւի՝ որք են.

- Նուր—Ալի պապա
- Ալի—Պապա
- Շէմի—Աղիզ
- Շէխ—Չօպան
- Մէվլահանէ
- Ապտիւլ—Վահայի

Ասոնցմէ մէկուն վրայօք հարկ կը դատիմ համաօտիւ բացատրութիւն մի տալ՝ այն է՝ Աղոթիւլ Վահայի անուն թիւիէն՝ որ քաղաքէն սակաւ ինչ դուրս Արեւելեան կողմը ահագին ապառաժուտ ամենաբարձր բլրոյ մը գագաթը զետեղուած ըլլալով քաղաքին ամբողջ տարածութիւնը կը ներկայացնէ կան նաև տասը կամ քսան տուն միայն Մահ-

մետական և մէկ ալ նորաշէն աղբիւր , բայց չուրը ոչ այնչափ անուշ , այն վայրը Տաճկի կանանց ուխտատեղի հանդիսացած ըլլալով միշտ կը յաճախեն և շէնքին մէջ արևմտեան կողմը քարուկիր գմբէթաւոր և վայտէ վանդակներով ծածկուած փոքր սենեակի մը մէջ կը կենայ Ապրիլ-Վահագնի երկար գերեզմանը դէպ յարևելս ուղղուած , և ուխտի յաճախող Այլազգիք ինքզինքնին արժանի չի համարելով այն սենեկէն ներս մտնելու , այլ դուրսը վանդակներու առջև կանդնած ամենայն զգուշութեամբ կաղօթեն . և գերեզմանին վրայ ձգուած կան ծանրագին արուոցներ . Հայ սնտուխազաշտ կանայք , Ս. Յովհաննէսի անուն տալով հոն ուխտի կերթան շարունակ ամեն շաբաթ . սենեկէն դուրս որահին մէջ հիւսիսային կողմը սենեակ մ'ալ կայ , որուն մէջ բաւական հողէ շինուած մեծ և փոքր գերեզմաններ կան , Շէյխին ըսածին նայելով , Պաղտատու Խալիֆաներն են եղեր , հարաւային կողմն ալ սենեակ մը կայ՝ որք Շէյխերուն աղօթատեղին է , նաև քաղաքին հարաւային կողմը քառորդ ժամու հեռաւորութեամբ և Սյիս գետին մօտ քարաշէն և գմբէթաւոր վայր մը կայ՝ որ նա ալ Տաճկաց ուխտատեղի է :



ԾԷ.

Մ Ջ Կ Ի Թ Բ

Մահմետականք քաղաքին մէջ 50 նէն աւելի մեծ և փոքր հոյակապ Մղիկիմներ ունին , քսան և հինգ հատի չափ ալ դասարաններ (Մեքրեհէ) որոնց մէջ երեք հնութիւն միայն կայ , որ այժմ Մէտրէսէ ըրած են , Շիֆայի , Կէօյ և հաճի Մախուս անուամբ :

Շիֆայի ըսուածը քաղաքին դէպի հարաւարձրացած հին շէնք մ'է խիստ ընտիր ճարտարութեամբ , տեսակ մը սև քարերու վրայ բարակ բանուածքներով , և շէնքին դրանը վրայ , Պարսկական չիֆի դրերով արձանազրութիւններ կային , որոնցմէ իմացուեցաւ որ , Մէլիս շէն անուամբ Պարսից թագաւորին օրով շինուած է , և Տաճկաց Վէզ թուականին աւարտած . ասոր նման հին շէնք մ'ալ իւր դէմը կայ , ըստ Տաճկաց ՎՎ . թուականին շինուած . բայց այժմ աւերակ դարձած ըլլալուն արքունի յարդանոց ըրած են , շէնքի աջ կողմն պարսպին հիման տակ Սենեքերիմ Հայոց արքային պարսպ գերեզմանը ըլլալը (1) կը վկայեն , որուն

(1) Սենեքերիմայ գերեզմաններն կարծուած անգլիս Քալէ մէարէսէսի կ'սուի . հոս կը գտնուի նախնեաց շատ մը զէնքեր , նետ , աղէղն , թուր , նիզակ , վաճան եւ թրնգանօթք երկաթեայ ուռմբեր եւլն :

մտա փայտէ վանդակներով շրջապատուած փոքրիկ սենեակ մը քարուկիր և վերաբաձև դմբէթով մը իւր մէջը պարունակեալ հողէ շինուած մեծ և փոքր գերեզմաններ, որոնց մէջ կը հանգչի Մելիք շահ իւր ընտանեօքը :

Կէօյ ըսուած Ռաբէսէն առաջինէն վար չի մնար հնութեան կողմանէ, այս ունի իւր մեծ դրան առջև Ռաբէի ձեւով շէնքեր բարձրացած, որոնց վրայ մանտրտիկ և դոյն զգոյն ապակիներով զարդարուած է, արեգակին ճառագայթներէն աստղի նման փայլըլալով, որուն երբեմն Սրչալը ճափ աւնունը կուտան : Դրան վրայի երկու կողմերը քարի վրայ քանդակուած արծուի պատկերներ և իննա կան գլխով վիշապներ կան, շէնքին մէջ խիստ ընդարձակ և վրան ալ բաց է, քարաշէն կամարներու ներքև սիւներ կանդնած կան : մէջտեղերնին ցնցուղ մը ունենալով այս ալ Բէյը Իւրեֆ օղլու Բըշ Արսլան Պարսից շահը շինել տուած է Տաճկաց Դ. թուականին, ինչպէս որ դրան վրայի խիֆի գրերով արձանագրութիւններէն տեղեկացանք (1) շէնքին մէջ կայ մշտահոս քաղցրահամ ջրերով աղբերակներ, և դունէն դուրս գէպ ի աջ կողմը քարաշէն մեծ աղբիւր մը թաղեցւոց համար :

(1) Կէօյ մշտրէսէն կը կարծուի որ Սենեքերիմ Հայոց արքային ասպարանն եղած ըլլայ :

Հաճի Մասնապ Ռաբէսէն ալ ճիշդ միւսներուն նման շէնք մ'է սակայն չը գիտցուիր թէ ժամանակին ասոնք Պալատ էին թէ Մղկիթ կեսաւեր ըլլալուն համար, ոմանց մէջ քոսն և ոմանց մէջ եօթնական նորաշէն փոքրիկ սենեակներ կան, որոնց մէջ «օֆասիերը դատաւութիւն կընէին, այսպիսի շատ հնութիւնք կան, սակայն բոլորովին աւերակ եղած ըլլալուն արժան չը գատեցինք յիշել : Մահմեաականք մասնաւոր թաղերու մէջ բաւական դպրոցներ ունին, և մէկ ալ Բիշափէ անուամբ արքունի դպրոց՝ որուն մէջ ըստ բաւականին ուսանող աշակերտք կը գատտարակուին : սակայն շիտակը ըսելու համար, աշակերտք փոխանակ կըրթութիւն և ուսմունք ուսանելու, շուկաներու և փողոցներու մէջ դպրոցականի մը չը վայելիւր կերպիւ, վարուիլ կ'ուսանին, մանաւանդ Հայ տղայոց հետ՝ որ կարի թշնամարար կը վարուին, և զուկ . . . Տէրութեան մեծադուամար ծախսերն ի զուր կը վատնուին . . . :

**ԾԲ.**

**Ս. ԱՌԻՍԱԻՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ**

Քաղաքին արևմտեան կողմը թէպէտև ի հնուց կառուցեալ, Հայոց Ս. Լուսաւորիչ անուամբ եկեղեցի մը ունեցեր ենք, սակայն ասկէ 274 տարի յա-

ուսջ Օսման Բաշա անուանով բռնաւոր Տաճկի մը ձեւ  
ուօք բռնի յափշտակած ըլլալով մղկիթ են ըրեր ,  
տակաւին իւր մէջ է Մկրտութեան աւաղանը , որ  
այժմ որսնալիակ եղած է :

Նոյնպէս Ռուս Բաթի անուամբ մեծ և ընդար-  
ձակ քարուկեր շէնք մը դէպ յարեւելս կոյս . շէն-  
քին վրայ տափարակ ըլլալով յիսուն մեծամեծ քա-  
ւանկիւնի սիւներու վրայ հաստատուած է . ծե-  
րունիք կը վկայեն թէ այս ալ ասուհօք Յունաց Ե-  
կեղեցի մ'է եղեր :

**ԾԹ.**

**ՎԵՆՐԷՊ ՊԱՆՃԵՍԻ**

Քաղաքին արեւելեան կողման վերջին ծայրը  
Վեներեայ պահճի անուամբ դրօտալայր մի կայ . որ  
հիւսիսային կողմն ալ բաւական հեռու Մեծ-  
անուն Տաճկաց գիւղ՝ որ իւր մօտականերէն Միֆի  
անուն մարտը ջուր մը բխղելով բաւական մեծ-  
կակ , վտակ մը ձեւանալով կուգայ դէպ ի հարաւ  
օձապտոյտ ճանապարհաւ քաղաքին առջևէն ուղ-  
ղակի կը թափի Ալիս գետը . ջրոյն չըջանը վերջիչ-  
եայ պարսեղին մէջէն կանցնի . արդէն պարտեզը  
բաւական ծառերով և մտրդ ագեաներով զարդար-

ուած զուարճալի տեսարան մը կը ներկայացնէ և  
ամեն ատեն արք և կանայք խուռն բազմութեամբ  
կերթան հոն դրօսնուլ :

**ԿԳ.**

**ՋԵՐՄՈՒԿՔ**

Նաև քաղաքէն երեք ժամու չափ հեռաւո-  
րութեամբ դէպ ի հարաւ գետնէն տաք ջուր բղ-  
խելով , շատ մարդ լուացուելու կերթան զոր տաք  
ջերմուկ կանուանեն . ասոր մօտ Եֆէ անունով ջուր  
մ'ալ կայ՝ որ դարձեալ գետնէն կը բղխի քարա-  
նալով բլուր կը ձեւանայ : Քաղաքին հիւսիսային  
կողմը երեք ժամ հեռաւորութեամբ ֆլուրը ա-  
նուն ձորանման վայր մը կայ , իւր մէջ քարաշէն  
փոքրիկ լիճ մը ունենալով , ասկէ ալ հանքաջուր  
կը բղխի , ասոր ալ կ'սուի պտղ ջերմուկ . և իբր  
դրօտատեղի շատեր կերթան երբեմն : Դարձեալ  
քաղաքէն մէկ ժամ հեռու դէպ յարեւմուտս կոյս  
կապուտիկ անուն ձոր մի կայ , որուն մէկ ծայրէն  
ջուր բղխելով Բնծորակ անունը կուտան , ուղղակի  
Ալիս գետը կը թափի : Սերաստիոյ մէջ գտնուող  
բոլոր ազիւրներուն երթալիք ջուրը քաղաքէն  
սասն երկու ժամ հեռաւորութեամբ դէպ հիւսիս

Չարա անուն գիւղի վերի ծայրէն բղխելով շիտակ կուգայ մէն մի աղբերոց բաժնուիլ, որուն աւելորդ մասը քաղաքէն անցնելով տասն և հինգ հատ ջաղացք դարձնելու կը ծառայէ, և կրկին Ալիս գետը կը թափի :

Քաղաքին շուկային հարաւային ծայրը երեք աչքէ բաղկացեալ քարաշէն խալիսը անուն կամուրջ մի կայ, որուն տակէն Մահաբա գետ ըսուածը կանցնի և գարնան եղանակին ջուրը բարձրանալով եզերքը գտնուող շէնքերուն վնաս կուտայ :

**ԿԱ.**

**ՊԷԶԻՐՃԻՆՈՅ ԵՒ ՆՈՂ-ԴԱՐ**

Քաղաքէն դարձեալ քառորդ ժամու հեռաւորութեամբ դէպ յարեւել կայս Պէշրէնի անուն արտ մը կայ՝ որ ժամանակին բազմահայ տեղ մի է եղեր, և այժմ հաղիւ մէկ քանի Հայոց տուն կը գտնուի, և հաւաստեն թէ Միթիթար Աբբան 1676ին այս տեղ ծնած է, որ այժմ աղարախանման տեղ մ'է եղած. այս տեղին մտա Հողբար անունով գիւղ մը՝ տասն երեք Հայոց տունէ կը բաղկանայ : Ունին մէկ Եկեղեցի և մէկ քահանայ Տէր Մարտիրոս անուամբ, սակայն դպրոց չունին, Եկեղեցին բաւա

կան դումար մը կը պահանջէ ժողովրդէն, բայց շատ ատենէ մնացած ըլլալուն ի կորուստ համարուած է. հասարակութիւնը բաւական կարողութեան տէր անձինք են. դպրոց մը կարող են բանալ, բայց ուսման ճաշակը գեռ չեն զգացած. ընդհանրապէս հողագործութեան կը պարապին : Սոյն տեղն հողով բարձրացած ըլլալուն Հայոց իշխանութեան ժամանակէն սկսեալ Հողբար կ'կոչուի : Յիշեալ գիւղի ետեի կողմը դէպ ի արեւելեան հարաւ Ասպա անունով բարձր բլուր մի կայ՝ որ պառածուտ մ'է, և քաղաքին պէտք ըլլալիք կերերը ասկէ կեննէ :

**ԿԲ.**

**ԱԼԻՍ ԳԵՏ**

Գալով Ալիս գետին նկատմամբ կուզեմ փոքր ի շատէ համարուող տեղեկութիւն մը հաղորդել ազնիւ ընթերցողաց : Այս գետը կարմիր գետ ալ կըսուի որ ըստ Տաճկաց Քըլըլը ըստ : Անտիտարոս ըսուած թեւերով լեռանց գետերուն մէկն է որ հին ժամանակները Ալիս անունը կուտային : Կարմիր գետ անոր համար կըսուի որ ջուրը քիչ մը կարմրադոյն է՝ և ինչ պատճառաւ ըլլալն ալ քիչ մը վարապէս պիտի բացատրեմ : Սոյն գետը Սեբաստիոյ քաղաքէն ութ ժամ հեռաւորութեամբ դէպ յԱրեւելս

երկու անգղին լերանց ստորոտէն կը բղխի, այսինքն մէկ մասը Գեօօէ Գաղի ըսուած լերան ստորոտէն և միւս մեծ մասն ալ կարմիր ըսուած լերան ստորոտէն որ Մահմետականք Քըղըլ Գաղը կանուանեն, յիշեալ Գեօօէ Գաղի ըսուած լեռը ըստ պատմութեան Սուկաւէա կը կոչուի, աւանդութեամբ կը պատմեն թէ Սիւքիասանց նահատակութիւնը նոյն լեռան ստորոտը եղած է, նաևս հին ժամանակներէ մնացած աւերակաց հետքեր կը նշմարուին, լեռը խիստ գեղեցիկ զուարճալի տեսարան մը ունի, անգղին վիթխարի բարձր գիւրջ մը՝ որուն գագաթը սպառաժուտ և միանգամայն ճիւնտաբատ, և իւր բարձրութենէն քսան ժամու չափ հեռու, Եօպին Գարահիսարի գաշտը և թէ բոլոր Սեբաստիոյ գաշտերը կը տեսնուին, թէ և ամեն մարդ կարող չէ ելլել: Աւելի զմոյլելին իւր ստորոտներն են որ ազդի ազդի ստղատու ծառերով, անուշահոտ ծաղիկներով, և գալարազեղ գեղեցիկ մարդագետիններով զարդարուած, միանգամայն կարկաչան հոս ջրերով, և զովարար օգով, կարծես այսպիսի վայրերը մարդկային ազդին կրկին կեանք կը պարզեւեն, ամեն տարի գարնան եղանակին բոլոր գիւղերէն իրենց նախիրներով այս լեռան ստորոտը կը խռնին վրաններու տակ, գեղեցիկ եղանակը անցնելու համար, միանգամայն իրենց հետ տանելով ունեցած

ըզտը, կովերը, եղները, ոչխարները, և ըն: Հոս այնպիսի խոտեր կան որ արծուոյ ոչխարաց և թէ դառանց ասամուռները կը ոսկեղօծեն և կը պարարեն: Գիւղացիք կը պատմեն թէ այս լեռան ըստորոտը արածուոյ նախիրը ամեն տեղէ աւելի հասոյթ կը բերեն, և թէ ուտածնին խիստ համով, կաթերնին և մածուննին ալ շատ և թէ անուշ կը լինին:

Ինչպէս որ ըսինք վերը թէ գետին ջուրին մեծ մասը կարմիր լեռան ստորոտէն կը բղխի, որնոր միւսին հետ միանալով մեծ գետ մը կը կազմէ, արդէն սոյն լեռան հողը կարմիր բլրալուս առթիւ գետին ջուրն ալ կարմրադոյն է, որքոտասպոյտ ճամբաներէ շրջան ըրած կիջնէ գեյլ յՍրբամուսա Պաֆլա գիւղաքաղաքին վերի ծայրէն Սեաւ ծով կը թափի տակայն մինչև որ իւր շրջանը կատարէ անձուկ լեռներէն և ճանապարհներէն օտար ջուրեր խառնուելով բուն ջուրին գեղեցկութիւնը ու համը կը փոխեն, և չը խմուելիք դիւրի մը կ'վերածեն:

Երգ.

### Կ Ա Մ Ո Ւ Ր Ջ Ք

Սեբաստիոյ մօտ Ս. լիս գետին վրայ երեք կամ մտք կան բարձրացած, Ս. ը կըսուի ծուռ կամուրջ

ուրկէ Բաբելոն կերթուի, Բ.ը Բէսէկ կամուրջ ուր  
կէց ալ Կապադովկիա, Գ.ը է Պողաղի կամուրջն՝  
որուն ներքև սենեակ մը կայ, այս ալ Բաբելոնի  
երթևեկութեան կը ծառայէ :

Էյրի Բեֆրի- որ է ծուռ կամուրջ կը տպա-  
մեն թէ Սենեքերիմ Հայոց արքային աղջիկը  
չինել տուէր է, որ կոփածոյ քարերով հին շէնք մի է,  
գետին դորութիւնը կամուրջը չի վնասելուն համար  
գլխամամբ ծուռ և խոտորնակ շինուած է, ուրկէ  
առնելով ծուռ կամուրջ անունը տուած են : Յիշ-  
եալ ծուռ կամուրջը 18 կամարներով շինուած է,  
Բեֆի կամ Բըլըլըսուած կամուրջն ալ Արևելեան  
կողմը կոփածոյ մեծահատոր քարերով կառուցեալ  
է վեց կամարներու վրայ :

Այս երեքն ալ քարուկիր և հաստատ շի-  
նուածքներ են հին ժամանակներէն մնացած :  
Տեղւոյն բնակիչք զարմանալի պատմութիւններ կը  
նեն գետին վրայօք, կրսեն թէ՛ երբ դեար բարձրա-  
նայ բոլոր դաշտերը ծով կը կտրին ու կը վնասուն  
և բնակչաց պէտք ըլլալիք կոծրները ու տուն շի-  
նելիք փայտերը կը բերէ Արևելեան կողմէն ի Սե-  
բաստիա :

Այլս գետուոյն Հարաւային կողմէն գրեթէ  
մէկ ժամ հեռու որութեամբ Բարսաշուր ըսուած  
լեռան ետևի կողմէն երկար դօստով պատած թի-

ճիւղի անուն լեռը բարձրացած կերևի, որուն Արև-  
ելեան ետևի կողմը այս լեռնէն բարձր լեռ մը է,  
րեք ճիւղերու բաժնուած ձիւնապատ, որուն գա-  
զաթան Ռոմբալէ կրսեն, այսինքն կիսա-  
երկրորդ մասին Բարսաշուր որ խիստ վտանգաւոր  
տեղ մ'է և վերջի մասին ալ Տոթիկ անունը կու-  
տան. սոյն լեռը իւր երկար թևերով կը հասնի  
մինչ Հայաստանի սահմանները, որոնց մէջ աւազակ  
քրթերու բնակարանն եղած է :

Երր.

ԼԻՃ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Սեբաստիոյ քաղաքէն դուրս դէպ ի Հարաւ-  
չորս հինգ վայրկեան հեռու որութեամբ Այլս գե-  
տին մէկ ժամ մնալով դաշտի մը մէջ Քառասուն  
Մանկանց փոքրիկ լիճը կայ, ո՛ր երկրորդ Յորդանան  
լեռի Շարականը. լճին դերքը դաշտային է և շուրջը  
հաստատ որմերով հիւսուած վրան գոց, և բոլոր  
չրջապատը ութսուն ոտնաչափ : Շէնքին ալ բարձ-  
րութիւնը տասն երկու, մօտերը ճանկաց տուներ  
կան, որոնք Բըրսաշուր ըսելով խիստ կը պատուեն և  
երբեմն շէնքը պէտք մը ունենայ կ'չինեն, շէնքին  
Հարաւային կողմէն շուրջ տակաւ առ տակաւ դուրս

կր հոսէ, լիճք բաւական խորունկ և մէջ տեղը կըր  
 և կարճ սիւնակ մը կանդնած կայ, ջուրը սև և լե-  
 ղի է: Քառասուն Մանկունք, թէնկղեախանոս  
 արքայէն առաջ Ալիրիկողայէ անիրաւ դատաւորին  
 տուած վճռովը ջրոյն մէջ խեղդամահ ըլլալով երբ  
 կը նահատակուին, սրբոց մարմինները լծէն Ալիս  
 գետը կը ձգեն, որ նոյն ժամանակները քաղաքին  
 մէջ բնակող սրբակեաց Պետրոս անուն Եպիսկոպոս  
 մը դանուելով՝ որուն տեսլեանը մէջ կը հրամայուի  
 Սրբոց մարմինները գետէն ժողվելով ամիրտիւն =  
 Կ'երեւի որ նոյն արեւնէն Հայեր կան եղբ Սեֆապիոյ  
 մէջ, որ Քրիստոսի խնամանէն երես հարիւր քարի կան  
 յիշ Կալ ասելի եպոս եղած է այն նահապետութիւնը  
 ըստ Պատմութեան վարձ Սրբոցի = վերոյիշեալ Պետրոս  
 Եպիսկոպոսը նոյն ժաման գետին եղերքը երթալով  
 կը նայի որ Սրբոց Մարմինները ջուրին երեսը աստ-  
 ղի նման կը փարիլըան, իսկոյն ամենայն զգուշու-  
 թեամբ հաւաքելով, լծին արեւմտեան կողմը վեց  
 եօթը վայրկեան հեռաւորութեամբ ընդարձակ  
 տեղ մը զատ զատ կամիրտիէ, և վրանին մէյ մէկ  
 անշուք ազաւած քարեր զետեղելով, որ սյոժմ  
 գետնի հետ հաւասարած է, սրոց վրայ քառասուն  
 դմբէթէ բաղկացեալ վանք մը կը շինուի յանուն  
 Քառասուն Մանկանց, որ սյոժմ բողբոլին աւերակ  
 եղած, միայն Սեղանը կ'երեւի մէկ երկու շարժա

կանքարերու վրայ զետեղուած, ուր ժողովուրդը ա-  
 մեն ատեն կը դիմեն ուխտի, նաև կայ իւր մէջ  
 Հայոց գերեզմանատուն մի ընդարձակ և մեծ, ա-  
 ւանդութիւնը կը սլաամէ թէ Քառասնից վանքը  
 կործանողը Հայ քահանայ մ' է եղեր, որ յետոյ  
 մահմետական կրօնը ընդունելով զարիպուրիան անու-  
 նը դրուէր է, ուրանայէն վերջը գործեր է այդ  
 անիրաւութիւնը, որ մինչև ցարդ ուխտի դացող  
 ժողովուրդը ուրացեալին գերեզմանը կը քարկածեն,  
 անոր կէս ժամ դէպ յարեմուտս հեռաւորութիւն  
 ունի յիշեալ գերեզմանատունէն:

**ԿԵ.**

**ԳԵՐԵԶՄԱՆՔ ՍՐԲՈՑ**

Նոյն գերեզմանատան մէջ նահատակեալ Ս.  
 Ստեփաննոս Արքեպիսկոպոս անուամբ Հայրապե-  
 տի գերեզման մ'ալ կայ, որուն համար թէպէտև  
 յայտնաւորքը կը վիսցէ, բայց չը դիպցուիր թէ  
 այն է թէ ոչ, քանզի շիրմին վրայ ոչ արձանագ-  
 ըութիւն կար և ոչ թուական. հին ժամանակէն  
 քարէ խաչեր կանդնած կար, և հին ձեւերով գե-  
 ընզմանի քարեր կը դանուէր ձիաքար անուամբ.  
 գերեզմանատան միայն հարաւային և արեւմտեան

կողմերը որմափակ էին և միւս կողմերը բաց : Լճին մօտերն է Ա. քրեկողայէ դատաւորին ապարանքը և բաղանիսը, որ Քառամսից մէջէն մէկը չը դիմանալով ցրտոյն բաղանիս խոյս տուաւ, թէպէտև այժմ աւերակ դարձած է :

Նաև Սերաստիայէն երկու ժամու հեռաւորութեամբ դէպ յարևելք Ս. Սևէրիանոսի գերեզմանը կայ՝ որ Հայք ամեն տարի ուխտի կերթան որն որ Քառամսից մանկանց ժամանակակից էր :

Չի մոռնանք զաւօք սրախ, և առանց աչերնէս արտմութեան արցունքներ թափելու յիշել թէ այն անդուլթն Լէնկթիմուր, Քառասուն մանկանց վայրէն մինչև Ալիս գետ երթալու ճամբուն վրայ, չորս հազար դժբաղդ Հայեր ողջ ողջ հողերու թակ թաղեր է, որոնց հետքերը և շաւիղները չեն կըրնար վրիպել հեաաղննի մը աչերէն, որ խիստ քիչ կերպով կը նշմարուի. յիրաւի չեմ կարծեր որ ըլլայ Հայ մը, թէև ազգատեաց և խստասիրտ, այս վայրը հասած ժամանակ ձեռքը ճակտին դներով պահ մը չողբայ այս նահատակաց վրայ, միանգամայն ստակալով չերկմտի Լէնկթիմուրի պէս անդուլթ ճիւղաղի մը մարդկային սեռէն ըլլալուն համար :

Եր. Գ.

### ԽՈՆՐԿՏՈՒՐ

Այլ և երկու ժամու հեռաւորութեամբ դէպ ի հարաւ ձորաձև դաշտի մը մէջ Ս. Աստուածածնի անուամբ ի հնուց մնացած վանք մը կայ, բայց այժմ աւերակ դարձած է և նոյն տեղին Խոնրկոսի կ'սուի որ ըստ Տաճկաց Խոյ Էւսէն, միայն մատուռը կեցած՝ որուն հիւսիսային կողմը մէկ քանի սենեակներ շինուած են, որպէս զի ուխտաւորք պատասխարուին. ողբ և ջուրը խիստ անողջարար և անտարանը խիստ զուարճալի. ունի իրեն յատկացեալ նախիրներ, որոնք մէկ քանի բարեպաշտ անձանց կողմանէ նուիրուած են : Յիշեալ աւերակ վանքը չէն ժամանակին բաւական արտեր ունեցեր է թէպէտ, սակայն Տաճիկք բուլոյն ալ յափշտակած կը վայելին այժմ. անոր կից դէպ յարևելք Պօղաղի կամուրջի մօտ Սոխիերուն (1) անուամբ վանք մ'ալ ունեցեր ենք. առանձնակեաց կրօնաորներուն համար, որ այժմ գետնի հետ հաւատարած և աւերակ դարձած է, միայն հետքերէ կըրնան նշմարուիլ : Դարձեալ քաղաքէն կէս ժամ հե-

(1) Սոխիերուն բառը, սոխ ուտելինշանակէ թերևս այն ժամանակի կրօնաւորք աւելի սոխ ուտելու վարժուած ըլլալու են :

ուսուորութեամբ դէպ յարեմուտս կոյս Ալիս գե-  
տին մօտ Ս. Թորոս անուամբ վանք մը կայ բայց  
այժմ բոլորովին հիմնայատակ եղած է : Դարձեալ  
քաղաքէն տասներկու ժամ հեռուորութեամբ դէպ  
յարեւելեան հարաւ Հայոց գիւղ մի կայ Զրեոցայ (1)  
անուամբ որուն կից յանուն Սրբոյն Գեորգայ վանք  
մը կայ եղեր , այս ալ նոյնպէս աւերակ դարձած է  
միայն տեղը յայտնի կենալով , գիւղացիք ամէն ա-  
տեն ուխտի կերթան :

Այլ և սա ալ չի մոռնանք յիշելու քաղաքէն  
դուրս Գեորգի կամարձէն հիւսիսային կողմը քառորդ-  
ժամ հեռուորութեամբ Շահապօսթի անունով ա-  
մուր շէնք մը ամենակուլ ժամանակին հարուած-  
ներուն դէմ դնելով մինչև հիմա կանգուն կեցած  
է չորս սեան վերայ , այս շէնքը ձմեռ ատեն ճա-  
նապարհորդաց ազրատանարանն է , իւր ականա-  
կիտ աղբիւրներուն ջուրերն անցորդաց ծարաւը  
կը յագեցնէ , որ դէպ յարեմուտս կիցնայ , միշտ Պօլսոյ  
ճանապարհորդք և թէ Տէրութեան թղթատարք  
այս ճամբով կերթեկեկեն ձմեռ ժամանակ :

(1) Գեոցայ վանքին տեղը ժամանակաւ դեւեր  
բնակեցնուն համար , և վերջը հալածուելով Ս. Գեորգ  
վանքը շինուած ըլլալուն , վանքն ալ կը յիշուի Գեոցայ :

**ԿԷ.**

**Ք Ե Ր Ք Ե Ր Կ Ր Ի Ն**

Սերաստիոյ գլխաւոր յատուկ բերքն է , ցօ-  
րեն , գարի , վիք , գուլպայ և խափէշ ըսուած  
տեսակ մը ներկուած կտաւ , որ յատուկ Սերաստիոյ  
մէջ գործածելի է ունի նաև կարմիր բանջար չա-  
փէն աւելի քաղցր , ուրկէ լաւ չարար կը գոյանոյ  
ու բաւական ալ շահ կը բերէ՝ եթէ չարարի մը գոր-  
ծարան ըլլայ : Սերաստիոյ քաղաքին տուներուն մեծ  
մասը թէպէտև կղմինտրով ծածկուած է , բայց կայ  
մաս մ'ալ որ հողով է , այսպիսեաց կ'սեն տանիսաւոր  
Պօլսոյ ձեւերով բաւական շէնքեր ալ կը գտնուին :

**ԿԸ.**

**Մ Ե Ծ Ա Ն Ո Ւ Ն Ա Ր Ք**

Սերաստիոյ Հայոց երեկի աղբայնոց անուան-  
քըն են ,

Աղապապեան	Մ. Բաբէլ	էֆ.
Ղասապապեան	Մ. Գրիգոր	»
Պտապապեան	Կարապետ	»
Անդրէասեան	Մ. Մկրտիչ	»

Անդրէասեան	Թորոս	էֆ.
Ղրմիշեան	Յարութիւն	»
Տէրպապեան	Մ. Սէրուբէ	»
»	Մ. Յովհաննէս	»
Գիւրքեան	Մ. Մկրտիչ	«
Գրգիլիկեան	Յարութիւն	»
Բասիկեան	Խաչեր	»
Տէլի Ղաղարեան	Մ. Մկրտիչ	»
Ապանեան	Մ. Մարտիրոս	»
Մեծ մերուքեան	Մ. Մարտիրոս	»

Երեսնի Տաճկաց անուանքն են

Ահմէտ պէյ	Հաճի Ալի պէյ զատէ
Տէվրիշ պէյ	Ֆերթէր զատէ
	Խօճա պէյ զատէ
Մուտտաֆա պէյ	Թողուշ զատէ
Իպրահիմ պէյ	Միւթէվէլլի զատէ
Խանայիլ պէյ	Ալէտտին բաշա զատէ
Իպրահիմ պէյ	Պաճանակ զատէ

Երթ.

Ժ Ո Ղ Ո Վ Ք

Սեբաստիոյ քաղաքական իշխանութեան և Երկրին վերաբերեալ ժողովոց որքանութիւնքն և նուանքն են :

Ա.	Խտարէի մէջին
Բ.	Թէմիդի Տիվան
Գ.	Թէմիդի հուղուգ
Դ.	Թիմարէթ մուհաքէմէսի
Ե.	Պէլէսիէ մէջիսի
Զ.	Լմլաք քօմէսիօնու.



ԹԵՄՔ ՍԵԲԱՍՏԻՈՅ

Սեբաստիոյ վիլայէթի ներքե զանուոյ ամբողջ Թէմերը :

Սեբաստիա	Արեւիկան	Հարաւ	— Կուսակալութիւն
Կիրատն	»	Հիւսիս	— Մութասարֆիին
Տիլիլի	»	Հարաւ	— Գայմազամութիւն
Շապին-Գարահիսար	Արեւելք		— Մութասարֆիին
Ամասիոս	Արեւիկան	Հիւսիս	— Մութասարֆիին
Տէրէնտէ	Արեւմտն	Հարաւ	— Գայմազամութիւն
Կիւրիւն	»	»	— Գայմազամութիւն
Եւզուկիայ	Արեւիկան	Հիւսիս	— Գայմազամութիւն
Մարդուան	»	»	— Գայմազամութիւն
Զիլէ	Արեւմտն	»	— Գայմազամութիւն
Թուրխալ	Արեւիկան	»	— Միւտիրութիւն
Նիքսար	»	»	— Միւտիրութիւն
Հէրէք	»	»	— Միւտիրութիւն

Վերոյիշեալ Թէմերը Սեբաստիոյ վիլայէթի յատ

կանարդիացիք ընդ ամենը տարին երեսուն և տխր  
միջինն հարիւր երեսուն հազար ինը հարիւր քսան և  
մէկ դահեկան տուրք կը վճարեն Արքունի դան  
ձուն, ամեն տեսակ տուրքերը միասեղ ըլլալով:

ՀԱ.

ԱՐՉԵՍ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կողմերն նաև Սերաստիոյ մէջ գտնուած ար  
հետներուն, կրտսկներուն, պանդոկներուն, և  
բարանխներուն վրայ ալ փոքր է շատ տեղեկու  
թիւն մի տալ:

Սերաստիոյ մէջ երեսնի չափ արհեստներու  
տեսակներ կան, որոց մեծ մասն Հայոց կը վերա  
բերի:

Նոյն քաղաքին մէջ ընդարձակ շուկաներ ալ  
կան մաս առ մաս բաժնուած, որոնց մէջ բաւական  
կրտսկներ կան ամեն տեսակ վաճառքներու, որոց  
թիւր 1200էն աւելի թէ մեծ և թէ փոքր, արհես  
տաւորք մեծաւ մասամբ Հայ են, մանաւանդ վա  
ճառականաց մեծ մասը: Կայ նաև քարուկիր ու  
վրան գոց Սպահա անունով երեսուն կրտսկէ բազ  
կայեալ փոքրիկ շուկայ մը, որ Պելլեպէն ալ կը  
ուի, ունի երկաթեաց երևք մեծ գուռ մէկը արև

ւերք, երկրորդը, արևմուտք, իսկ երրորդը հա  
րաւ կը բացուին: Կան նաև քառասուն եօթ մեծ  
և փոքր պանդոկ որոնցմէ մէկը Հայոց է որ կըսուի  
Բլեխ խաւը բայց փայտաչէն և 30 սենեակէ բազ  
կացեալ է, առիէ ի զատ 40.000 ղուրուչի գետին  
մը առած են որոնք գալրոյցի համար կալուած պե  
տի շինուի, այլ և կայ 12 բաղանիս մեծ և փոքր,  
և բաւականն աւելի հացի փուռեր՝ որոնք երկու  
տեսակ հաց կը շինեն մէկը սպիտակ միւսը մի  
ջակ, քաչը 20 փարայ ըլլալու պայմանաւ, վա  
նըն զիցորենը խիստ առատ է ու ամենէն ընտիր  
ցորեանին մէկ ինչ որ 130 կամ 140 քաչ է գրե  
թէ վերջին գին 70 ղուրուչ կը վաճառուի:  
Տաճկաստանի դասաւանդու մէջ գտնուող  
վաճառականաց արհեստաւորաց և երկրագործաց  
չահուն և ապրուստին նկատմամբ ալ քիչ շատ տե  
ղեկութիւն մը տալ արժան դատեցինք. եթէ քա  
ղաքի վաճառականք և արհեստաւորք չըլլան, գիւ  
ղացիք խիստ կը շուարին և կը ներդուին ստակի ու  
հաղուստի կողմանէ, նոյնպէս ալ եթէ գիւղացիք  
չըլլան քաղաքացիք ալ ուտելեաց կողմանէ, ասոնք  
իրարու հետ ղուրահաւասար և անբաժանելի չա  
հերով կապուած են և միշտ միմեանց կը կարօտին  
քաղաքացի արհեստաւորք գիւղերը իրենց մէջ բաժ  
նուծ են, ոմանք քսան և ոմանք երեսուն, այսպէս

եթէ գիւղացւոց ստակ եթէ հազուստ պէտք ըլլայ ամեն տարի աշնան ժամանակ եկող գիւղացւոց կուտան առանց ստակի պարտատէր մնալով քաղաքացիք ալ ամառնային եղանակին գիւղերը երթալով առնելիքնուն փոխարէն իւր , ոչխար , պանիր , ցորեն , կարակ , եւն կառնեն , այսպէսով փոխադարձաբար պարտքերնին վճարած կըլլան մէկը մէկու հետ միշտ առուտուր ընելով , այս ալ հին Հայաստանի մէկ գեղեցիկ սովորութիւնն է՝ որ մինչև ցարդ կը տեսնէ :

Սեբաստիոյ գիւրքը դաշտային ըլլալուն առթիւ , ձմեռուան ցուրար , գարնան ցետար , ամառուան փոշին խիստ անտանելի եղած է Սեբաստացւոց և որուն հետեւ միշտ կը գանդատին . ահա այսչափ տեղեկութիւն տալու բաւ համարելով յիշեալ քաղաքին վրայօք վերջ կուտամ և կ'սկսիմ փոքր ի շատէ նոյն Առաջնորդական վիճակին յատկապէս գիւղերէից վրայ ալ տեղեկութիւն տալ :

**ՀԲ.**

**ԳՆԻՂԱՐԱՊՂԱՔԻ ԵՒ ԳՆԻՂՈՒՄԸ  
ՍԵՐԱՍՏԻՈՅ**

Սեբաստիոյ վիճակի Առաջնորդական բոլոր թէ մէքուն որքանութիւնը , և անոնց մէջ գտնուող Հայոց տուները , ու բնակիչներուն թիւը , հոս հա-

մտնողի յիշելը պարտ անձին համարեցայ , թէ պէտեւ անձամբ այցելութիւն չեմ ըրած , բայց ստոյգ ազրիւրներէ քաղած ըլլալովս , ուղեցի տրելի ընթերցողացս գաղաքաբ մը տալ :

Սեբաստիա ունի երեսուն և չորս գիւղ մեծ փոքր որք են .

Ս.—Ղարապօղալ . Սեբաստիոյ արեւելեան կողմը , տասն և ութ ժամ հեռաւորութեամբ գիւղ մ'է , քսան և հինգ Հայոց տունով , մնացեալներն Տաճիկ , առ հասարակ երկու հարիւր վաթսուն և եօթ Հայ անհատներէ կը բաղկանայ , ունին Ս. Խաչ անուամբ Եկեղեցի մը , մեկ քահանայով , Եկեղեցւոյ յատկացեալ դպրոց մ'ալ , Սիւրխատանց անուամբ , որուն մէջ բաւական աշակերտ կը դաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք :

Բ.—Սլա շիլի . Ս.յս գիւղը իւր մէջ եօթանասուն և հինգ Հայոց տուն ունի , եօթը հարիւր հինգ անձերէ բաղկացեալ , կան նաև պղտիկ մաս մ'ալ Տաճիկ . Հայք ունին Ս. Մինաս անուամբ Եկեղեցի մը երկու քահանայով և երկուսու վարժարան մը որ սոյն Եկեղեցւոյ հասոյթովը կը կառուվարուի , և ըստ բաւականի ալ աշակերտք կը դաստիարակուին հոն , հասարակ ընթերցանութեան գրադելով , և քաղաքին արեւելեան կողմը կկենայ տասն և հինգ ժամ հեռաւորութեամբ :

Գ. — Զարքա ըստ աստի Սերաստիոյ արևելեան կողմի տասն երկու ժամ հեռաւորութեամբ գիւղաքաղաք մ'է, գրեթէ հինգ հարիւր Տաճիկ և Հայ տուներէ բաղկացեալ. Հայք երկու հարիւր տասն և եօթը տունով առանձին թաղ մը կը կազմեն, առ հասարակ հազար հինգ հարիւր իննըսունը մէկ անձ հաշուելով, մնացեալը ընդ ամենը Տաճիկ. բայց խիստ հակառակ Հայոց, մանաւանդ կանանց սեռին, որ երբեմն կիներ ու աղջիկներ կը քաշեն կը տանին եղեր քաղաքէն դուրս իրենց գազանային կիրքը յագեցնելու համար, սակայն նոյն տեղի վեր. Առաջնորդ Տ. Պետրոս ՝ ծայրագոյն լիարդարեալի աչարջութեան շնորհիւ գրեթէ խիստ քիչ անգամ կը պատահի այժմ, յուսալով որ Օգոստոսիսաւ և բարեխնամ Սուլթան Համիտ Բ<sup>2</sup> ի կայսեր շնորհիւ բոլորովին կը վերնան այսպիսի ոճիրը Հայաստանի խորերէն. Հայերը ունին Ս. Լուսաւորչի անուամբ կառուցեալ հին Եկեղեցի մը չորս քահանայով, և Եկեղեցւոյն յատկացեալ երկսեռ վարժարան մը՝ որուն մէջ իննըսուն և եօթ աշակերտք կը դաստիարակուին, որոնցմէ ոմանք քերականութեան ուսման կը պարասպին, յիշեալ քիւղաքաղաքին մէջ Ձինուորական գում մը կայ որ գայմադամբ իւր զինուորներովը հոն կը բնակի, կայ մէկ քանի տուն ալ Հայ Բողոքական ։

Դ. — Տէվէի. Սերաստիոյ արևելեան հարաւային կողմը տասն և մէկ ժամ հեռաւորութեամբ գիւղ մի է, ունի միայն տասն և մէկ Հայոց տուն, գրեթէ հարիւր անձեր է կը բաղկանայ ունի նաև եկեղեցի մը Ս. Կարապետ անուամբ և մէկ դպրոց, արդէն յիշեալ գիւղի վրայօք ընդարձակօրէն խոսած եմ վերը. հոս ալ կը գտնուի մէկ երկու տուն Հայ Բողոքական ։

Ե. — Թուլշանլը. քաղաքին արևելեան հարաւային կողմը վեց ժամ հեռաւորութեամբ Տաճկախաւըն փոքրիկ գիւղ մի է. տասն և մէկ Հայոց տուն կայ միայն, միւս մնացեալ մասը Տաճիկ, բայց միշտ սիրով են Հայոց հետ. Հայք ունին փայտաշէն յանուն Ս. Փրկչի փառաւոր Եկեղեցի մը, բայց յատուկ քահանայ չունին. տասներեք տղայէ բաղկացեալ դպրոց մ'ալ որք հասարակ ընթերցանութեան կը պարսպին, և Հայ ժողովրդոց թիւն գրեթէ իննըսունը եօթը անձի կը յանդի ։

Զ. — Ղալբաս. քաղաքին արևելեան կողմը, երեք ժամ հեռաւորութեամբ, փոքրիկ գիւղ մի է, քսան երեք Հայ ընտանիքներէ բաղկացեալ. առ հասարակ երեք հարիւր եօթը անձ կը հաշուի. ունին Ս. Փրկչի անուամբ Եկեղեցի մը մէկ քահանայով և մէկ դպրոց, որուն մէջ երեսունը ինը տղայ կը դաստիարակուին, հասարակ համարատուի մը

ձեռօք . կան նաև բաւական Տաճիկ ալ՝ որոնք Հայոց հեա սիրով են :

Է. — Յերեւելի Եկեղեցի . քաղաքին արևելեան կողմը երկու ժամ հեռաւորութեամբ, գիւղ մի է . այս ալ ունի երեսուն և հինգի չափ Հայոց տուն, հարիւր եօթանասունը ինը անձերէ բաղկացեալ . ունին Ս. Գեորգ անուամբ Եկեղեցի մէկ քահանայով և մէկ փոքրիկ դպրոց մը՝ որուն մէջ կը դաստիարակուին քսան երկու տղայ, հասարակ համարատուի մը ձեռօք, թէպէտ և հոս ալ կան նաև բաւական Տաճիկ, բայց Հայոց հեա սիրով են միշտ :

Ը. — Պին կիւղ . որուն Հայերէն թարգմանութիւնն է Բխրահն . քաղաքին արևելեան հարաւային կողմը երեք ժամ հեռաւորութեամբ, վաթսուն և եօթը տունէ բաղկացեալ գիւղ մի է, որ վեց հարիւր քառասունը չորս անձ կը հաշուի առ հասարակ, ունին Ս. Յակոբ անուամբ Եկեղեցի մը երկու քահանայիւք . նաև ունին դպրոց մի, որուն մէջ եօթանասունը մէկ աշակերտ կը դաստիարակուին հասարակ ընթերցմամբ՝ որոնց մէջէն տմանք քերականութիւն և ըն կընթեռնուն :

Թ. — Իդիսանի . քաղաքին հարաւային կողմը երեք ժամ հեռաւորութեամբ հաստատուած գիւղ մի է՝ որ քառասունը եօթը տունէ կը բաղկանայ, և կը հաշուի չորս հարիւր վաթսուն և վեց անձ :

ունին Եկեղեցի մը մէկ քահանայով և մէկ ալ դպրոց՝ որ վաթսուն և մէկ աշակերտներէ կը բաղկանայ և կը դաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք :

Ճ. — Թըլխալ . քաղաքին արևելեան կողմը երեք ժամ հեռաւորութեամբ, քառասուն տունէ բաղկացեալ գիւղ մի է՝ չորս հարիւր քառասուն և վեց անձի հաշուով, ունին յսնուն Ս. Սարգսի կառուցեալ Եկեղեցի մը երկու քահանայիւք, և մէկ ալ դպրոց երեսունը ինը տղայէ բաղկացեալ, որոնք կը սարսալին հասարակ ընթերցմամբ . հոս Տաճիկ ալ կը գտնուին և սիրով են Հայոց հեա :

Ծ. — Խորանա . Այս ալ քաղաքին արևելեան կողմը երեք ժամ հեռաւորութեամբ գիւղ մի է, երկու տղերէ բաղկացեալ Հայ և Տաճիկ . Հայք յիսունը ութը տունով առանձին թաղ մը կը կաղմեն, եօթը հարիւր եօթանասունը վեց անձի հաշուով ունին նաև երկու Եկեղեցի . մէկը Ս. Ստուածածին և միւսը Ս. Սարգիս անուամբ, երեք քահանայիւք ու երկսեռ վարժարան մը՝ եօթանասունը եօթը աշակերտներէ բաղկացեալ, առնք ալ հասարակ համարատուի մը ձեռօք կը դաստիարակուին :

Կ. — Տղալար . քաղաքին արևելեան կողմը հինգ ժամ հեռաւորութեամբ գիւղ մի է հարիւր

տասն և վեց տունէ քաղկացեալ, առ հասարակ հազար ութը հարիւր քառասուն և չորս Հայ ժողովուրդը կը գտնուին, ունին յանուն Ս. Կարապետի կառուցեալ Եկեղեցի մը, երկու քահանայիւր և երկսեռ դպրոց մի՝ սրոյ մէջ երկու հարիւր և քսուսն և վեց աշակերտք կ'դաստիարակուին հասարակ համարատուներու ձեռօք, որոնց մէջ քերականութեան ուսման պարապօղներ ալ կան, և ըստ բաւականին յառաջադէմ աշակերտներ ալ կը գտնուին, յիշեալ գիւղի դպրոցի հայկարանները, Պօլիս Ղալաթիոյ կիրակնօրեայ դպրոցի անձնանուէր աշակերտներէն են շնորհիւ մեծապատիւ Բրիտանացուր Էֆէնտիի, որ Պօլիս բեռնակրութիւն կրնէին սակէ առաջ:

ԺԳ.—Խորխոն. քաղաքին արևելեան կողմը, վեց ժամ հեռաւորութեամբ Տաճկաստան գիւղ մի է, և կը գտնուի իւր մէջ երեսուն տուն Հայ ու առհասարակ չորս հարիւր երեսուն երկու անձ կը հաշուի, ունին յանուն Ս. Կարապետի կառուցեալ Եկեղեցի մի, մէկ քահանայով և մէկ ալ դպրոց վաթսուն երկու աշակերտներէ բաղկացեալ, գրեթէ հասարակ ընթերցանութեան կը պարապին սակայն ոմանք ալ քերականութեան ուսման:

ԺԴ.—Կալուս. նոյնպէս քաղաքին արևելեան կողմը, հինգ ժամ հեռաւորութեամբ Տաճկաստան

ուրն գիւղ մ' է, ուր կը գտնուի երեսուն երեք Հայոց տուն որ առ հասարակ չորս հարիւր երեսուն երկու անձ կ'երկնէ. ունին Ս. Սարգիս անուամբ կառուցեալ Եկեղեցի մը, երկու քահանայիւր և յիսուն ու վեց աշակերտներէ բաղկացեալ դպրոց մը, որք՝ հասարակ ընթերցման կը պարապին:

ԺԵ.—Չայ Էօյի. նոյնպէս քաղաքին արևելեան կողմը, եօթը ժամ հեռաւորութեամբ Տաճկաց գիւղ մի է՝ ուր միայն տասը Հայոց տուն կը գրտնուի իննըսուն անձի հաշուով. ունին Ս. Սասունաձաձնայ Եկեղեցի մը, իսկ յասուկ քահանայ չունին տասը աշակերտէ բաղկացեալ դպրոց անուամբ սեներակ մը ունին՝ որ հասարակ ընթերցանութեան կը պարապին:

ԺԶ.—Պարպիլակ. քաղաքին հարաւային կողմը ինը ժամ հեռաւորութեամբ գեղեցիկ դրօսավայրի մը վրայ հաստատուած գիւղ մի է, և ունի իւր մէջ երեսունը չորս Հայոց տուն, որք կը հաշուին գրեթէ երեք հարիւր տասը անձ. ունին նաև Ս. Գեորգ անուամբ Եկեղեցի մը, բայց ոչ քահանայ, այլ ուրիշ գիւղէ կուգայ, և մէկ դպրոց որուն մէջ երեսունը մէկ աշակերտ հասարակ ընթերցանութեան կը պարապին. նաև կը գտնուին Տաճկաց տուներ ալ. Սերաստիոյ Հայոց հալածման տուներ

Հայք չը դիմանալով բունութեանց մանաւանդ Պարտիզակ գիւղի բնակիչք մեծաւ մասամբ իրենց բընակութիւնը թողած ու օտար տեղեր գաղթած են շատ հաւանական կը թուի Իզնիմիտի մօտ եղած Պարտիզակը, այն գաղթականութենէն առած ըլլայ իւր անունը :

ԺԷ.—Օղնօւլու . քաղաքին արևելեան կողմը, ինը ժամ հեռաւորութեամբ Տաճկաստան գիւղ մի է՝ որուն մէջ կը գտնուի երեսուն երեք Հայոց տուն որ առ հասարակ չորս հարիւր ինը անձ ըլլալ կը թուի . ունին Ս. Յակոբ անուամբ Եկեղեցի մը առանց քահանայի և տասներկու տղայ պարունակող փոքր սենեակ մը՝ որուն մէջ հասարակ համարստուի ձեռամբ կը դաստիարակուին, կան նաև քանի մը Տաճկաց տուներ ալ :

ԺԸ.—Բրաբէրդ . քաղաքին արևելեան կողմը եօթը ժամ հեռաւորութեամբ Հայ և Տաճիկ աղ գերէ բազկացեալ գիւղ մի է . Հայք միտցն երեսուն երեք տուն են, գրեթէ չորս հարիւր ինը անձով, ունին Ս. Թորոս անուամբ Եկեղեցի մը առանց քահանայի . նաև դպրոց մը քառասունը ոթ աշակերտով որք կը պարապին հասարակ ընթերցմամբ բնակիչք մեծաւ մասամբ Տաճիկ են :

ԺԹ.—Պերոսի . Որ ըստ Տաճկաց Խօճառար ալ կըսուի, այս ալ քաղաքին արևելեան հարաւային

կողմն ու վեց ժամ հեռաւորութեամբ Տաճկաստան գիւղ մը ըլլալով, յիսունը հինգ Հայոց տուն կը գտնուի միայն, ու առ հասարակ ոթը հարիւր եօթը բնակիչով . ունին Ս. Յակոբ անուամբ Եկեղեցի մը մէկ քահանայով և մէկ ալ դպրոց՝ որուն մէջ հարիւր մէկ տղու չափ կը դաստիարակուին հասարակ ընթերցմամբ :

Ի.—Թեւէլի . Որ երբեմն «Չէլեպլիք» ալ կըսուի քաղաքէն երեք ժամ հեռաւորութեամբ հարաւային կողմը հաստատուած գիւղ մ'է . տասն երկու Հայու տուն միայն կը գտնուի, և հարիւր երեսուն եօթն անձ կը հաշուի, բայց ոչ Եկեղեցի և ոչ քահանայ ունին, ուրիշ մօտակայ գիւղերուն Եկեղեցին կերթան :

ԻՍ.—Կափ . Քաղաքէն վեց ժամ հեռու, արևելեան հիւսիսի կողմ հաստատուած գիւղ մի է, և իւր մէջ քառասուն երկու Հայոց տուն ունի, առ հասարակ վեց հարիւր մէկ բնակիչով . նաև ունին Ս. Ստուածածնայ Եկեղեցի մը մէկ քահանայով, և մէկ դպրոց մը ոթսունը վեց աշակերտով որք հասարակ ընթերցանութեան կը պարապին, կան նաև ըստ բաւականին Տաճկաց տուներ ալ :

ԻԶ.—Բօլնի . Քաղաքէն եօթը ժամ հեռու արևելեան հարաւային կողմը Տաճկաստան գիւղ

մի է, որոյ մէջ կը գտնուի քսան և եօթը Հայոց տուն որ առհասարակ երեք հարիւր քառասունը եօթը անձ կը հաշուի, ունին Ս. Սարգիս անուամբ Եկեղեցի մը երկու քահանայիւք, և մէկ դպրոց վաթսուներեկ չափ աշակերտով որոնք հասարակ ընթերցանութեան կը պարապին, նաև Տաճիկք ալ բաւական են թուով:

ԻԳ.—Սբաճո. որ ըստ Տաճկաց «Եէնիճէ» ալ կըսուի քաղաքէն ութը ժամ հեռու արևելեան կողմը, Տաճկախառն գիւղ մի է, և քառասունը ութը Հայոց տուն միայն գտնուելով հինգ հարիւր տասը անձ կը հաշուի. ունին Ս. Թորոս անուամբ Եկեղեցի մը առանց քահանայի բայց առտու իրիկուն Եկեղեցւոյն ժամերգութիւնը չի դադրիր, դպրոց մ'ալ ունին վաթսուն և հինգ աշակերտով:

ԻԴ.—Եարասար. քաղաքէն ութը ժամ հեռու արևելեան կողմը, Տաճկախառն գիւղ մի է. վաթսունը ինը Հայոց տուն՝ եօթը հարիւր հինգ բընակիչով. ունին Ս. Սարգիս անուամբ Եկեղեցի մը, մէկ քահանայով. նաև ունին դպրոց մը հարիւր քսան և վեց աշակերտներէ բաղկացեալ հասարակ ընթերցանութեան պարապող. այս գիւղը քայմաքամութիւն է:

ԻԵ.—Թօփորակ. քաղաքէն տասը ժամ հեռու հիւսիսային կողմը հաստատուած Տաճկախառն

գիւղ մի է, որ կը բաղկանայ յիսունը եօթը Հայոց տունով, բնակիչք չորս հարիւր քառասուն երկու կը հաշուի. ունին Ս. Յակոբ անուամբ Եկեղեցի մը մէկ քահանայով և մէկ ալ դպրոց յիսունը ութը աշակերտներէ բաղկացեալ, հասարակ ընթերցանութեան պարապող:

ԻԶ.—Ճանճիկ. քաղաքէն ինը ժամ հեռու արևելեան կողմը Տաճկախառն գիւղ մի է և այս գիւղին մէջ ժամանակաւ Հայոց տան թիւը չորս հարիւրի կը հասնի եղեր, բայց ժամանակին բարբարոսական բռնութիւնը՝ ստիպեր են զՀայս ահամայ Տաճկաց կրօնը ընդունել, այժմ քառասունը ութ Հայոց տուն մնացած է, որ կը յանդի չորս հարիւր քառասունը եօթը անձի. ունին Ս. Պօղոս անուամբ Եկեղեցի մը մէկ քահանայով և դպրոց մը քսան երեք աշակերտով, հասարակ ընթերցանութեան կը պարապին:

ԻԷ.—Դօլչուշ. քաղաքէն երեկ ժամ հեռու, հարաւային կողմը հաստատուած Հայոց գիւղ մ'է՛ ուր հարիւր յիսունու վեց Հայու տուն կայ, հազար երեք հարիւր բնակիչով. ունին Ս. Աստուածածնայ անուամբ Եկեղեցի մը երեք քահանայիւք, և հարիւր քառասունը ինը աշակերտներէ բաղկացեալ երկսեռ դպրոց մ'ունին, որ կը դաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք, որոնց մէջ գ

մանք ալ քերականութեան ուսման կը պարագլին :

ԻԸ.—**Խոանձառ** . Քաղաքէն երեք ժամ հեռու արևելեան հիւսիսային կողմը բլուրի մը ստորոտը զետեղուած , որն որ Աթմանազինէ Ս . Հայրապետին գիւղն է եղեր , և մինչ ցարդ բնակած վանքի աւերակները կերևի և երեսուն երեք Հայոց տուն կայ , առհասարակ երեք հարիւր իննսուն ութը բնակիչ կեղնէ . ունին նաև մէկ Եկեղեցի մէկ քահանայով և դպրոց մը , որոյ մէջ վաթսունը եօթը աշակերտք կը դաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռօք :

ԻԹ.—**Նոր-խան** . Պոլիս գնալու ճամբուն վրայ է , որ ձմեռը կարաւանը ասկէ կերթևեկէ՝ և ժամանակին Մուլթան Մուքաա Բարիլն գացած ասան , նոյն գիւղը պատահելով ահագին քարաշէն խան մի շինել կուտայ ճանապարհորդաց պատուարուելու համար , ուստի անկէ ի վեր նոյն խանի անուամբ կը յիշուի՝ Եէնի-խան յորջորջմամբ ըստ Տաճկաց , այս գիւղը , որ քաղաքէն ինը ժամ հեռու արևմտեան կողմը Տաճկախառն գիւղ մի է , և կայ իւր մէջ ութսուն և ինը Հայոց տուն , ուր կը դանուին վեց հարիւր իննսուն և եօթը Հայ բնակիչք . ունին նաև Ս . Խաչ անուամբ Եկեղեցի մը երեք քահանայիւք և մէկ դպրոց հարիւր աշակերտներէ բաղկացեալ , որ կը դաստիարակուին հասարակ համա-

րատուի մը ձեռօք : Կան նաև այս գիւղին մէջ այլազգի բնակիչք :

Լ.—**Քարահաս** . ՏՃ . Թաշլիս . Քաղաքէն տասն և եօթը ժամ հեռու հարաւային կողմը Տաճկախառն գիւղ մ'է , և երեսուն եօթը Հայոց տուն կը դանուի միայն , գրեթէ չորս հարիւրի կը հասնին անձանց թիւը . ունին Ս . Աստուածածնայ անուամբ Եկեղեցի մը երեք քահանայիւք և մէկ դպրոց գրեթէ ապարդիւն վիճակի մէջ :

ԼԱ.—**Շնչու-ասի** . Որ Պուսաղուտ ալ կըսուի . քաղաքէն երեք ժամ հեռու արևմտեան կողմը զետեղուած գիւղ մ'է , և այս գիւղի բնակիչք ժամանակին ամբողջ Հայ են եղած , բայց բռնաւորաց հարստահարութենէն բռնադատուեր են յարիւի կրօնս այլազանից , և միայն այժմ հազիւ երեք տուն Հայ կայ , որ երեսուն երեք անձէ կը բաղկանայ . ունի ի հնուց կառուցեալ հոյակապ Եկեղեցի մը յանուն Ս . Աստուածածնայ , մեծաշէն բայց քահանայ չունին , միանգամայն դպրոց :

ԼԲ.—**Դառաս** , Այս գիւղը ընդարձակօրէն նըկարագրուած է վերը :

ԼԳ.—**Սարը-Հասան** . Քաղաքէն երեք ժամ հեռու , հարաւային կողմը հաստատուած գիւղ մի է , ասան կրկու Հայոց տուն , որ առհասարակ հարիւր

անձի չափ բնակիչք կը հաշուին , ունին խրճիթանձե  
եկեղեցի մը և մէկ ալ քահանայ :

ԼԳ.—Ղարբի . Քաղաքէն մէկ ժամ հեռու հա-  
րաւային կողմը Տաճկաստան զիւղ մ'է , և այս  
գիւղի անունը Լէնկթխմարէն մնացած է . վասն զի  
այս մարդախոշոշ բռնաւորը՝ երբ բաղմն-թիւ կը  
տորածներ , գիւղեր , քաղաքներ աւրչարկեցին , և  
արեան հեղեղներ վաղցնեցին զինի , կը տեսնէ որ  
յիշեալ գիւղն ալ իւր բռնաւորական անցադ կրիցը  
զոհելու համար օրը իրիկուն եղած է՝ աւասիկ  
« Պու քալար կըսէ » ասկէ կառնու Ղարբի անունը .  
ինչպէս որ տեղացիք ալ կը վկայեն , միայն քսան  
հատ Հայոց աուն կայ՝ որ առհասարակ երկու հա-  
րիւր անձէ բաղկանան . ունին Ս . Յակոբ անուամբ  
եկեղեցի մը չորս քահանայիւք և մէկ դպրոց , ու  
բուն մէջ երեսուն և հինգ աշակերտ կը դաստիա-  
րակուին . գիւղին մեծ մասը Տաճիկ են :

ՀԳ.

ՍԱԿԱԻՈՒԹԻՒՆ ՆԱՅՈՑ

Վերջիշեալ Սերաստիոյ քաղաքի առաջնորդ-  
ականն վիճակին յատկացեալ երեսուն և չորս հա-  
յոց գիւղերը , կարելի է մեր սիրելի ընթերցողաց

ուժը գրաւէ , թէ՛ ինչպէս իրենց լլլալ որ՝ սու-  
ներն խիստ քիչ , իսկ բնակիչք շատ . այս այս այս  
պէս է , որովհետև Հայաստանի նահապետական  
հին դրութիւնն է՝ որ մինչև ցարդ կը շարունակէ  
տեղ տեղ , մանաւանդ Սերաստիոյ գիւղորէից մէջ .  
աւասիկ անոնք մեզի օրինակ են , եղբայրսիրու-  
թեան , միութեան , հաւատարմութեան և հա-  
մակրութեան՝ որ մենք երբեմն չի հաւնելով նոցա ,  
տղէա կանուանենք զանոնք . սակայն այս վսեմ  
յատկութիւնը կրնայ օրինակ հանգիստեալ մեզ՝ որ  
կը պարծիւք թէ քաղաքակրթեալ ժողովուրդ ենք .  
Եւրոպա աղէկ ճանչցած է սոյն միութեան յարգը ,  
դիտէ թէ ուր որ միութիւն , անդ և զօրութիւն .  
չեմ սխալիր ըսել թէ՛ Եւրոպա ինչպէս ուրիշ շատ  
պարագաներու մէջ , նոյնպէս միութեան դասն ալ  
Սսիոյ ժողովուրդէն առած է . . . . . :

Յիշեալ գիւղորէից մէջ , բնակիչք գրեթէ ա-  
մենքն ալ հողագործութեան կ'պարապին , որովհետև  
հողերը խիստ բարեբեր է՝ իւրաքանչիւր անձ բաւ-  
ական արտեր ունին , եթէ Օգոս . և Քարեխնամ  
կայսեր կամաց հակառակ չի վարուին տրոց պաշ-  
տօնեայք , և չը հարստահարեն զանոնք . ճամբիան  
ըսելով թէ՛ Հայք և թէ Տաճիկք բաւական հարս-  
տութեան տէր կրնան լլլալ . բայց ինչ օգուտ , ցաւ  
յայտնողներ շատ , իսկ լսող ոչ երբէք . սակայն յու-

սով եւ՛ք որն վեհափառ և իմաստուն Սուրբան  
 Համիա Բ<sup>Ը</sup> ի կայսեր մը օրով, շատ և շատ օգուտ  
 պիտի քաղէ Հայաստանը, իւր իրաւանց և արդա-  
 բութեան պաշտպան ունենալով, արդարակորով  
 վեհապետ մը :

Գիւղացւոց կիները ընդհանրապէս դուրսայ կը  
 դործեն, թէ Սերաստիոյ դաւառը և թէ բոլոր  
 Հայաստանի մէջ հնաւանդ և գեղեցիկ սովորու-  
 թիւն մը ունին հիւրասիրութեան, քանզի միշտ  
 դուռներնին բաց պատրաստ են հիւրը և ճանա-  
 պարհորդը անխաիր ընդունել իրենց տունը, պէտք  
 եղած յարգանքները տալ ու կերակրել զանի, մա-  
 նաւանդ ճանապարհորդող աղքատ Տաճիկն ու  
 Քիւրտը, որ միշտ յարգուած են և կը յարգուին  
 Հայերէն մինչդեռ իրենց ազգը անտարբեր կը կե-  
 նայ ընել, բայց ինչ օգուտ որ դժբաղդ Հայը յար-  
 գանաց փոխարէն գրկանը, հայի փոխարէն դան  
 և աւառարութիւն կը կրէ, կարծես թէ Աստուա-  
 ծային նախախնամութիւնը անտարբեր աչօք կուղէ  
 նայիլ սոյն տարաբաղդ ժողովրդեան վրայ . արդեօք  
 պիտի ըլլայ այս օրը որ այս դժբաղդ և լքեալ ժո-  
 ղովուրդը, որ հիմա ամէն տեսակ նեղութեանց մէջ  
 կը տառապի, վեր վերցնէ իւր խոնջեալ ճակատը  
 գէթ պահիկ մը ուժ և զօրութիւն ստանալու վե-  
 րատին, կը պաղատի՛ք առ ամենակարօղն Աստուած

որ իւր սուրբ սէրը արծարծէ ամեն Հայոցս սիրտը,  
 որպէս զի կարող ըլլա՛մք այն անտանելի կացութե-  
 նէն ազատիլ, ձեռք ձեռքի տուած հողեւոր ուս-  
 ման և միութեան դրօշը պարզելով՝ որ բոլոր այս  
 ցաւոց մէկ հասիկ գեղն է :

ՏԳ.

### Ա Ղ Ա Ն Ա Ն Ք Ե Ր

Կը պարտաւորի՛մ յիշել նաևս Սերաստիոյ նա-  
 հանգին մէջ գտնուած Աղահանքերն ալ :

Ա. Բալաս . Ծովի նման լիճ մի է՝ որնոր գետ-  
 նէն կը բղխի, իւր մօտերը հոր մ'ալ կայ . այս եր-  
 կու հանքին ջուրը իրարու հետ միանալով, բաւա-  
 կանէն աւելի ալ կը գոյանայ :

Բ. Պեպերի	հաղաչին	արեւսեան	կողմ	հոր	Վի
Գ. Լեղի	Խոզլա	հարաւային	»	»	»
Դ. Յալլա			»	»	»
Ե. Իշխանի			»	»	»
Զ. Պինկեօլ			»	»	»
Է. Ծիւլլի			»	»	»
Ը. Տոզլասար		արեւելեան	»	»	»
Թ. Ծիւրէն			»	»	»
Ճ. Սերեշի			»	»	»

ՅԱ. Զարդը արևելեան կողմն հոր մի է  
 ԺԲ. Համն փող 》 》 》 》  
 ԺԳ. Բնուր 》 》 》 》

Այս հանքերէն աղերը հաւաքուելով Սերաստի  
 տիտ կուգան, և անկէ ալ ուր որ պէտք ըլլայ  
 կերթայ:

Միայն Սերաստիոյ Առաջնորդական ընդհանուր  
 վիճակի նկատմամբ մեր վերահասու եղածին չափ  
 մանրամասն տուած տեղեկութիւններնիս բաւական  
 համարելով կը փութամ Եւզոկիոյ և Ամասիոյ  
 վիճակաց վրայօք ալ համառօտ տեղեկութիւններ  
 հաղորդել սիրելի Ազգայնոցս նախաբանութեան  
 մէջ յիշածիս համեմատ:



Սերաստիայէն Եւզոկիոս կարաւանով 18 ժամէ  
 հիւսիսային կողմը, լեռան ստորոտը խոռոչներով  
 պատած ձորաձև քաղաք մի է՝ ընդարձակ դաշտի  
 մը ծայրը, և հին Հռովմայեցւոցմէ մնացած, բերդե  
 րու աներակներ ալ կը դանուին, բարձր ապա

ռածներու վրայ շինուած «Եէչիլ ըրմաք» անու  
 նով գետը ճիշտ քաղաքին առջեւէն կանցնի գաղ  
 յեա քաղաքին փայլ մը եւս տալու համար, որուն  
 վրայ կայ հինգ կամարով դեղեցիկ քարաշէն կա  
 մուրջ մը, որ քաղաքին երթևեկութեան ճանքուն  
 վրայ է. բնակիչք ութը հազար տունէ կը բաղկա  
 նան, և հինգ տեսակ աղէ կայ, այսինքն՝ Հայ,  
 Յոյն, Պապական, Տաճիկ և Հրեայ: Հայք՝ հազար  
 երեք հարիւր տուն կը կազմեն առանձին թաղով,  
 ունին մեծ և փոքր եօթը Եկեղեցի, ոմանք քա  
 բուկիր և ոմանք փայտաշէն յանուն Ս. Երրորդու  
 թեան, Ս. Աստուածածնայ. Ս. Լուսաւորչի. Ս.  
 Ստեփաննոսի, Գառասուն մանկանց, Ս. Գէորգայ և  
 Ս. Մինասի կառուցեալ՝ տասն և հինգ քահանա  
 յութ. ունին նաև մեծ ճեմարան մը, որուն մէջ  
 չորս հարիւր տղայ կը դաստիարակուին, սակայն  
 ցաւային այն է՝ որ ճեմարանը երկուքի բաժնուած է,  
 տեղւոյն երկպառակութեան պատճառաւ. քանզի  
 դասատուք ժողովրդեան խռովութենէն օգուտ  
 քաղելով, բուն իրենց անձնական շահուն համար  
 դպրոցը երկուքի բաժնելով, աղղային փայր մը ի  
 ընց իւրացուցած են իբր անհատական դրպ  
 րոցներ, և որոնց մէջ կաւանդուին Բերակա  
 նութիւն, Թուարանութիւն և ըն. և հասարակ ըն  
 թերցմունք: Ունին արջկանց վարժարան մ'ալ, ու

բոյ մէջ հարիւրի չափ աշակերտուհիք կան : ճշմո՞ւ  
րիւար բսելով հոս ճեմարանէն աւելի բարեկարգ ետլ  
և յառաջագիւմ է՝ թէ ուսման և թէ ասեղնագործ  
ծաթեան մէջ . մեծ յոյս կայ՝ որ ապագային մէջ  
աւելի եւս յառաջագիւմէ , եթէ խոչընդոտներ ար-  
քելք չըլլան , և եթէ լաւ հսկէ տեղւոյն ժո-  
ղովուրդք , այն փասիուկ արարածոց կրթութեան  
և դաստիարակութեան մասին : Թէպէտև Հայք  
բարեպաշտ և ջերմեռանդ են , բայց քաղաքակրթ-  
ութեան մէջ չեն յառաջացած , ուստի անպատ-  
ճառ պէտք է իրենց բարոյական դաստիարակու-  
թիւն և քաղաքակրթութիւն . այս ալ ուրիշ բանով  
չըլլար , բայց եթէ դպրոցներուն ուժ տարով , մա-  
նաւանդ այժկանց , որոնցմով պիտի վերանորոգի Հա-  
յուն ապագայն :

Հ.Գ.

ԵՒԴՈՎԻՈՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ

Ժամանակին եւրոպիոյ մէջ՝ խիտ մեծ Հայ  
վաճառականներ ու տարազագործեր կան եղեր ,  
բայց այն ասենէն մինչև հիմա ոմանք սնանկացեր ,  
ոմանք ալ նեղութեան չը դիմանարով , ուրիշ եր-  
կիրներ դաղթեր են . ուստի այժմ հարուստք սա-

կառաթիւ են , կան արհեստաւորներ որ միջակ  
դիրքով կապրին որոնցմէ պղղնձագործը անուանի է .  
դարձեալ աղքատը մեծ մաս կը կազմէ . մենք հոն  
եղած ժամանակ , միխրոյ տակ ծածկուած դաղտնի  
երկպառակութեան կրակ մը կար իրենց մէջ . աե-  
ղացիք կը պատմէին թէ թէպէտև խիտ մեծ սէր  
ունին եղեր միմեանց հետ , սակայն փորթութեան  
պատուելին հոն երթալէն ի վեր , այս դաղտնի հա-  
կառակութիւնն հիմն դտեր է՝ նմանապէս վերո-  
յիշեալ ճեմարանին բաժանումն ալ , և այս պատ-  
ճառաւ յիշեալ քաղաքէն դուրս արեւմտեան կողմը  
երկու ժամ հեռու խաչ լերան ստորտար Ս. Յովա-  
կիմ Մննայի վանուց մէջ , Մեծ . Յոհան էֆէնտի ա-  
նուն բարեպաշտ անձը՝ ամէն ճիւղ թափեր ու ճե-  
մարան մը հաստատեր է հոն դէպ ի յառաջագի-  
մութիւն քայլ առնելու վրայ , սակայն դարձեալ  
փորթութեանի խռովութեանց չնորհիւ , խան-  
դարուեր է . հիմա գրեթէ ամացի դարձած է ,  
միայն մէկ վարդապետ մը կայ Արժ . Մարտիրոս  
անուն , որ իբրև վանահայր կը հսկէ Գեր . Առաջ-  
նորդի կողմանէ : Գարձեալ եւրոպիացէն չորս ժամ  
հեռու , արեւմտեան հիւսիսային կողմը , Պիղէաի  
կոչուած գիւղին կից վանք մ'ալ կայ , յանուն Ս-  
հան Ռակերերանի կառուցեալ և իւր մէջ կայ միայն  
Արժ . Մանուէլ ուսումնական վարդապետ մը :



### ՅՈՅՆՔ ԵՒ ԴՈԿԻՈՅ

Յոյնք հարիւր յիսուն տունէ առանձին լծաղ մը կը կաղմեն . ունին մէկ Եկեղեցի և մէկ դպրոց , ըստ բաւականին հարուստ . Պատականք որ յիսուն կամ վաթսուն տարի առաջ , երբէք չի կան եղեր , բայց կամաց կամաց սկսելով , այժմ հարիւր յիսուն տուն կերլեն . ունին Եկեղեցի մը և մէկ քանի կղեր , վանք մ'ալ մերինին մօտ տասը տարուան շէնք , իւրենց մէջ ունին բաւական հարստութիւն , օրինաւոր երկսեռ դպրոց մը՝ որուն մէջ երկու սեռէ բաւական աշակերտք կը դաստիարակուին . յիսուն տունի չափ ալ Հրեայ կայ , բոլորն ալ հարուստ . ունին սինակոկայ մը , տասը տունի չափ ալ բողոքական Հայ կեղէ , ունին ժողովարան մը , դպրոց մը և միտիոնար մը . կիրակի օրերը Հայերէն շատերը կերթան , քարոզ մտիկ ընելու , ցաւալի բաճն , իսկ միւս մնացեալ բնակիչք ընդ ամենը Տաճիկ են և Հայոց հետ մտերմաբար կը վարուին . մէջերնին բաւական հարուստ կալուածատէրեր կան . աղքատներ ալ կան , որոնք Հայոցմէ կը շահուին : Արհեստաւորաց մասը քիչ է , նաև կայ բաւական

մեծ և ընդարձակ շուկայ մը : Կառավարութեան դուռ մը որ դայմադամը իւր զինուորներով հոն կը բնակի . քաղաքին փողոցներուն շատերը գրեթէ ել և էջ են մաքուր և կանոնաւոր քարայատակներով զարդարուած , շէնքերը խիստ մեծ և ընդարձակ են , վրանին կղմնդրով ծածկուած . ունին նաև գեղեցիկ պարտէզներ , քաղաքէն դուրս ալ բազմաթիւ այգիներ կան , որոնց մէջը փառաւոր Կիւրքիւրի և ամեն տեսակ մրգեղէն ծառերով զարդարուած է :



Եւդոկիայէն՝ կարաւանով երեք օր է՝ դէպ ի հիւսիսային կողմը հինգ վեց հազար տունէ բաղկացեալ քաղաք մ'է՝ և այս քաղաքին գիրքը բաւական գեղեցիկ և բարձր ապառաժուտ լեռներու մէջ հաստատուած է . մաս մը Եւդոկիոյ գետէն , մէկ քանի մասեր ալ ուրիշ գետերէ միանալով գետակ մը կանցնի քաղաքին մէջէն , ուրկէ կը թափի Սեւ ծովը . գետակին երկու կողմերը շէնքերով ու պարտէզներով զարդարուած զմայլելի տեսարան մը

կը ներկայացնեն. բոլորովին այդիներով պատած, որոնց մէջ ամէն տեսակ համեղ և պաղատու ծառեր կը դանուին: Քաղաքացիք ուրիշ զուարճութիւն մը չունին բայց եթէ միմիայն ամառը, իւրաքանչիւր ոք խրեանց պարտեղները և այդիները երթալով կը զուարճանան:

**ՏԹ.**

**ՀԱՅՔ ԱՄԱՍԻՈՅ**

Հայ աղգը հաղար տունէ կը բաղկանայ առանձին թաղով, և համեմատական հաշուով երեք չորս հաղար անձ կենէ. ունին Հայք երեք Եկեղեցի տասը քահանայիւր, յանուն Ս. Աստուածածնի, Ս. Յակոբայ, Ս. Նիկողայոսի և երեք ալ դպրոց: Թէ պէտե Ամասիացիք բարեպաշտ և հիւրասէր են, սակայն ցաւալի է որ խռովութեան մը պատճառաւ, կարծես թէ օտարացած են միմեանց հետ ու դպրոցները երեսի վրայ ձգած անբարեկարգ վիճակի մը մէջ. դեռ հոն եղած ժամանակս աղջկանց նորակառոյց դպրոցը բոլորովին դոց էր, Հայուն մէկուն պարտ ունենալուն համար, պարտապահանջը կամ ստակս տուէր և կամ չենէ դպրոցը պիտի դոցեմ ըսեր, ու ըրեր է ալ. ահաւասիկ

դպրոց չի դայող ու դպրոց ինչ ըսել է չը գիտցողին դատումը այսչափ կրնայ ըլլար. որուն կը դոհուի ազգին խեղճ մանկաւոյն ապագայ երջանկութիւնը. . . միայն 17 տարեկան Սարգիս Գ. Գաբաղիիկեան անուն ուսումնասէր եռանդուն պատանեակ մը տեսայ՝ որ ի սէր ազգութեան, Ս. Նիկողայոսի Եկեղեցւոյն, Առաջնորդարանի սենեկին մէջ, 20էն աւելի Հայ տղայոց առտունները 4-5 ժամու չափ ձրիաբար Հայերէն, Պարսկերէն և Արարերէն, ու ասոնց նման այլ և այլ դասեր կաւանդէր. արդարև այն պատանւոյն ազգասիրութեան գովելի ընթացքը, արժանի է վարձաարութեան:

**2.**

**ՅՈՅՆՔ ԵՒ ՏԱՃԻԿԸ**

Կայ նաև 40 տունէն աւելի Յոյն, որ առանձին թաղ մը կը կաղմէ, և համեմատական հաշուով չորս հարիւր անձ կենէ. ունին մէկ Եկեղեցի Այի Եօրիկի անուամբ և մէկ դպրոց Եկեղեցւոյ դիմացը. մեծաւ մասամբ արհեստաւորք են, հարուստք սակաւթիւ և Հոյոց հետ մտերմաբար կը վարուին: Իսկ բողոքականք տասը տունէ կը բաղկանան, ու

նին ժողովարան մը և մէկ միսիօնար, որ ամէն կիրակիէ կը քարոզեն և մէկ ալ դպրոց :

Գալով Մահմետական բնակչաց, որ երեք հազարի չափ տուն կեմնէ, ցրուեալ է բնակութիւն նին և մեծաւ մասամբ հարուստ կարուածատեր, շատ մը Մեքրեմներ կան, և մէկ ալ Ռիշիէ դըսլոց, և ըստ կարելոյն ուսմունքը յառաջացած է՝ այլ և կառավարութեան դուռ մը կայ գեղեցիկ շէնքով, զոր կառուցեր է Չիա պէյ անուանեալ աշխարհաշէն անձը իւր կառավարչութեան ատեն, որ այժմ տեղոյն Միւթասարըֆ փաշայն իր զինուորներով հոն կը բնակի :

Շրջակայ լեռանց ապառաժները, որք քաղաքին վրայ չորս կողմէն բարձրացած ըլլալով, ամառուան սաստիկ տաքութենէն, քաղաքին մօզը անտանեկ ըրած են, և որուն համար բնակիչք կ'ստիպուին իրենց գեղաւէտ սարաէղներն կամ այգիներն երթալ բնակիլ : Նոյնպէս ալ ձմեռուան սաստիկ ցուրտը կը նեղէ զիրենք :

**25.**

**Մ Ա Ր Զ Ո Ւ Ա Ն**

Ութը ժամ կը տեէ Ամասիայէն, Սերաստից արեւմտեան հիւսիսային կողմը, լեռան մը ստորոտը, երեք հազար հինգ հարիւր տունէ աւելի բաղկացեալ քաղաք մ'է, բնակիչք են Հայք և Տաճիկք : Հայք հազար հարիւր տունէ բաղկացեալ անանձին թաղ մը կը կազմեն, համեմատական հաշուով հինգ հազարէն աւելի բնակչօք. ունին մեծ և հոյակապ Եկեղեցի մը յանուն Ս. Աստուածածնի կառուցեալ՝ որուն մէջ կան երեք քահանայ, ունի Եկեղեցին իրեն յոսակացեալ դպրոց մը՝ յորում կը դաստիարակուին երեք չորս հարիւրի մօտ աշակերտք հասարակ ընթերցանութեամբ, կոյ միանդամայն աղջրկանց վարժարան մ'ալ, սակայն խիստ անբարեկարգ վիճակի մէջ, թեև տարին երեսուն հազար դահեկան եկամուտ բերող կարուածներ ունի Եկեղեցին, սակայն ներքին անհամաձայնութեան մը պատճառաւ, դպրոցաց յառաջողութիւնը երեսի վրայ մնացած է : Բնակիչք ընդհանրապէս արհեստաւոր են, որոցմէ վոքը մաս մը վաճառակաշու թեամբ կ'զբաղին, և վոքը մաս մ'ալ խիստ ան-

ձուկ վիճակի մէջ են, բայց ըստ սովորութեան Մ. սինոյ, իրարմով կը շահուին. գալով բարոյական մասերուն, ժողովուրդը թէպէտ խիստ կրօնասէր և բարեպաշտ են այսու ամենայնիւ ներկայ քաղաքակրթութեան նկատմամբ խիստ անտարբեր. ժողովրդեան այս պակասութեան պատճառը ոչ այլ ինչ է բայց եթէ հոգեւոր խրատներէ, և ընկերութիւններէ զուրկ մնալը, ուրիշ առիթ գտնելով բողոքականք յաջողած են մեծկալ որս մը ձեռք ձգել, ու կ. Պօլսոյ մէջ գտնուող Պէպէքի դպրոցնուն մէկ ճիւղն ալ հոն հաստատելով բաւականէն աւելի Հայոց տղայք ալ իւրեանց թակարթը ձգած են, որով մեր ապագայ սերնդեան Ազգային կեանքը՝ եթէ ոչ բնաջինջ, գէթ վտանգի ենթարկած կըլլան:

**ԾԲ.**

**ԱՐԱՐՔ ՆՈՐԱՂԱՆԴԻՑ**

Յաւօք սրտի կը պարտաւորիմ յայտնել հոս՝ թէ այսօր Մարզումնու մէջ հարիւր տունի չափ նորաղանդ Հայ ընտանիք կը գտնուին, կըրկնայարկ և փառասոր շէնքով երկսեռ վարժարան մը, ուսումնական դասատուներ, որոնք ամեն տեսակ դասախօսութիւն կընեն, նաև նորաղանդ Հա-

յաստանեայց Եկեղեցւոյ որդոցմէ մարդ սրսալու համար լաւ մեթոտ մ'ալ գտած են, այսինքն դըպրոց յաճախող աշակերտաց, ոմանց տասը, ոմանց քսան, և ոմանց երեսուն գահեկան ամուսկան կապած են իրենց Պօրտ ընկերութենէն. նորաղանդներէն մին եթէ յաջողի Հայաստանեայց Եկեղեցիէն մին հրապուրել և որսալ, պարզև կը տրուի յիշեալ նորաղանդին իբր վարձք և այս կերպով միշտ որսալու վրայ են ասոնցմէ ի զատ ալ նորաղանդք իւրեանց ստացուածքն է շաբաթական տասանորդ անուամբ տուրք կը վճարեն միսիօնարին, քանդի միսիօնարք այսպէս համողած են, նորքա ալ սիրով և յօժարութեամբ կ'վճարեն. ուրեմն ինչու համար այս մարդիկը «Մենք բուն Աւետարանական եմք մենք ճշմարիտ Քրիստոսի հետեւող աշակերտներ եմք» ըսելով կը խաբեն բոլոր աշխարհք. միթէ Քրիստոս և իւր Աւետարանը այսպէս սորվուցուցին իրենց որ ժողովուրդէն պէտք է անսխառնառ տասանորդ առնուլ. արդեօք խուլ ու կոյր են լսելու թէ Քրիստոս տասանորդ առնող փարիսեցիները կեղծաւոր անուամբ կը սրտիէ, ու իր աշակերտաց կը պատուիրէ թէ, ճրի առին և ճրի տան: Ուրեմն ինչ տարբերութիւն կայ, կեղծաւոր փարիսեցւոց և միսիօնարաց մէջ տեղ, որ բաժակին մէջի մթղուկը կը ցցեն ժողովրդեան և իրենք ուղտը կը

կըլլեն . . : Գրեթէ շատ կիրակի օրեր Հայ Ժողովրդեան մեծ մասը բողոքականաց Ժողովարանը կերթան քարոզ մտիկ ընելու . արդարև մեծ պահասութիւն մ'է մեզ որ փոխանակ մենք քարոզելու , անոնց քարոզը մեիկ ընելու կերթան , այս ալ յատկապէս իրենց քարոզ տուող չըլլալն է պատճառ : Սոցն քաղաքին մէջ նախ նորադանդից մուրու թիւնն մուտ դտեր է և ապա պապականութիւնը , բայց պապականութիւնը յառաջ երթալով , մինչև հարիւր երեսուն տունի հասեր է , բողոքականաց Պօլսոյ Պէպէքի վարժարանին մէկ ճիւղը հոն հաստատելովին կամաց կամաց կ'սկսին պապականք նուազիլ , ու նորադանդից մուրու թիւնքն ստորածիլ , պապականք հազիւ թէ քսան տուն կան . աւելն Եկեղեցի մը և երկու կղեր , դպրոց մ'ալ կայ բայց ոչինչ է Մարտունու մէջ այլակրօնութիւնը մտնելուն պատճառաւ , վասն զի , աւարիւ կը ճշմարտութիւնը զգարով հանդերձ կարող չլլալով փաստարանել , զայրոյթէն ինքզինքը այլակրօնութեան յանձնած է յուսարով որ դէթ անուղբակի կերպիւ յաղթելու մտօք , իւր անձին հեա միանդամայն խիղճն ալ դերի ընելով :

... 27. ...  
**S U Z H Y E**

Գալով ծածկաց երկու հազար հինգ հարիւր տան չափ կան , համեմատական հաշուով գրեթէ տասը հազար անձով , մեծաւ մասամբ , հարուստ կարուածատները են , որոց աղքատն ալ գրեթէ Հայերէն կը շահուին . Հայոց հեա սիրով են , կառավարութեան դուռ մը կայ որ Գայմադամը իւր զինուորներովը հոն կը բնակի . կայ նաև բաւական մեծ կալ շուկայ մը որուն մէջ կայ քանի մը հարիւր կըրպակներ ըստ բաւականին վաճառք կը դտնուին , շարաթը երկու անգամ ալ տօնավաճառ կըլլայ . ունին խաններ , Բարբառներ . կայսերական շիշախեանուամբ դպրոց մը , բաղանիսներ , և մէկ հեռագրատուն , շէքերը փայտաչէն կըմխնդրով ծածկուած են , փողոցները խիստ գեղեցիկ քարայատակներով շինուած : Քաղաքին առջին ընդարձակ դաշտ մը կայ հարաւային կողմը որուն մէջ գրեթէ քիչ հեռաւորութեամբ կան պատուական այգիներ և քաղքահամ պտղատու ծառեր , և տեղոյն զինին խիստ անուանի համարուած է . կանայք ընդհանրապէս սպիտակ ստաններով ծածկուած փողոց կերնեն ,

աշխատութիւննին է գուլպայ և կտաւ դորժել .  
Հայ կանանց մեծ մասը չըջազգեստ կը հագնին :

**27.**

**ՎԱՆՔ Ս. ԱՍՏՈՒԱՇԱՄԱՆԱՅ**

Քաղաքին հարաւային կողմը կէս ժամ հեռաւորութեամբ դաշտավայրի մը մէջ տեղը կառուցուած է Ս. Աստուածածնի անուամբ Վանք մը, ուռենիներէ չըջապատեալ . Վանքը ըստ ըստականին մեծ և ընդարձակ է . ունի երեսունի չափ սենեակ, և չորս սիւնէ ըզգկացեալ Տաճար մը կայ մէջ տեղը ու Տաճարին ձախ կողմը կայ փոքրիկ սրահարան մը՝ որ աւանդութեամբ կըսուի թէ՛ թաղէոս առաքելոյն մատուռն է, քանզի ժամանակաւ Ամասիոյ վիճակին Բաբելոնցի Առաջնորդ մը Տաճարին դռան վրայ այնպէս արձանադրած է, սակայն հին թիւը չի կարողացայ դանել, հիմա իբր Վանահայր Արժանապատիւ Տ. Յովհաննէս վարդապետ կը հրակէ Վանքըն, և յիշեալ Տաճարը հողերոյս Սրբազան Յակոբ Պատրիարք վերստին նորոգեր է ՚ի հիմանց . դպրոց չունի, բայց չափազանց արտեր կան, որոնց եթէ հող տարուի մեծ հասոյթ կը բերէ Վանքին, եկեղեցին ունի բաւական ծանրազին զգեստներ ալ :

**28.**

**Հ Ա Ճ Ի Գ Ի Ի Ղ**

Մարդուան քաղաքին արևմտեան կողմը չորս ժամ հեռաւորութեամբ գիւղ մ'է, Հայ և Տաճիկ ազգերէ բաղկացեալ, գեղեցիկ դաշտավայրի մը մէջ, Հայը չորս հարիւր տունի չափ կեղքն, ունին փայտաշէն եկեղեցի մը և երկու քահանայ, երկու սեռ դպրոց մ'ալ, մանչ տղայոց վարժարանին մէջ երկու հարիւր աշակերտի չափ կը դաստիարակուին հասարակ համարատուի մը ձեռամբ, միայն մէկ քանիներ կան որ Բերականութեան ուսման կը սաքապին օրինաւոր Հայկաբանով մը : Ժողովուրդը թէպէտև ուսմիկ, բայց ուսումնասէր են, քան և հինգ տունի չափ ալ բողոքական կան . ունին ժողովարան և դպրոց մը . դիւղին բերքն է խաւով և Քարիցո խոհաշ, և ին օրոնք տուներու մէջ կը շինուին մեծ մասը Հայոց ձեռքով, որ շատ տեղերէ վաճառականներ դարով կառնեն :

22.

Ք Է Օ Բ Ր Ի Ի

Հաճի գիւղէն ութ ժամ հեռու հիւսիսային կողմը գիւղաքաղաք մի է՝ որուն մէջ հարիւր տուներ չափ Հայ կայ եղեր, որոնց մեծ մասը բողոքական, թէպէտև ես չեմ գացած, բայց Գեօրգիցիք կը վկայեն թէ գժտութեան մը պատճառաւ եղած են :

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Թ Ի Ե Ն

ՆՇԱՆՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Ս Ե Ր Ա Ս Տ Ի Ո Յ

Սերաստիոյ և շրջակայ գիւղորէից Հայոց մէջ նշանաւորութեան և հարսանեաց սովորութիւն մի կայ, նուազ բացառութեամբ, այն է՝ որ դեռ երախայն չ'ճնած և կամ օրորոցի մէջ եղած ատեն նշանաւորութիւն կրնեն, բայց ի չափահասներէն սոյն եպերեթի սովորութիւնը, տեսակ տեսակ անկարգութեանց պատճառ ըլլալուն համար, թէև

Գեր. Սեւակնորդը խտիւ արգիլած է. սակայն ցաւ և հիւրտ կը յայտնեմք որ դեռ վերջացած չէ :

Նշանեթի մանկան հայրը կանխաւ նշանի ոսկին կը պատրաստէ քսան և երբեմն աւելի, երեք քաշ շաքար իւր ամէն տեսակներովը, տաներեց քահանային հետ կը զրկէ աղջկան տունը, և քահանայն նշանը աղջկան վիզը կախելով կ'օրհնէ զանի և կը մեկնի. մասնաւորապէս ազբատաց մէջ այսպէս կը ըլլան, իսկ եթէ հարուստ ըլլար նշանեթի օրիորդին հայրը, ազգականներն ու բարեկամներն տասն քսան հողւոյ չափ քահանային հետ մէկտեղ կերթան աղջկան տունը նշանը կը կախեն, և իւրաքանչիւր ոք մէկմէկ ոսկի տալէն վերջը, կսկսին ուտել և խմել ու արբենալ. հոն տեսնելու բան ելած աղմուկն ու շիտթը, նոր ատեններս աւելի գէշ սովորութիւն մի հանած են, քահանային տեղը ասար կամ քսան կանայք, կը տանին նշանը և կը կախեն աղջկան ճիտը առանց օրհնութեան, և ասոնք ալ արանց սովորութեան նման մէկ մէկ ոսկի տալով աղջկան, և բազմածախ ինճոքով մը զուարճանալէն զինի կը մեկնին, և նշանեալ օրիորդը մէկ ամիսէն մինչև տասը քսան տարի նշանուած կը կենայ. ուստի այս վատ սովորութեանց պատճառաւ ատելութիւնք յաճախ կը պատահին, և Սզգային ժողովներն և խորհուրդներն պարտապ

տեղը ժամանակաճառ կը լինին, ինչ որ է. աղջկան նշանէն ետքը, կուգայ փեսատեսն երթալու սովորութիւնը, բայց նախ աղջկան կողմանէ մուննեալի մը կը խրկուի իրենց դալուստը իմաց տալու, և այնուհետեւ քսանի շափ կանայք ոսկիով և մարգարտով զարդարուած կերթան փեսային տունը, և փեսացուն կը կանգնեցունեն մէջերնին. նախ կ'սկի փեսայացուն օղի բաժնել, և յետոյ կանայք փեսայացուի քէօն վրայ եօղնա մը կապելով, կսկի իրեն տես եկող կանանց ձեռքերը համբուրել, և յետոյ կանայք կսկին նոյն փեսացուն գլուխը մէկ մէկ ոսկի կախել, և անկէ վերջ հացկերոյթի պատրաստութիւններ անսնելով. կուտեն կ'խմեն և երեկային կը վերադառնան իրենց տունը. այս սովորութիւնը կը շարունակուի ամէն տարի տաղաարներուն, քանի տարի նշանուած որ մնայ, և երկու կողմանց չուայլերէն փոխադարձ այցելութեամբ միշտ իրարու նուէրներ և ընծաներ տրուելով մինչև պսակի օրը, չմունամբ յիշել որ հացկերոյթի սովորութիւնը առաջին անգամ փեսայացուն կողմանէ հարմուտեա գացած ժամանակնին աղջկան կողմանէ կառաջարկուի առ ի ծանօթութիւն միմեանց :

Գալով Բայ ըսուած արարողութեան. ասիկայ կը պատահի Ս. Սարգսի պահոց չորեքշաբթի օրն, արդէն երկուշաբթի օրէն սկսեալ հարսնացուն ե

րեք օր ծով կը պահէ, և չորեքշաբթի օրն իւր խաղի աղջկանց հետ ընկերանալով, և իւր մօրն հետ կուգայ Եկեղեցին Ս. Հաղորդութիւն առնելու, և անկէ տուն կը վերադառնան. այս տեղ երկար խօսելու պէտք էր անոնց զարդարանքը պատմել, ասկայն հարկ չգատեցինք, և հարսնցուին ծոմապահութեան համար փեսայացուն տունէն նախապատրաստուած համադամ կերակուրնէն ընծայ կը խրկուին ի փոխարինութիւն ծոմապահութեան, և այս ընծաներէն հրապուրեալ, ծով պահոց հարսնացուներէն ոմանք չորաշաբ մեռած են չրդիւանալով :

Ասկէ վերջը կուգայ բաղանեաց արարողութիւնը, որ փեսայացուն կողմէն օր մը կորոչուի, և այն որոշեալ օրէն երկու օր առաջ հարսնացուն կողմը հրաւիրակ մը երթալով, ի բաղանիս կը հրաւիրէ զանոնք, հարսնացուն և փեսացուն կողմէն երկուքը միատեղ խուռն բաղմութեամբ, նոյն որոշեալ օրը բաղանիս կը գիմեն, և այն օրը առտուրնէ մինչ երեկոյ տեսակ տեսակ համադամ կերակուրներով կուտեն ու կ'խմեն, և անկէ տուն կը վերադառնան :

Իսկ Գանք պաշտօնի սակարկութեան խնդրոյն, ի սկզբան շատ զեղխութիւնը և անկարգութիւնը տեղի կուեննան եղեր, բայց շնորհիւ Գեր. Առաջնորդ

Ս. Հօր, բաւական արդիւրած է նոյն տնաւէր սո-  
վորութիւնը, թէև կը կատարուին, բայց պարզ  
կերպիւ այսինքն նախ հարսնիքը սկսած փեսայա-  
ցուն հայրը խնամի առնելու կերթայ աղջկան  
տունը, և այն տեղ կը կատարուի երբեմն սակար-  
կութեան հանդէսը, նախ հարսնացուն հայրը կա-  
ռաջարկէ իւր ուղած գինը. և փեսայացուն կող-  
մանէ բաւական փիճելէ վերջը, միջնորդով մը սա-  
կարկութեան խնդիրը կը լուծուի, այսինքն 300էն  
մինչև 1300 ղշ պաշտօն անունով գումար մը վճա-  
րել կը խօստանան. փեսին հայրը հարսնացուն հօր  
հարսանեաց օրը կ'որոշէ և կը բաժնուին միմեանց =  
Անկէ վերջ կուգայ հարսանեաց հանդէսի արարո-  
ղութեան որոշեալ օրն, երկու օր առաջ փեսայա-  
ցուն և հարսնացուն կողմէն հրաւեր կը կարդան  
իրենց աղգականներուն ի հարսանիս՝ որք պար-  
տաւոր են դնացող հրաւիրակն յարգել ոգելից ըն-  
պելեօք և կերակրովք, և հարսանեաց տերերը շա-  
բաթ մը առաջ կը հաւաքեն իրենց աղգականները,  
որք կուտեն և կ'իմեն մինչ հարսանեաց երկուշաբ-  
թի օրը, նոյն առաւօտուն հրաւիրեալք փեսայա-  
ցուն կ'զգեստաւորեն խորհուրդ խորինով, և ուրիշ  
երգերով ու միահամուռ բազմութեամբ խաճի ա-  
նունով հաց մը կառնուն և կը դիմեն հարսնացուն  
տունը քահանայիւք և փողոցի դրնէն ներս մտած

ժամանակ մէկ մէկ օշարակ խմելով կերթան վերի  
յարկը կ'բազմին, իսկ քահանայն փեսան կառնու  
և հարսին մօտ կ'տանի, բայց պատաւական օրինօք  
արդիւրաւ է հարսին ոտք ելնելը, և այն տեղ ձե-  
ռնառութեան արարողութիւնը կատարուելէն զկը-  
նի, անմիջապէս հարսին հետ մեկտեղ երկու կա-  
նայք կառքը նստելով բազմութեան հետ Եկեղեց-  
ւոյ դուռը կը դիմեն և հարսնացուն տունէն հաց  
մի առած ուպէս զի խաճիլ իրեն հետ տարած կըլ-  
լայ, ահա հոս կը պարզուի ապօրինաւորութեան ա-  
մենամեծ հանդէսը, կանայք կառքէն վայ իջնելով  
և հարսնացուն երեսը քօղարկեալ, ութսուն և  
հարիւր տարուան կորաքամակ և զառամեալ ձեր  
կնկան նման հազիւ հազ երկու հոգի թեւերը մտած  
գեանի երես քաշկռտելով կը տանին Եկեղեցի, որ-  
պէս թէ հարսնացուն ամօթ կը համարի սուրբ ա-  
մուսնութիւնը, կամայ սկամայ Եկեղեցի մտնելէն  
վերջ, պսակի ժամանակ դարձեալ ծռած կը կենայ,  
քահանայն չեխելով և յանդիմանելով զհարսն հա-  
զիւ թէ կը յաջողի շխտակ կանգնեցնել, և պսակի  
խորհուրդը կատարել. եթէ հարսը շխտակ կանգնի  
պատաւական օրինաց վճռով դատապարտուած կը  
համարուի, ուստի հարսնացուն ահեն կատարուի  
այն օրէնքին համեմատ վարուիլ սկամայ կամօք  
ծուլ. հարսը բերող երկու կանայք կը թողուն յետ

աւարտման պատիւի, փեսին կողմէն այս անգամ  
 երկու կանայք հարսին թեւերէն բռնելով, առա-  
 ջինին նման քաշկռտելով կը նստեցնեն կառքը ու  
 հարսանեկան տունը կուղեւորուին. դրանը առջև  
 հասած ժամանակ փեսին մայրը և ազգականները  
 մէկ մէկ նուէրներ կընծայեն հարսին, և բարձրա-  
 ձայն ֆառերով միջոցաւ օրհնութիւններ կարդալ  
 կուտան. բայց չի մոռնանք ըսելու որ փեսան նախ  
 պարտաւոր է իւր տունը պտտիլ, որ «—ը—ը սեպ-  
 ուած է, տանը մէջ մեծ առատութեան ստիթ է  
 կըսեն, և յետոյ տանը դուռը գալով կտխին շա-  
 րականներով ներս երթալ ու սեղան բազմիլ. քա-  
 հանայն թագաւորացի արարողութիւնը կատարելէն  
 զինի հանդէսին վախճան կուտայ, և կը պատուիրէ  
 որ մէկը հոն չի կենայ. փեսան մէկ քանի օր այսպէս  
 կը պտտցունեն, և երեք օրուան մէջ որու որ պա-  
 տահի, ամենուն ալ խոնարհութիւն կընէ ու երեք  
 օրէն ետքը վերջ կուտան հարսանեաց :



## ՎԱԽՃԱՆ ԳՈՐԾՈՅՍ

Այս չորրորդ աշխատասիրութեամբ ալ Սե-  
 բաստիոյ, Եւզոկիոյ, Ամասիոյ վիճակաց վրայօք  
 սիրելի Ազգիս փոքր ի շատէ գաղափար մը տալէս

վերջ, կուղեւորաւ կարողութեան իմու՛մ մինչ ցարդ-  
 ունեցած փորձառութեամբ մեր դաւառացի Հայ  
 եղբարոց բարոյական նիւթական և քաղաքական  
 ցաւալի վիճակին վրայ դիտողութիւն մը ընել ընդ-  
 նմին, և առաջարկ մը ի դարման :

Ա. Գաւառացի Հայոց մանաւանդ գիւղացւոց  
 բարոյական այսինքն մտքի լուսաւորութեան և սըր-  
 տի կրթութեան վիճակը խեղճ և խիտ խաւարա-  
 մած կացութեան մէջ է. այնպէս որ ընդհանրա-  
 պէս գուրկ են դաստիարակութեան լոյսէն, զուրկ  
 են ֆրիստանեկական կրօնի դիտութեան լոյսէն :

Բ. Գաւառացի Հայոց քաղաքական վիճակը  
 որ և է կերպիւ նպաստաւոր չէ. մարդ որչափ դաւ-  
 առաց խորերը յառաջանայ, այնչափ առաւել զգալի  
 կերպով կը տեսնէ թէ՛ ժողովուրդը ոչ օրէնք դիտէ  
 ոչ իւր իրաւունքը և ոչ զայն պաշտպանելը, որոյ  
 հետեանքն եղած է Հայ անհատ մը, Տաճիկ ան-  
 հատէ մը մահու չափ սոսկալ, սարկանալ և լռիկ  
 մնչիկ հարստահարուիլ, և ազդեցութեան տէր  
 անձանց ձեռքը գերի ու գործիք ըլլալ :

Գ. Նիւթական վիճակն ալ անկեալ է, և դէպ  
 ուր աղքատութեան և ի թշուառութեան յառաջա-  
 նալու վրայ են հեռոջնեակ :

Գաւառաց այս կացութիւնը մեծապէս բաղ-  
 դաւոր ըրած է Բողոքական քարոզիչները, որոնք



6961

0003111

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003111

